

2893

С. 1930/1704

XVI

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 16 -ՐԴ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ն. ԵԼԻԶԱՐՈՎ

ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՏԱՐԺՈՒՄԸ
ՅԵԿ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՎԵՐԵԼՔԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՌՈՒՐԴՆ, ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶ.
ՄՈՍԿՎԱ 1930

338. 14
Ե-29

C.1930/1704
15 JAN 2019

26 APR 2013
С. 1729

338.14
15+29

Ն. ԵԼԻԶԱՐՈՎ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԿՈՒԽՈԶԱՅԻՆ ՀԱՐՁՈՒՄԸ

ՅԵԿ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

ՎԵՐԵԼՔԸ

(Ինչ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱ-
ԳՈՒՄԱՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ)



ԽՍԴԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1930

30.496

Թարգմանեց Ս. Հ.



59653 · 66

Главлит А-72775

Заказ 2122

Тираж 14 000

Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

1. ԿՈԼԵՈԶԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԵՐԿԱ ԵՏԱՊԸ

Համ. Կկ (բ) XV և XVI համագումարների միջն
ընկած շրջանում մեր յերկրի գյուղատնտեսության
զարգացման մեջ կատարվեց արմատական, վճռա-
կան բեկում: «Խորհրդային Միությունը վոտք կոխեց
գյուղի սոցիալիստական ծավալված վերակառուցման
և խոշոր սոցիալիստական յերկրագործության շինա-
րարության շրջանը»: * Գյուղական չքավորությունը
և միջակ գյուղացիները ուժեղ հեղեղով մտան կոլ-
խողները, հոժարակամ միացնելով իրենց մանր ու
մանրագույն տնտեսությունները խոշոր արտադրողա-
կան կոլեկտիվների: Կոլլեկտիվային շարժումը դարձավ
աշխատավոր գյուղացիության բազմամիլիոն զանգված-
ների խսկական շարժում: Նա սկսեց ընդգրկել Խոր-
հրդային Միության ամբողջ ուայոնները ու արջանները:

1928 թ. մեր ամբողջ յերկրում կային 14.800 կոլ-խոզ, վոր միացնում եյին 445 հազար գյուղացիական տնտեսություն։ 1929 թվի կեսին կոլխոզների թիվը հասավ 61.000, վոր միացնում եյին 1.040 հազար տնտեսություն։ 1930 թվի սկզբին կոլխոզների մեջ միացած եյին մինչև 3 միլիոն չքավոր-միջակային տնտեսություն։ Իսկ 1930 թ. մայիսի 1-ին 82.000 կոլ-

* Համ. ԿԿ (բ) ԿԿ-ի 1929 թ. նոյեմբերյան պլենումի բառաձևեցուցիչը:

խոզներում միացած ելին մինչև 6^{1/2} միլիոն չքավոր-
միջակային տնտեսություն, այսինքն — մեր յերկրի
բարոր գյուղացիական տնտեսությունների մոտ մեկ
քսորդը։ Կոլխոզային շարժման այդորինակ թափն
ու տեմպերը նշանակում են խորհրդային գյուղի վճռա-
կան անցումը իրենց կտրատված, քիչ արտադրող
տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման
ուղին, նրանք վկայում են Խորհրդային Միության
գյուղատնտեսության զարգացման մեջ կատարված
արմատական բեկումը։

«Այդ բեկումը — ասված է Համ. ԿԿ (բ) XVII համա-
գումարի՝ «Կոլխոզային շարժման և գյուղատնտեսու-
թյան վերելքի մասին» բանաձեռ մեջ — բնորոշվում է
նրանով, վոր առ 1 մայիսի 1930 թվի արտադրող
շիջանների հիմնական հացահատիկային ռայոններում
կոլեկտիվացումը ընդունեց գյուղացիական տնտեսու-
թյունների 40—50%, փոխանակ տնտեսությունների
2—3%-ին՝ 1928 թ. գարնանը, իսկ կոլխոզների ցան-
քադաշտը ԽՍՀՄ մեջ 1928 թ. գարնան 1,5 միլիոն
հեկտարից բարձրացավ, ինչպես ու նախատեսնված
եր Համ. ԿԿ(բ) Կենտը. Կոմիտեյի հունվարի 5-ի վորոշու-
մով, մինչեւ 30—35 մլն. հեկտարի 1930 թվի գար-
նանը, չհաշված աշնանացանը։ Դրա հետևանքով կոլ-
խոզները սովորողների հետ միասին արդեն ներկա
1930 թվին կտան հացահատիկների ապրանքային ար-
տադրության հիմնական մասը, մինչդեռ ԽV հա-
մագումարի և XVII կոնֆերենցիայի շրջանում հացա-
հատիկների ապրանքային արտադրության ճնշող մասը
տալիս եր անհատական գյուղացիական, նույն թվում
և կուլակային տնտեսությունը։ Այդպիսով կուսակ-

ցությունը լուծում ե գործնականում գյուղատնտե-
սության հիմնական ու դժվարագույն պրոբլեմը —
հացահատիկի պրոբլեմը։

6^{1/2} միլիոն գյուղացիական տնտեսությունների միա-
ցումը կոլխոզների մեջ նշանակում է, վոր չքավոր-
ներին հետևելով կոլխոզ մտավ և միջակը, վոր մեր
յերկրի հողագործության մեջ կենտրոնական վիգուրն է,
Գյուղացիության միջակային զանգվածների զգալի մասը
մի կողմ ծռեց զարգացման կապիտալիստական ուղուց,
վորի վրա նրան սպասում եր և սպասում ե քայքա-
յում, աղքատացում և խոշոր կուլակային-կապիտա-
լիստական տնտեսության կողմից կուլ գնալը, ու վճռա-
կանորեն կանգնեց սոցիալիստական ուղու վրա։

Բատրակության և չքավորության յետեից միջակը
ևս գնաց կոլխոզները, գնաց զորեղ հոսանքով, բազմա-
միլիոն զանգվածով։ Միջակը շարժվեց դեպի կոլխոզ,
բայց, իհարկե, վոչ այն պատճառով, վոր «նա արդեն
դարձավ զիտակից սոցիալիստ, այլ այն պատճառով վոր
նա տեսավլ յելք—իսկ հաճախ այդ յելքի նախադուռը
միայն աղքատությունից, տաժանակիր աշխատանքից,
գյուղական դարավոր վայրագությունից» (Մոլոտով)։

«Միջակային զանգվածների խոշոր մասը կարևո-
րագույն հացահատիկային շրջաններում, չքավորների
յետեից, հասկացավ խոշոր հասարակական տնտեսու-
թյան առավելությունները, կամովին միանալով կոլ-
խոզների մեջ և կատարելով ցանքսը կոլեկտիվ ար-
տերում, ու անցավ սոցիալիստական ուղին։ Դրանով
վոչ միայն տեսականորեն ապացուցված ե, այլ և
սառուցված ե միլիոնավոր մարդկանց փորձի վրա, վոր
պրոլետարիատի դիկտատորայի պայմաններում հնա-

բավոր ե անմիջական անցումը՝ յետամնաց, սակավ արտադրող մանր ու մանրագույն անհատական գյուղացիական տնտեսությունից՝ խոշոր, կոլեկտիվ, բարձր արտադրողությամբ տնտեսության»:^{*}

Միջակ գյուղացին նախ և առաջ աշխատավոր ե, վոր դիվային ծանր, չարքաշ աշխատանքով իր գոյության համար միջոց ե հայթայթում։ «Միջակ գյուղացիությունը — ասում եր վ. ի. Լենինը — չի պատկանում շահագործողներին, վորովհետև շահ չի ստանում ոտարի աշխատանքից։ Մանր արտադրողների այդպիսի դասակարգը չի կարող տուժել սոցիալիզմից, այլ, ընդհակառակը, շատ ուժեղ չափով շահում ե կապիտալի լծի տապալումից»:^{**}

Բայց միջակը միենույն ժամանակ և մանր սեփականատեր ե, վոր ունի իր արտադրության միջոցներն ու գործիքները, իր մանր-ապրանքային տնտեսությունը։ Միջակը, իբրև աշխատավոր, կոլխոզների կողմն ե, գյուղատնտեսական սոցիալիստական արտադրության կողմն ե։ Սակայն միջակի «հոգու» մանր-սեփականատիրական մասը յերազում ե իր անհատական տնտեսության վերելքի ու գարգացման, նրա ապրանքայնության ու շահավետության բարձրացման մասին։ Հստ վորում միջակը, իբրև մանր սեփականատեր և ապրանք արտադրող, դեմ չե և կուլակ դառնալու, դեմ չե իր մանր ապրանքային տնտեսությունը վերածելու խոշոր, շահագործող կուլակային տնտեսության։ Սակայն, կուլակության հասնել վիճակված ե միջակային տնտեսությունների շատ աննշան մասին։

* Համ. ԿԿ (բ) XVI համագումարի նույն բանաձևից։

** Լենին, XVI հատոր, եջ 159։

Գյուղատնտեսության զարգացման ուղիներից վերը — կապիտալիստականը թե՛ս սոցիալիստականը — ամենից ավելի ընդունելի և ձեռնտու յե չքավոր-միջակային գյուղացիության համար և ինչ ե սպասում նրան այդ ուղիներից յուրաքանչյուրի վրա։

Գյուղատնտեսության զարգացման կապիտալիստական ուղին նշանակում ե կազմակերպումն՝ գյուղական կուլակին կամ քաղաքի կապիտալիստ-ձեռնարկողին պատկանող խոշոր տնտեսություններ, վորոնք ճակատագրական անխուսափելությամբ քայլայելու, քանդելու և կլանելու յեն չքավորի մանրագույն ու միջակի մանր տնտեսությունը։ Դա այն ուղին ե, վորով ընթացել ե և ընթանում ե կապիտալիստական յերկրների գյուղատնտեսության զարգացումը։

ԽՍՀՄ Հողժողկոմ ընկ. Յակովլես կուսակցության XVI համագումարում արած իր «Կոլխոզային շարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» գեկուցման մեջ նկատեց ժամանակակից խոշորագույն կապիտալիստական յերկրի — Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների գյուղատնտեսության զարգացման ուղիների շատ գունեղ պատկերը։

Միացյալ Նահանգներում ներկայումս կան մեկ միլիոն տրակտոր, 45 հազար կոմբայն և 800 հազար ապրանքատար ավտոմոբիլ, վոր ծառայում են յերկրի գյուղատնտեսությանը։ Սակայն Միացյալ Նահանգների ֆերմներային տնտեսությունների մասնաւորս հինգերորդը այնքան մանր ե, վոր տրակտորը նրանց համար մատչելի ու գործադրելի չե։ Մանր ֆերմերային տնտեսության մեջ տրակտորը չի կարելի ոգտագործել նրա ամբողջ արտադրողականությամբ։

Մանր ֆերմերի համար տրակտորը անմատչելի յե և վոչ ձեռնտու։ Տրակտորը մատչելի յե, ձեռնտու և գործադրելի յե միայն խոշոր ֆերմերային տնտեսությունների մեջ։ Իսկ այդպիսի տնտեսությունները Միացյալ Նահանգներում կազմում են յերկրի բոլոր ֆերմերային տնտեսությունների միայն $3^{1/2}\%$ -ը։ Տրակտորը և կոմբայնը հաջողությամբ գործադրվում են միայն խոշոր կապիտալիստական տնտեսությունների մեջ։ այդտեղ նրանք ոգտագործվում են լրիվ արտադրողականությամբ։

Խոշոր ֆերմերային մեքենայացված տնտեսությունը տալիս ե գյուղատնտեսական արտադրանք ահազին չափերով և ավելի եժան, քան մանր ֆերմերի տնտեսությունը։ Մանր ֆերմերը չի կարող դիմանալ շուկայի պայքարին՝ վոր նա մղում ե կապիտալիստական ֆերմերային տնտեսության դեմ։ Մանր ֆերմերին քայլայում և խեղդում են շուկայի գները, վոր թելադրում ե խոշոր կապիտալիստական տնտեսությունը։ Բացի դրանից ամերիկական մանր ֆերմերին ճնշում են նաև հարկերը, վոր կլանում են նրայելամտի $1/3$ -ից մինչև $2/3$ -ը։ Իր տնտեսության մեջ ծայրը ծայրին չհասցնող մանր ֆերմերը պարտքերի մեջ ե ընկնում։ «Ֆերմերների ընդհանուր պարտքը 1929 թվին հասավ զրեթե 10 միլիարդ դոլարի։ Դա նշանակում ե, վոր ֆերմերները վճարում են ամեն տարի մոտ 800 միլիոն դոլար միայն պարտքերի տոկոսները։»* Աճում ե կապալով հող վերցնող ֆերմերների թիվը։ 1929 թվին ֆերմերային բոլոր տնտեսությունների $2/5$ -ը աշխատում եր կապիտալիրավունքով։

* Ընկ. Յակովլեսի զեկուցումից։

«Վերջին չորս տարվա ընթացքում — ասում եր ընկ. Յակովլես համագումարում — յուրաքանչյուր 1000 ֆերմերային տնտեսությունից 108 ծախված եյին կամովին, այսինքն — իրենց տնտեսությունը վարելու անհնարավորության հետևանքով, և 123 ծախված եյին սնանկության շնորհիվ, գրավագիրները յետ գնելու հնարավորություն չունենալով, ըստ կատարողական թերթերի։»

«Դրանք են ամերիկական գյուղատնտեսության «նվաճումները»՝ տեխնիկական հեղաշրջման հետևանքով — ցանքսի տարածության ստարիլ վիճակը, գյուղատնտեսական արտադրանքի աննշան աճումը, սպաման ստարիլ վիճակը, և դրա հետ միասին՝ ֆերմերային ազգաբնակչության գնողական ընդունակության նվազումը, արտադրությունը լայնացնելու ստիմուլի բացակայությունը, հարկերի աճումն և ֆերմերների պարտքի աճումը, կապալառուների թվի աճումը ֆերմերների մեջ, ֆերմերների մասսայական սնանկությունը, ֆերմաների վաճառումը ըստ կատարողական թերթերի և այլն։ Շարքային ֆերմերը, հնարավորություն չունենալով 15 հեկտար հողամասից ստանալ այնքան յեկամուտ, վոր բավական լիներ իր տնտեսության հիմնական վերասարքման համար, այդ բոլորին պատասխանում ե նրանով, վոր փախչում ե քաղաք, ձգելով իր ֆերման։ Միայն վերջին յերկու տասնամյակների ընթացքում ֆերմերային ազգաբնակչությունը պակասել 4 միլիոն մարդով։»

«Տրակտորը և կոմբայնը, վոր կենտրոնանում են գյուղացիության կապիտալիստական վերին շերտի ձեռ-

քում և նույնիսկ նրա կողմից ոգտագործվում են ան-
նշան արտադրողականությամբ, անմատչելի յեն
դառնում ֆերմերների ճնշող մեծամաս-
նության համար։ Տրակտորը կանգ ե առաջ հո-
ղային սեփականատիրության ցանկապատի առաջ—
բոլոր ֆերմերների $\frac{4}{5}$ -ի սահմանին, Խոշոր տնտե-
սությունը իր ուղին ե հարթում ֆերմեր-
ների ճնշող մասսայի քայլայման ու խեղդ-
ման միջոցներ։

Սա յե մանր-գյուղացիական տնտեսության վիճակը կապիտալիստական յերկրներում։ Իսկ ի՞նչ ե բերում գյուղատնտեսության զարգացման կապիտալիստական ուղին մեր յերկրի չքավոր-միջակային գյուղացիությանը։

Խորհրդային Միության մեջ խոշոր կուլակային-
կապիտալիստական տնտեսությունը կարող եր զար-
դանալ միայն այն հողերի վրա, վոր ներկայիս ոգ-
տագործում են չքավոր ու միջակ գյուղացիությունը, կուլակի տնտեսության լայնացման քայլը նշանակում ե
նախ և առաջ չքավորի, ապա և միջակի հողագորկու-
թյունը։ Չքավորի տնտեսությունը չի կարող դիմա-
նալ կուլակի տնտեսության ճնշումին, կուլակը ունե-
նալով քաշող ուժ, գյուղատնտեսական ինվենտար,
հաց ու փող, աստիժանաբար—չքավորի հողը կապա-
լով վերցնելով, նրան լծկան ուժ, գ. ա. գործիքներ, հա-
ցային, սերմացանի ու փողային վարկ արամադրելով—
չքավորին իրեն կենթարկի, կվերցնի նրա հողը, կքայ-
քայի նրա տնտեսությունը, չքավոր գյուղացուն կդար-
ձնե բատրակ-պրոլետար։

Կուլակային-կապիտալիստական տնտեսությունը,
վոր հիմնված ե և աճում ե ի հաշիվ ուրիշի աշխա-

տանքը շահագործելուն, չի կարող հանգիստ թողնել
նաև միջակ գյուղացու տնտեսությունը։ Շահի ծարա-
վով բռնված, իր տնտեսական ուժն ու զորությունը
ելի ուժեղացնելու փափագով, կուլակային տնտեսու-
թյունը ահազին յեռանդ ե զարգացնում՝ հետագա-
յում ել ավելի լայնանալու ու աճելու համար։

Հենվելով իր արտադրության միջոցների ու գոր-
ծիքների հղորության, իր գրանի ուժի և այդ հողի
վրա աճող իր ազդեցության վրա գյուղում, կուլակա-
յին տնտեսությունը անխուսափելիորեն իր ազդեցու-
թյանը և ուժին կենթարկե միջակի տնտեսությունը,
նրան տանելով դեպի թուլացում, քայլայում և աղ-
քատացում։

Միջակային տնտեսության թուլացումը և քայլա-
յումը, միջակ գյուղացու չքավոր դառնալը կախում
ունի այս կամ այն կուլակի կամ ձեռնարկողի բարի
կամ չար մտադրությունից, զգացմունքից կամ ցան-
կությունից։ Կուլակային տնտեսությունը, լայնանա-
նալով ու խոշորանալով, անխուսափելիորեն պետք ե
վնասի, թուլացնի, քայլայի, վտարի և ապա կլանի
չքավորի ու միջակի տնտեսությունը։

Ի՞նչու՞

Վորովինետև միջակի մանր տնտեսությունը և չքա-
վորի մանրագույն տնտեսությունը պակաս ուժեղ ե
ու պակաս արտադրող, քան կուլակի խոշոր տնտեսու-
թյունը։ Չքավոր-միջակային տնտեսությունը; տալով
ավելի թանգ գյուղատնտեսական արտադրանք և պակաս
չափերով, քան կուլակի տնտեսությունը, չի կարող դի-
մանալ զուկայի կովում, վոր մղում ե կուլակի դեմ։
Նրան կքայլայեն գյուղատնտեսական մթերքների շու-

կայի գները, վոր թելադրում ե կուլակային-կապիտալիստական տնտեսությունը:

«Կապիտալիստական խոշոր արտադրությունը — գրում եր իր ժամանակին ֆրիդրիխ Ենդելսը մանր գյուղացիների վիճակի մասին, — նույնպիսի հեշտությամբ կանցնի նրանց անզոր, հնացած մանր տնտեսության վրայով, ինչպես յերկաթուղու գնացքը տաճկայի վրայով»:

Քայքայում, աղքատություն, բատրակային վիճակ և անողոք շահագործում կուլակի ձեռքին — ահա թե գյուղատնտեսության զարգացման կապիտալիստական ուղին ինչ ե բաժին հանում չքավոր գյուղացուն։ Տնտեսության թուլացում, չքավորի վերածում, ապա և բատրակի — սա յե միջակ գյուղացու վիճակը այդ ուղու վրա։ Նրանցից շատ քչերին ե հաջողվում բարձրանալ կուլակի վիճակին։ Դա յե չքավոր-միջակ գյուղացիության անխուսափելի վիճակը գյուղատնտեսության կապիտալիստական ուղու վրա։

Խոշոր գյուղատնտեսական արտադրության զարգացման այդ ուղուն կոմունիստական կուսակցությունը հակադրում ե մի այլ ուղի — խոշոր հասարակական գյուղատնտեսություն ստեղծելու պրոետարական ուղին։ Այդ ուղին անցնում ե մանր ու մանրագույն չքավոր-միջակային տնտեսությունների արտադրողական կոոպերացման ու կոլեկտիվացման, նրանց խոշոր արտադրողական կոլեկտիվների միացնելու միջոցով։

Գյուղացիական մանր ու մանրագույն տնտեսությունների միացումը կոլխոզների մեջ հնարավորություն ե ստեղծվում լայնորեն ոգտագործելու հողագործության մեջ կատարելագործված մեքենաներ ու

գործիքներ, մեքենայական քաշող ուժը, ագրիկուլտուր միջոցներ իրոք մասսայորեն գործադրելու, հանքային պարարտանյութերով ոգտվելու։ Իսկ այդ բոլորը, ի մի առած, բարձրացնում ե կոլխոզների արտադրողականությունը այնպիսի բարձրության, վորանմատչելի յե անհատական տնտեսության համար, թեթևացնում ե մարդկային աշխատանքը, դարձնում ե այն ավելի արդյունավետ ու չնորհակալ:

Հստ վորում չի կարելի մոռանալ և այն, վոր՝

«Խոշոր հասարակական տնտեսության զարգացումը խորհրդային յերկրում կատարվում ե վոչ թե մանր ու մանրագույն տնտեսությունների կլանման, քանդման, վոչնչացման ու քայքայման ուղիով, վոչ թե նրանց դեմ պայքարելու միջոցով, այլ նրանց տնտեսական վերելքի, աճման, նրանց տեխնիկայի, կուլտուրայի ու կաղմակերպության բարձր մակարդակին հասցնելու միջոցով։ Խոշոր հասարակական տնտեսությունը չի հակադրվում անհատական չքավորական ու միջակային տնտեսություններին, իբրև նրանց թշնամի ուժ, այլ զոդվում ե նրանց հետ, իբրև ոգնության աղբյուր նրանց համար, իբրև խոշոր տնտեսության առավելության որինակ, իբրև նրանց՝ աստիճանաբար խոշոր տնտեսությունների մեջ միանալու գործին աջակցող կաղմակերպիչ»։ *

Պրոլետարական պետությունը ամեն կերպ աջակցում ե, ոգնում ու նպաստում չքավոր-միջակային

* Համ. ԿԿ(բ)-ի XVI կոնֆերենցիայի բանաձեկից — «Գյուղատնտեսության վերելքի ուղիների և միջակների հարկային թեթևացման մասին»։

տնտեսությունների միանալուն կոլխոզների մեջ, տրամադրելով կոլխոզներին մի շարք առավելություններ ու արտոնություններ, ամրացնելով ու բարձրացնելով նրանց տեխնիկական գինվածությունը, տալով նրանց կազմակերպիչներ քաղաքի լավագույն պրոետարներից:

Կոլխոզներ կառուցելով, քաղաքի ոգնությամբ ու ղեկավարությամբ, խորհրդային գյուղը արմատորեն վերակառուցում ե գյուղատնտեսական արտադրության ձևերն ու միջոցները, վերածում ե նրան մանրից խոշորի, անհատականից հասարակականի, սակավարտադրող ու յետամացից կուտուրական ու բարձրարտադրողականություն ունեցողի, անզեն ու բնության ուժերի դեմ պայքարելու անզոր վիճակ ունեցող տնտեսությունը դարձնում ե այնպիսին, վոր իրեն ե ծառայեցնում գիտությունը ու տեխնիկան, վոր յենթարկում ե իրեն ու ստիպում իրեն ծառայել բնության ուժերին:

«Ի՞նչո՞ւ Խորհրդային իշխանությունը արտոնություններ ու առավելություններ ե տավա կոլխոզներին»:

— Վորովինետև կոլխոզը գյուղացիներին աղքատությունից ազատելու միակ միջոցն ե,

— Վորովինետև կոլխոզներին առավելապես ոգնություն հասցնելը՝ չքավորներին ու միջակներին ոգնելու ամենագործնական ձևն ե»; *

Խոշոր հասարակական տնտեսության կազմակերպումը — չքավոր-միջակային գյուղացիության բազմամիջոն մասսաները քայքայումից, աղքատությունից և կուլակային շահագործումից ազատելու միակ ուղին ե:

* Ստալին — «Պատասխան ընկեր կոլխոզներին».

Այդ հասկացել են մեր յերկրի $6^{1/2}$ միջոն չքավորները և միջակները, վոր 1930 թ. գարնանը միացրել են կոլխոզների մեջ իրենց մանր ու մանրագույն սակավ արտադրող տնտեսությունները։ Այդ վոր առանձնապես կարենոր ե, — այդ հասկացել են միջակ գյուղացիության խոշոր մասսաները, վոր վճռականորեն դարձել են յերե սով դեպի կոլխոզները, ամուր կանգնել են գյուղատնտեսության զարգացման սոցիալիստական ճամբի վրա։

Սակայն, ինչո՞վ ե բացատրվում և ի՞նչն ե նախապատրաստել չքավոր-միջակային գյուղացիության այդ շրջադարձը դեպի կոլխոզները։

«Գյուղացիության շրջադարձը դեպի կոլեկտիվացումը — ասում եր ընկ. Ստալինը կուսակցության XVI համագումարում — միանգամից չսկսվեց։ Այդ շրջադարձը չեր ել կարող սկսվել միանգամից ծիշտ ե, կոլեկտիվացման լոգունդը կուսակցությունը հայտարարել եր դեռևս XV համագումարում։ Սակայն գյուղացիության մասսայական շրջադարձի համար դեպի սոցիալիզմը դեռ բավական չե լոգունդ հայտարարելը։ Շրջադարձի համար պահանջվում ե թեկուզ մի հանգամանք ևս, այն ե՝ — վորպեսզի իրենք գյուղացիական մասսաները համոզվեն հայտարարված լոգունդի ուղիղ լինելու մեջ և ընդունեն այն իբրև իրենց սեփական լոգունդը։

«Հենց այդ պատճառով այդ շրջադարձը նախապատրաստվում եր ծածուկ։ Նա պատրաստվում եր մեր զարգացման ամբողջ ընթացքով, մեր ինդուստրիայի զարգացման ամբողջ ընթացքով, և ամենից առաջ — գյուղատնտեսության մեքենաներ ու տրակ-

ւորներ մատակարարող ինդուստրիայի զարգացմամբ։ Նա պատրաստվում եր կուլակության դեմ վճռական պայքարի քաղաքականությամբ և 1928 ու 1929 թ.թ. մեր հացամթերումների նոր ձևերով, վոր կուլակային տնտեսությունը դնում եյին չքավորմիջակային մասսաների վերահսկության տակ։ Նա պատրաստվում եր գյուղատնտեսական կոռալերացիայի զարգացմամբ, վոր ընտելացնում եր անհատ գյուղացուն գործը կոլեկտիվորեն վարելու։ Նա պատրաստվում եր կոլխոզների ցանցով, ուր գյուղացին ստուգում եր տնտեսության կոլեկտիվ ձևերի առավելությունը անհատական տնտեսության հանդեպ։

«Պատրաստվում եր նա, վերջապես, ամբողջ ԽՍՀՄ-յան մեջ ցրված և նոր տեխնիկայով զինված խորհրդային տնտեսությունների ցանցով, ուր գյուղացին հնարավորություն եր ստանում համոզվելու նոր տեխնիկայի ուժի և առավելությունների մեջ։ Սխալ կլիներ տեսնել մեր սովխոզների մեջ լոկ հացի աղբյուր, իրականություն սովխոզները իրենց նոր տեխնիկայով, շրջապատի գյուղացիներին հասցրած ոգնությամբ, իրենց անորինուկ տնտեսական թափով դարձան այն առաջնորդող ուժը, վոր հեշտացրեց գյուղացիական մասսաների շրջապարձը և քաշեց նրանց կոլեկտիվացման ուղիով։

«Ահա թե ինչ հիման վրա առաջ յեկավ միլոնավոր չքավորների ու միջակների այն մասսայական կոլխոզային շարժումը, վոր սկսվեց 1929 թ. յերկրորդ կեսին և վոր իրենով սկիզբը դրեց մեծ բեկման շրջանին՝ մեր յերկրի կյանքում։

Գյուղատնտեսական զարգացման մեջ կատարվեց արմատական ու վճռական բեկում։

«Համագումարը կարեոր ե համարում նիշել, — ասված ե Համ. ԿԿ (բ) XVII համագումարի՝ «Կոլխոզային շարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» բանաձևում, — վոր կուսակցությանը հաջողվեց ԽՍՀՄ գյուղատնտեսության մեջ հասնել այդ բեկմանը շնորհիվ։

ա) ինդուստրիայի զարգացման արագ տեմպին, վոր գյուղատնտեսության վերակառուցման բանալին ե՝ կոլեկտիվ հիմքերի վրա.

բ) կոռալերացիայի մասսայական ծավալման, մեքենա-տրակտորային կայանների կազմակերպման և սովխոզների զարգացման շնորհիվ.

գ) շնորհիվ հարձակման՝ գյուղի կապիտալիսատական տարրերի դեմ (կուլակություն) — միջակի հետ դաշնաքի հիման վրա, վոր կոլխոզային շինարարության հիմքն ե տվյալ մոմենտին։

դ) շնորհիվ գյուղական չքավորության ու բարակների կազմակերպման գործի ծավալման։


յե) շնորհիվ հակահեղափոխական տրոցկիզմի և աջթեքման շախշախման։

БИБЛИОТЕКА

ИНСТИТУТА
ВОСТОКОСЕДЕНІЯ
Академії Наук
ССР

II. ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ ԻԲՐԵՎ ԴԱՍԱԿՐԴԻ՝
ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

Խորհրդային Միության զարգացման մեջ կատարված բեկման համշխարհային-պատմական նշանակությունը կայանում ե, ի միջի այլոց, նրանում, վոր «ԽՍՀՄ մի շարք շրջանների համատրած կոլեկտիվացման հիման վրա կուսակցությունը գյուղի կապիտալիստական տարրերի սահմանափակման ու վտարման նախկին քաղաքականությունից անցավ նոր քաղաքականության — կուլակության, իբրև գասակարգի, լիկ-



իդացիայի քաղաքականության, իրականացնելով այդ քաղաքականությունը, իբրև հենց իրենց, չքափոր ու միջակային մասսաների իրագործած համատարած կոլեկտիվացման անխօնիք քաղաքրիչ մասը»:

Սրանից, Համ. ԿԿ (թ) XVII համագումարի «Կոլլագա-ային շարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» բանաձեռի այս դրությունից դժվար չե հասկա-նալը, թե ինչու հենց ներկա շրջանում և վոչ թե մի շարք տարիներ սրանից առաջ մեր կուսակցությունը վճռական շրջադարձ կատարեց իր քաղաքականության մեջ՝ մեր յերկրում, վերջին կապիտալիստական դասա-կարգի վերաբերմամբ, այն և — կուլակության, անց-նելով կուլակային տնտեսությունների աճման և ահ-մանափակման և նրանց առանձին խմբակների՝ գյուղատնտեսական արտադրությունից վտարման (իբրև սահմանափակման հետևանք) քաղաքականու-թյունից—կուլակությանը, իբրև դասակարգի, լիկիդացիա անելու քաղաքականության, համատարած կոլեկտիվացման հիման վրա:

Կարելի՞ յեր արդոք դնել ու գործնականորեն լուծել կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդա-ցիայի ինդիրը նոր տնտեսական քաղաքականության սկզբին, իննը տարի սրանից առաջ:

Ամեն մի քաղաքականորեն քիչշատ գրագետ մարդ հիմա կպատասխանի, թե չեր կարելի: Այն շրջանում գոյություն չունեյին վոչ տնտեսական և վոչ քաղա-քական այն պայմանները, վոր թույլ են տալիս դնել և հաջողությամբ լուծել այնպիսի ահազին պատմական կարևորություն ունեցող խնդիր, վորպիսին և կուլա-կության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի խնդիրը:

Նեպի սկզբին կուսակցության կարևորագույն, վըճ-ռական, ամեն ինչ իրեն հպատակեցնող խնդիրն եր՝ վերականգնել արդյունաբերությունը և գյուղատնտե-սությունը, բարձրացնել քաղաքի և գյուղի արտա-դրողական ուժերը, կարգավորել արդյունաբերության և գյուղատնտեսության կապը, նոր հիմքի վրա ամ-րացնել բանվոր դասակարգի և գյուղացիության դա-շինքը: Սոցիալիզմի միակ հաստատ և հուսալի հիմնա-քարը — խոշոր արդյունաբերությունը վերականգնելու համար, անհրաժեշտ եր սկսել գյուղատնտեսության վերականգումից: Իսկ մեր գյուղատնտեսական արտա-դրությունը այն շրջանում կարող եր վերականգնվել գլխավորապես անհատական գյուղացիական տնտեսու-թյունների վերելքի ու աճման հիմքի վրա: Մանր ապրանքային գյուղացիական տնտեսությունների վե-րականգնումն ու աճումը անխուսափելիորեն առաջ են բերում նրանց մի մասի վերածումը խոշոր, շհա-գործող կուլակային տնտեսությունների: Այնպես վոր, թեկուզ հենց այդ պատճառով նեպի սկզբին չեր կա-րելի դնել կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդա-ցիայի խնդիրը: «Նեպը զարգացման առաջին ստադիա-ներում վորոշ չափով հեշտացրեց այդ դասակարգի աճումը: Բայց նա ավելի ևս ոգնեց սոցիալիստական սեկտորի աճմանը» (Ստալին):

Իսկ կարելի՞ յեր արդյոք դնել և լուծել կուլա-կության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի խնդիրը սրանից յերեք-չորս տարի առաջ, յերկրի ժողովրդա-կան տնտեսության վերականգնման շրջանի վերջին, նրա սոցիալիստական վերակառուցման շրջանի սկզբին: Վաչ, նույնպես չեր կարելի:

ինչու:

Վորովհետև այն շրջանում ևս դեռ չկային այն տնտեսական ու քաղաքական պայմանները, վոր անհրաժեշտ են կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի խնդիրը հաջողությամբ լուծելու համար:

1926—27 թվին չքավորական ու միջակային տընտեսությունները իրենց արտադրած 66,4 միլիոն տոննա հացից շուկա հանեցին (ծախեցին) 7,5 միլիոն տոննա: Կուլակային տնտեսությունները արտադրեցին 10,1 մլն. տոննա հաց, իսկ շուկա հանեցին 2,07 մլն. տոննա: Սովորողները և կոլխոզները նույն թվին արտադրեցին 1,3 մլն. տոննա, վորից շուկա հանեցին 0,6 մլն. տոննա: Այլ խոսքով, 1926—27 թվին շուկա հանված ազրանքային հացի ամբողջ մասսայի մեջ չքավոր ու միջակ գյուղացիության հացը կազմում եր 74%, կուլակի հացը — 20%, սովորողների ու կոլխոզների հացը — 6%:

Կարելի՞ յեր արդյոք 1926—27 թվին կուլակների հացը (20%) փոխարինել սովորողների ու կոլխոզների հացով: Պարզ եր, վոր չեր կարելի: Կարելի՞ յեր այն ժամանակ գրո՞ն տալ կուլակության դեմ նրան, իբրև դասակարգի, լիկվիդացիայի յենթարկելու համար: Հասկանալի յե, վոր չեր կարելի: Անցնել այն ժամանակ կուլակային տնտեսությունների լիկվիդացիաներին, — դա կնշանակեր մնալ առանց հացի ու դրանով առաջ բերել յերկրում խոշորագույն քաղաքական և տնտեսական բարդություններ. դա կնշանակեր վիճեցնել սոցիալիստական շինարարությունը մեր յերկրում:

Փոխանակ կուլակությունը, իբրև դասակարգի, լիկվիդացիայի յենթարկելու, մենք, անշուշտ, ոգնած

կլինելինք նրա ամրացմանը: Յեկ փոխանակ միջակի հետ մեր դաշինքը ամրացնելու — կլովելինք նրա հետ և դրանով կմասսելինք բանվոր դասակարգի ու չքավորության միությանը միջակ գյուղացիության հետ, իւզ չե վոր այդ միությունը մեր պրոլետարական պետության միակ հաստատ հիմքն ե հանդիսանում:

Անա վորպիսի հետևանքներ կարող եր ունենալ ապակուլակացման քաղաքականությունը, վոր 1926—27 թվին համառորեն առաջարկում եր կուսակցությանը միացիալ ոպողիցիոն բլոկը — Տրոցկու, Զինովևի և Կամենսկի գլխավորությամբ: Մեր կուսակցությունը վճռականորեն մերժեց ոպողիցիայի առաջարկը, դա համարելով բախտախնդրական: Այդ առաջարկների ընդունումը ու նրանց կիրառումը կյանքում կարող եր կորստի մատնել պրոլետարական պետությունը և վերականգնել կապիտալիզմը մեր յերկրում:

1929 թվի վերջին Խորհրդային Միության մեջ ստեղծվեց բոլորովին այլ գրություն:

Կոլխոզները ու սովորողները 1926/27 թվին տվել ելին 0,6 մլն. տոննա ապրանքին հաց. 1928 թվին նրանք տվին 0,9 մլն. տոննա, 1929 թվին — 2,1 մլն. տոննա, իսկ 1930 թվին նրանք պետք ե տան ավելի քան 10 մլն. տոննա ապրանքային հաց, այսինքն զրեթե 5 անգամ ավելի, քան տվել ելին կուլակային տնտեսությունները 1926—27 թվին: Այդ թվերից պարզ ե, վոր այժմ մենք կարող ենք յոլա գնալ առանց կուլակների հացի, մենք այն կարող ենք փոխարինել կոլխոզների ու սովորողների արտադրությամբ: Հետևաբար, հասել ե ժամանակը, վորպեսզի «վճռական հարձակում

սկսենք կուլակության դեմ, հաղթենք նրա ընդիմադրությունը, լիկվիդացիայի յենթարկենք նրան իրեւ դասակարգի, և նրա արտադրությունը փոխարինենք կոլխոզների ու սովխոզների արտադրությամբ» (Ստալին):

«Մենք հանդուրժում ենք այդ արյունարբուներին, սարդերին, վամպիրներին, առաջ տանելով նրանց շահագործական տենդենցների սահմանափակման քաղաքականությունը: Հանդուրժում ենք, վորովհետև չեյինք կարող վոչնչով փոխարինել կուլակային արտադրությունը, կուլակային տնտեսությունը: Այժմ մենք հնարավորություն ունենք ավելի քան փոխարինելու նրանց տնտեսությունը մեր կոլխոզների ու սովխոզների տնտեսությամբ: Հանդուրժել այլև այդ արյունարբուներին, վոր վառում են կոլխոզները, սպանում են կոլխոզային դորձիչներին և փորձում վիժեցնել ցանքը, — նշանակում ե գնալ բանվորների և գյուղացիների շահերի դեմ»: (Ստալին—Պատասխան ընկեր կոլխոզնիկներին):

1930 թվի գարնանը, արտադրող շրջանների հիմնական հացահատիկային ռայոններում կուեկտիվացումը ընդդրկեց գյուղացիական տնտեսությունների 40—50%-ը: Ամբողջ յերկրում այդ ժամանակ 82 հազար կոլխոզները միացնում եյին $6^{1/2}$ միլիոն չքավոր-միջակային տնտեսությունն կոլխոզների ցանքսադաշտը 1930 թ. գարնանը կազմեց առանց աշնանացանի 36 մլն. հեկտար: 1930 թվին կոլխոզները և սովխոզները տալու յեն ավելի քան 10 մլն. տոննա ապրանքային հաց: Միայն կոլխոզների ապրանքային հացը կազմելու յե 9 մլն. տոննա (ավելի քան 500 մլն.

փութ), այսինքն 4 անգամ ավելի, քան տվել եյին կուլակային տնտեսությունները 1926/27 թվին:

Այս թվերը վկայում են կոլխոզային շարժման զորեղ թափը մեր յերկրում: այդ շարժումը ընդդրկելով միլիոնավոր չքավոր-միջակային դյուդուցիությունը, վերածվեց Խորհրդային Միության ամբողջ ույոնների և շրջանների համատարած կոլեկտիվացման:

Այդ թվերը մի ավելորդ անգամ ևս հայտարարում են, վոր բատրակների ու չքավորության յետելց դեպի կոլխոզ շարժվեցին միլիոնավոր միջակ գյուղացիներ: Միջակի մասսայական շարժումը դեպի կոլխոզ նշանակում ե, վոր միջակը վճռականորեն դարձել ե դեպի զարգացման սոցիալիստական ուղին, վոր միջակը, բատրակության և չքավորության հետ միասին, գնաց բանվոր դասակարգի — սոցիալիստական ժնարարության կազմակերպչի և դեկավարի յետելց — կուլակի դեմ: իսկ դա, իրա հերթին, նշանակում ե, վոր կուլակի դեմ կովելով, պրոլետարիատը հենարան կդանի վոչ միայն բատրակների ու չքավորության, այլև միջակ կոլխոզնիկների մեջ:

Իսկ այդ բոլորը, միասին վերցրած, բոլորովին նոր ձևով, նոր մակարդակի վրա գրեց պրոլետարական պետության վերաբերմունքի խնդիրը դեպի կապիտալիզմի վերջին հենակետը մեր յերկրում — դեպի կուլակությունը, դեպի այդ «ամենից զաղանային, ամենավայրի, ամենակոպիտ շահագործողների» (Լենին) դասակարգը:

Այն ժամանակ, յերբ կոլխոզների մեջ միանում եյին առանձին գյուղերի չքավոր ու միջակ գյուղացիները կամ վորևէ գյուղաբնորհուրդի, ույոնի մի

քանի գյուղեր, հարց եր ծագում — ընդունել թե չընդունել կուլակին կոլխոզ, Յեվ ըացասական պատասխանով, վոր ավեց այդ հարցին մեր կուսակցությունը, հարցը շատ պարզ եր լուծվում. կուլակներին հաղ եյին տալիս ծայրամասերում, կոլխոզի հողերից դուրս, իսկ վտանգավոր կուլակներին և կոլխոզների վասատուներին Խորհրդային իշխանությունը, բացի գրանից, հատուցանում եր ըստ արժանվույն:

Սակայն յերբ կոլխոզ շարժվեց ամբողջ գյուղաբուրդների, ռայոնների և շրջանների չքավոր-միջակային գյուղացիությունը, յերբ կոլխոզային շարժումը սկսեց ընդգրկել վոչ թե հարյուրներ ու հազարներ, այլ հարյուր հազարավոր ու միվոնավոր չքավորներ ու միջակներ, և յերբ այդ շարժումը լայնանում ու աճում եր կուլակության համառ զիմաղրության պայմաններում և անողոք պայքարով նրա դեմ, վոր յերբեմն շատ սուր բնույթ եր ստանում, այն ժամանակ դեպի կուլակությունը վերաբերմունքի հարցը ծառացավ այլ ձեռվ, Համատարած կոլեկտիվացման անցնող շրջաններում հասրավորություն ստեղծվեց կուլակային անտեսությունների լիկվդացիայի համար:

Կուլակային անտեսությունների լիկվդացիայի խնդիրը այստեղ — համատարած կոլեկտիվացման շրջաններում — ծառանում ե իր ամբողջ սրությամբ, իբրև կոլխոզների աճման ու ամրացման ճամրին կանգնած խոշորագույն խոշնդոտներից մեկի վոչընչացման խնդիր, իբրև կոլխոզային շինարարության համար ամենից ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու խնդիր:

Ապակուլակացումը համատարած կոլեկտիվացման շրջաններում «հասարակ վարչական միջոց չե»: Ապակուլակացումը այստեղ այժմ կոլխոզների կազմակերպության և զարգացման հիմնական մասն ե ներկայացնում» (Ստալին):

Լիկվիդացիայի յենթարկված կուլակային տնտեսությունների միջոցները և գործիքները անցնում են կոլխոզների անբաժանելի ֆոնդերին: «Լիկվիդացիայի յենթարկված կուլակի միջոցները կազմում են կոլխոզների հիմնական ֆոնդերի մոտ 15%-ը» (Յակովիկ): Կուլակային տնտեսությունների հաշվին ամրանում ե կոլխոզների տնտեսական բազան, ավելանում են նրանց ամրացման ու աճման նյութական հնարավորությունները: Կոլխոզների անբաժանելի ֆոնդերի ավելացումը հեշտացնում ե հենց իրենց՝ կոլխոզնիկների՝ արտադրության միջոցների ու գործիքների համայնացման աշխատանքը:

Միջակ-կոլխոզնիկը, բատրակ ու չքավոր գոլխոզնիկների հետ մեկտեղ, դառնում ե կոլեկտիվ տեր՝ լիկվդացիայի յենթարկված կուլակային տնտեսությունների գույքի, գործիքների ու միջոցների: Սրանից ևս պարզ ե, վոր միջակ-կոլխոզնիկը անհաշտ թշնամական վերաբերմունք ե յուրացնում դեպի կուլակը, վոր նա ակտիվ կովելու յե և կովում ե կուլակության դեմ հանուն կոլխոզների ամրացման, հանուն համատարած կոլեկտիվացման, հանուն կուլակության իբրև դասակարգի՝ լիկվդացիայի: Միջակ-կոլխոզնիկը դառնում ե ակտիվ մարտնչող՝ գյուղի սոցիալիստական վերակառուցման համար, բանվոր դասակարգի հաստատ հենարանը».

Համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակության դեմ կանգնած են վոչ թե բատրակների, չքավորների ու միջակների առանձին խմբակներ, այլ նրանց ամբողջ մասսան, ընդհանուր պարիսպով։ Բատրակ, չքավոր ու միջակ կոլխոզնիկները այստեղ կուլակության դեմ են դուրս գալիս միասնական ընհանուր ճակատով։ Այստեղ հենց ինքը կոլխոզնիկների մասսան կանգնած ե կուլակային անտեսությունների լիկվիդացիայի անհրաժեշտության առաջ։ Այստեղ նրանախաձեռնությամբ, հենց նրա ձեռքով կատարվում է կուլակների ապակուլակացումը։ Այստեղ ապակուլակացումը դառնում ե վոչ միայն հնարավոր, անհրաժեշտ, այլև անխուսափելի գործ։ Յեզ այն ել մի գործ, վոր ամենասերտ, անխղելի, որդանական կապունի կոլխոզների զարգացման և ամրացման հետ, մի գործ, վորի համար իր նախաձեռնությամբ յեռանդուն պայքար ե մզում կոլխոզնիկ բատրակների, չքավորների ու միջակների ամբողջ մասսան։ Միայն այստեղ, համատարած կոլեկտիվացման շրջաններում, լիովին ապահովված ե այդ գործի հաջողությունը։

Շրջանների համատարած կոլեկտիվացումը հնարավոր, անհրաժեշտ և անխուսափելի յեզ դարձնում կուլակային անտեսությունների լիկվիդացիան։

Կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի քաղաքականությունը կոմունիստական կուսակցությունը կիրառում ե ներկայիս միայն համատարած կոլեկտիվացման շրջաններում։ Իսկ ինչպես վարկել կուլակի հետ այն շրջաններում, ուր կոլխոզային շարժումը դեռ ևս սաղմային վիճակում ե գտնվում և կամ նոր միայն սկսել ե զարգանալ։

Ապակուլակացում համատարած կոլեկտիվացումը կարող ե և պետք ե լինի կուլակային տնտեսությունների լիկվիդացիայի հիմքը, բայց այս:

Ապակուլակացում համատարած կոլեկտիվացման շրջաններից դուրս, անկախ չքավոր-միջակային տնտեսությունների համատարած կոլեկտիվացումից, նաև կուլակային տնտեսությունների լիկվիդացիան և ապակ միայն հոգ տանել բատրակներին, չքավորներին ու միջակներին միացնել կոլխոզների մեջ, — այդորինակ հայացքները ու այդորինակ պրակտիկան վոչ մի առնչություն չունեն մեր կուսակցության քաղաքականության հետ։

Կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի քաղաքականությունը կոմունիստական կուսակցությունը կիրառում ե ներկայիս միայն համատարած կոլեկտիվացման շրջաններում։ Իսկ ինչպես վարկել կուլակի հետ այն շրջաններում, ուր կոլխոզային շարժումը դեռ ևս սաղմային վիճակում ե գտնվում և կամ նոր միայն սկսել ե զարգանալ։

Այդ շրջաններում շարունակում ե իր ուժի մեջ մնալ կուլակության շահագործական տեխնիկացների սահմանափակման լողունգը։ Այստեղ պետք ե կիրառվի սահմանափակումը և, իբրև դրա հետևանք, կուլակության վտարումը գյուղատնտեսական արտադրությունից։ Միայն այն ժամանակ, յերբ այդ շրջաններում ևս չքավոր միջակային մասսաները կսկսեն իրականացնել համատարած կոլեկտիվացումը, յերբ նրանց մեծամասնությունը կհասկանա ու կանցնի կոլխոզները, այստեղ ևս ժամանակին, տեղին և ուղիղ կինի

կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի քաղաքականությունը:

Համատարած կոլեկտիվացման շրջաններից դուրս անհրաժեշտ ե շարունակել ավելի վճռական հարձակումը կուլակության դեմ, ոգտագործելով բոլոր միջոցները (գյուղատնտ. տուրք, կոնտրակտացիա և այլն) կուլակային տնտեսությունների աճումը սահմանափակելու համար, վտարելով կուլակներին կոլխոզներից, պահանջելով կուլակներից ճշտությամբ և ժամանակին կատարել պետության նրանց վրա դրած բոլոր պարտականությունները, վճռականորեն կովելով այն կուլակների դեմ, վոր ցաք ու ցրիվ են անում իրենց տավարը, սերմացուն, գյուղատնտեսական ինվենտարը կամ նույնը ստիպում, դրդում են անել ուրիշներին, առանց, այդպիսի դեպքերում, կանգ առնելու կուլակի ամբողջ գույքի գրավման և իրեն ել այդ շրջանից աքսորելու առաջ:

Բայց արդյոք ինքնուրույն և իրավահավասար են այդ յերկու լողունգները — «կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայ», վոր կիրառվում ե համատարած կոլեկտիվացման շղաններում, և «կուլակության շահագործական տեսքենցների սահմանափակումը», վոր շարունակում ե գործադրվել Խորհրդային Միության բոլոր այլ շրջաններում:

«Կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի քաղաքականությանը անցնելու ժամանակից — պատասխանում ե այդ հարցին ընկ». Ստալինը — այդ վերջին լողունգը դարձավ գլխավոր լողունգ, իսկ կուլակության՝ վոչ-համատարած կոլեկտիվացման շրջան-

ներում սահմանափակելու լողունգը ինքնուրույն լողունգից վերածվեց ոժանդակի չ լողունգի, ոգնող լողունգի՝ գլխավոր լողունգի վերաբերմամբ, լողունգի, վորը այդ շրջաններում թեթևացնում ե գլխավոր լողունգից անցնելու պայմանների պատրաստությանը»:

Համ.կկ(բ) XVII համագումարը շերտեց «այդ լողունգի մեծագույն պատմական նշանակությունը, վոր բանվոր դասակարգի գրոհն ե գուժում կապիտալիստական շահագործ ծան վերջին հենարանի դեմ

մեր յերկրում»:

Կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի ինդըրի լուծումը նշանակում ե, վոր պրոլետարական պետությունը վճռական մարտի յե դուրս յեկել կուլակության դեմ, վորը վերջին կապիտալիստական դասակարգն ե մեր յերկրում, վորը դեռ չեր զրկված իր արտադրական բաղայից (արտադրության միջոցներից ու գործիքներից) և վորի տնտեսական կշիռը գյուղում դեռ մեծ եր:

«Կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի իրագործման հիմնական մեթոդը կոլեկտիվացման մեթոդն ե: Մյուս բոլոր մեթոդները պետք ե հարմարեցվեն այդ մեթոդին: Այն ամենը, ինչ վոր հակասում ե այդ մեթոդին կամ թուլացնում ե նրա նշանակությունը, պետք ե դեռ շպրտվի» (Մտակեն — Պատասխան սվերդլովիների հարցերին):

Ապակուլակացումը կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի քաղաքականության միայն մի մասն ե և այն ել վոչ գլխավոր, վճռող մասը: Ապակուլակացված կուլակը իր արամադրություններով, իր վերաբերմունքով դեպի կովոզները և պրոլետա-

բական պետությունը չի դադարում կուլակ լինելուց։ Նա յեղել ե մինչև ապակուլակացումը և մնում ե ապակուլակացումից ել հետո կոլխոզների և պրոլետարական պետության անհաշտ թշնամին։ Կուլակը, զրկվելով արտադրության միջոցներից ու գործիքներից, վորոնց ոգնությամբ նա շահագործում եր բատրակներին ու չքավորներին և զարգացնում իր շահագործական տնտեսությունը, անհատական գյուղացիական տնտեսության պայմաններում կարող ե նորից կուլակ դառնալ։

Քանի վոր գոյություն ունի մանր ապրանքային արտադրություն (իսկ հենց այդպիսին ե անհատական գյուղացիական տնտեսությունը), կապիտալիստական տարրերի զարգացման համար հող դեռ մնում ե։ Կուլակության, իբրև գասակարգի, լիկվիդացիայի գլխավոր, վճռող մեթոդն ե համատարած կուեկտիվացումը, չքավոր ումիջակ գյուղացիության բոլոր անհատական տնտեսությունների միացումը կոլխոզների մեջ, կոլխոզների ամրացումը, նրանց արտադրության, աշխատանքի ու կենցաղի սոցիալիստական կազմակերպությունը, մեկ խոռով—սոցիալիստական գյուղատնտեսության կազմակերպությունը և ամրացումը։ Այդ գեպքում կուլակության աճման ու վերածննդի հողը առմիջտ վերացված կլինի։ Այդ գեպքում մենք իրավունք ու հիմք կունենանք ասելու, վոր կուլակությունը, իբրև եկապլոտատորների և պարագիտների դասակարգ, հիրավի լիկվիդացիայի յե յենթարկված և նրա վերածննդի ուղին փակված ե անդարձ ու առմիջտ։

Կուլակության, իբրև գասակարգի, լիկվիդացիայի հիմական մեթոդն ե չքավոր-միջակային տնտեսու-

թյունների համատարած կուեկտիվացումը, կոլխոզների ամրացումը, վորոնք իրենց տիպով հանդիսանում են սոցիալիստական տնտեսության ձևերից մեկը։ Իսկ դրա համար պետք ե համառ ու անընդհատ աշխատել, մի ացնելով բարրակությունն ու չքավորությունը, ամրացնելով նրանց միությունը միջակի հետ, գրավելով բատրակներին, չքավորներին ու միջակներին կոլխոզների մեջ, հաղթահարելով միջակի մասնավոր-սեփականատիրական տրամադրությունները, յետ մղելով կուլակի հարձակումները, վորը ապակուլակացումից հետո յել կատաղի կոփկ և մղելու կոլխոզների դեմ։

Սա յե գլխավորը։ Միայն այսպես կարելի յե լուծել կուլակության, իբրև գասակարգի, լիկվիդացիայի խնդիրը։ Ու չարաչար սխալվում են նրանք բոլորը, ովքեր այդ խնդիրը սահմանափակում են միայն ապակուլակացումով, ապակուլակացումովվարչական միջոցներով, ապակուլակացումով ամենուրեք, անկախ համատարած կուեկտիվացումից, վոչ թե նրա հիման վրա, այլ մինչև այն։

«Դուք կարող եք ձերբակալել — ասում եր կուսակցության ԽVI համագումարում ընկ։ Ստալինը — և աքսորել տասնյակ ու հարյուր հազարավոր կուլակներ, բայց յեթե դրա հետ միաժամանակ չանեք այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ ե տնտեսության նոր ձևերի կառուցման արագացման համար, հին, կապիտալիստական ձևերը նորերով փոխարինելու համար, գյուղի կապիտալիստական տարրերի տնտեսական գոյության ու զարգացման արտադրական աղբյուրները կասեցնելու և վոչնչացնելու համար, — կուլակությունը, միևնույն ե, կվերածնվի ու կ'աճի»։

Կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի խնդիրը վերջնականապես լուծված կլինի այն ժամանակ, յերբ կոլեկտիվացումը կընդգրկե մեր յերկրի բոլոր չքավոր ու միջակային տնտեսությունները ամբողջությամբ, յերբ կամրանա սոցիալիստական հողագործությունը մեր յերկրում։ Այն ժամանակ գյուղատնտեսական արտադրությունից վերջնականապես կվտարվի և լիկվիդացիայի կենթարկվի վերջին կապիտալիստական դասակարգը — կուլակությունը։

«Կուլակը դեռ վերջնականապես պարտված չե և կատաղի ընդդմաղրելու յե կոլեկտիվացման հաղթական առաջխաղացմանը։ Կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիան կազմանչե յերկարատե, համառ պայքար կուլակի դեմ և սիստեմատիկ աշխատանք կոլեկտիվացման կիրառման նկատմամբ։ Նա պետք է ծավալվի լիակատար համապատասխանությամբ համատարած կոլեկտիվացման կիրառման հետ, իբրև նրա անխղելի մի մասը» (Համ. Կ կ (բ) XVI համագումարի ըանաձելից «Կոլխոզային շարժման և գյուղատնտեսության վերելքի մասին»)։

Մի վերջին հարց ևս՝ — արդյոք կա վորեե տարբերություն 1918—19 թվերի ապակուլակացման և այն ապակուլակացման միջև, վոր պբոլետարական պետության դեկավարությամբ կիրառում են ներկայիս կոլխոզային մասսաները համատարած կոլեկտիվացման շրջաններում։

Դժվար չե հասկանալը, վոր հեղափոխության առաջին տարիների ապակուլակացման և կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի քաղաքականության միջև, վոր մեր կուլակցությունը կիրառում ե

ներկայիս համատարած կոլեկտիվացման շրջաններում, կա արմատական սկզբունքային տարբերություն։

Այն ժամանակ 1918—19 թվերին — մեր առաջ խնդիր եր դրված՝ լիկվիդացիայի յենթարկել կալվածատերերի դասակարգը, և ջախջախել կուլակությունը, վոր ակտիվորեն պաշտպանում եր բուրժուական-կալվածատիրական հականեղափոխությունը։ Այն ժամանակ չեր կարող ծագել կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի խնդիրը, վորովհետեւ նրա գոյության ու աճման հողը, հանձինս մանրապրանքային գյուղացիական տնտեսության վոչ միայն մնում եր, այլ և նրան դեռ ձեռք չեր կպած։ Իսկ ոմանը արտադրությունը կապիտալիզմ ու բուրժուազիա յե ծնում միշտ, ամեն որ, ամեն ժամ, տարերային ուժով և մասսային մաշտաբով» (Լենին)։ Այն ժամանակ ապակուլակացված կուլակը հնարավորություն ուներ նորից վոտքի յելնելու (ու յելնում եր, ինչպես ցույց տվին հետագա տարիները) և նորից կուլակ դառնալու. միջակային տնտեսությունների մի մասը ևս կարող եր աճել (և աճում եր) կուլակային շահագործական տնտեսության։

Իսկ այժմ, հենվելով սոցիալիստական ինդուստրիայի զորության, սովորության և ապական հազարավոր կոլխոզների վրա, պբոլետարական պետությունը առաջադրում է և հաջողությամբ լուծում կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի խնդիրը՝ համատարած կոլեկտիվացման ռայոններում։ Այժմ չքավոր-միջակային տնտեսությունները կոլխոզների մեջ միացնելու շնորհիվ աստիճանաբար պակասում ե ու վոչնչանում կուլակության վերածննդի ու աճման

հողը։ Այժմ գյուղացիական մանր-ապրանքային տընտեսությունը փոխարինվում է կոլեկտիվ սոցիալիստական (ըստ իր տիպի) տնտեսությամբ։ Այժմ կապիտալիզմը արմատախիլ է արվում մեր յերկրում։

Այն ժամանակ—1918—19 թվերին—կուլակներից կորզված գույքը բաժանվում էր բատրակների, չքավորների ու միջակների միջև։ Այժմ կուլակային տնտեսությունների գրավված գույքը համայնացվում է և անցնում կոլխոզների անբաժանելի ֆոնդերը։ Այն ժամանակ—բաժանում, այժմ—համայնացում։

Այն ժամանակ—անհատական տնտեսությունների մեկ խմբակի (կուլակների) արտադրության միջոցները ու գործիքները անցնում են նոոյնապես անհատական տնտեսությունների մի այլ խմբակին (չքավորների ու միջակների)։ Այժմ կուլակության արտադրության միջոցները ու գործիքները անցնում եր կոլխոզներին—հասարակական սոցիալիստական տնտեսություններին։

Այն ժամանակ կուլակության արտադրության միջոցների ու գործիքների, նրա գույքի հաշվին ամրանում ու զարգանում են անհատական չքավորմիջակային տնտեսությունները։ Այժմ կուլակության միջոցների ու արտադրության գործիքների հաշվին ամրանում են կոլեկտիվ տնտեսությունները, աճում ու զարգանում ե սոցիալիստական հողագործությունը։ Այն ժամանակ ապակուլակացումը շրջանների համատարած կոլեկտիվացման հետևանքը, նրա հանրագումարը չեր (և չեր ել կարող լինել)։

Այժմ ապակուլակացումը կատարվում է միայն չքավորական մանրագույն և միջակային մանր տնտե-

սությունների համատարած կոլեկտիվացման հիմանվրա, լինելով նրա անխուսափելի հետևանքը։

Այն ժամանակ ապակուլակացումը կատարում է ին անհատ բատրակները, չքավորները ու միջակները, իսկ այժմ այդ կատարում են բատրակ, չքավոր ու միջակ կոլխոզները։ Իսկ դրա մեջ ահազին տարբերություն կա։

Անա թե ինչու խորապես միավա են այն յենթադրությունները, թե կուլակության, իբրև դասակարգի, մեկվացիայի լոգունքը նշանակում է վերադարձ 1918—19 թվերի ապակուլակացման քաղաքականությանը։ Յեկ չափազանց վնասակար է այդ յենթադրությունից բղխող ապակուլակացման պրակտիկան համատարած կոլեկտիվացման շրջաններից դուրս, և կուլակային գույքի բաշխումը՝ անկախ համատարած կոլեկտիվացումից։

Մենք չենք գնում յետ—դեպի մանր-ապրանքային անհատական գյուղացիական տնտեսությունը—կապիտալիզմի այդ բազան, այլ գնում ենք առաջ, կազմակերպելով, զարգացնելով ու ամրացնելով սոցիալիստական գյուղատնտեսությունը, արմատախիլ անելով կապիտալիզմը մեր յերկրում։

Մենք կովի յենք դուրս գալիս կուլակության դեմ, վորը վերջին կապիտալիստական դասակարգն է մեր յերկրում։

Մենք գնում ենք առաջ—դեպի սոցիալիզմի հաղթանակը։

III. ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ

Կուլակությունը կատաղորեն դիմադրում ե, կատաղորեն պաշտպանվում ե իր վրա հարձակվող կոլխոզային մասսաներից։ Համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակությունը արդեն հնարավորություն եր ունեցել համոզվելու, վոր այնտեղ խոսքը արդեն իրա, իբրև ձրիակերների ու շահագործողների դասակարդի, լիկվիդացիայի մասին ե, վոր համատարած կոլեկտիվացումը շեշտակի դնում ե նրա մահու և կենաց խնդիրը։ Այդ պատճառով կուլակությունը անզուսպ կատաղությամբ կովում ե կոլխոզների և կոլխոզնիկների դեմ։ Կուլակությունը իր բոլոր ուժերն ե լարում, գործադրում ե կովի հին ձևերը ու միջոցները, հնարում ու փորձում ե նորերը, ձգտելով թուլացնել իր դասակարգային թշնամուն, ջլատել նրա ուժերը, կասեցնել նրա նյութական բազան։

Կուլակությունը հասկանում ե, վոր իր դեմ տարվող հարձակման անմիջական նյութական բազան հանդիսանում են կոլխոզները և սովխոզները, վոր իր դեմ արշավող ուժերի ամենից ավելի համախմբված, յեռանդուն և ակտիվ կորիզը կազմում են բատրակները և չքավորները, վոր այդ ուժերի հիմնական մասսան բաղկացած ե միջակ-կոլխոզնիկներից, վորոնք պակաս կայուն են և պակաս կոփված կոփմներում։ Կուլակությունը նույնչափ գեղեցիկ հասկանում ե, վոր իր դեմ հարձակվող բատրակ, չքավոր ու միջակ մասսաների կազմակերպիչը և դեկավարը գործարանային պրոլետարիատական ե։

Հենց այս հիմնական գծերով ել ուղղում ե կուլակությունը իր հականարվածները։

Խանգարել նոր կոլխոզների կազմակերպմանը, կազմակուծել յեղած կոլխոզները, կասեցնել կոլխոզցին շարժումը, թուլացնել բատրակ-չքավորների կորիզը կոլխոզներում, կովեցնել միջակին բատրակի ու չքավորի հետ, վախեցնել ու իր կողմը քաշել միջակին, կասեցնել կոլխոզային մասսաների վստահությունը գեպի բանվոր դասակարգը—ահա ուր ե ուղղում իր հարվածները, ահա ինչ ե հետապնդում կուլակությունը։

Նոր կազմակերպվող կոլխոզների նյութական բազան վիճեցնելու համար կուլակները կատաղի ագիտացիա յեն մղում կոլխոզների մեջ մտնող գյուղացիների միջև, վորպեսզի նրանք ծախեն-ծախսեն իրենց բանող և մթերատու տավարը, գյուղատնտեսական ինվենտարը, սերմացուն։ Գարնանացանի նախապատրաստման շըրջանում և հենց ցանքսի ժամանակ կուլակները ամեն կերպ փորձում ելին վիճեցնել ցանքսը։ Նրանք յեռանդուն ագիտացիա ելին մղում սերմացուի զտման ու թունավորման դեմ, հոգուտ սերմացուի աղալուն, հոգուտ ցանքսաղաշտի կրծատման։ Առանձին ուժով այդ վսասարարական աշխատանքը կուլակությունը տանում եր անհատական գյուղացիների մեջ։

Կոլխոզների դեմ պայքարելիս, կուլակությունը ոգտագործում ե ամենաբազմազան ձևեր ու միջոցներ։ Այստեղ ե տերտերական ագիտացիան ու «անտի-խրիստը» կոլխոզնիկներին վախեցնող խրտվիլակի դերում, այստեղ ե անմիտ ստախոսությունը և զրապարտությունը, այստեղ են կոլխոզների մեջ

մտնելու և նրանց ներսից պայթեցնելու փորձերը։ Այստեղ ե չարանենդ վնասարարությունը և բացահայտ տեսողը — հրձիգություն, սպանություն, ջրհորների թունավորում։ Այստեղ ե արտադրության միջոցների ու գործիքների վոչնչացումը և բանող տավարի գազանաբարո մորթումը։ Այստեղ ե ամեն ինչ՝ աստված, սատանա, հուր, թույն ու գենք։

Ահազին ուժ ե լարում կուլակությունը, վորպեսզի թուլացնե իր դեմ հարձակվող կոլխոզային մասսաները։ Կուլակությունը ամեն կերպ աշխատում ե իր կողմը քաշել միջակ դյուղացիությունը։ Նա ձգում է վիժեցնել, կազմալուծել չքավոր-միջակային դաշինքը, միջակին հակադրել չքավորին։

Բայց կուլակությունը հասկանում ե, վոր չի կարելի հաջողություն ունենալ միջակի համար տարվող կովում՝ առանց թուլացնելու բատրակ-չքավորական կորիզը, առանց տարրալուծելու չքավորությունը, առանց փորձելու իր ազդեցությանը յենթարկել չքավորության ամենաանկայուն մասը։ Հենց այդ պատճառով կուլակը ձգում ե տարածայնություն մտցնել բատրակ-չքավորական շարքերը, գործադրելով սաստում, արբեցում, կաշառք և փորձելով տնտեսապես ստրկացնել չքավորությունը։ Արդյոք պարզ չե սրանից, թե ում պահանջները և ցանկություններն են հնչում աջ թեքումավորների ճառերում, յերբ նրանք առարկում են բատրակների ու չքավորության կազմակերպության և միության դեմ։

Կուլակությունը կատաղությամբ ե դիմավորում բանվորական ըրիգադաներին և առանձին բանվորներին, վոր գյուղ են գալիս մշտական աշխատանքի։ Յուրա-

բանչյուր բանվորի մեջ կուլակը տեսնում ե իր դասակարգային անհաշտ թշնամուն։ Յեվ նա չի սխալվում։

Բանվորները բերում են գյուղ իրենց արտադրական, կազմակերպչական փորձը, դասակարգային հեղափոխական պայքարի փորձը, բանվորները համախմբում, միացնում են բատրակներին ու չքավորներին, ոգնում են վերացնել, հաղթահարել միջակի տատանումները, ամրացնում են բատրակների ու չքավորների միությունը միջակների հետ, կազմակերպում են կոլխոզային մասսաները կուլակության դեմ պայքարելու։ Կուլակությունը տեսնում ե բանվորների մեջ կոլխոզային շարժման կազմակերպիչներին, այն շարժման, վոր մահ ե գուժում կուլակին։ Նա հասկանում ե բանվորների ղեկավարող դերը կոլխոզային մասսաների կազմակերպության ու համախմբման մեջ — վճռականորեն կուլակության դեմ հարձակվելու, նրան, իբրև շահագործողների ու պորտաբույժների դասակարգի, լիկվիդացիայի յենթարկելու համար։ Սրանից հասկանալի յեն կուլակության փորձերը — գյուղացիության մեջ անվտահություն սերմանել դեպի բանվորները, վնասել նրանց հեղինակությանը, պատկերացնել բանվորներին համարյա թե իբրև կալվածատերերի, վոր գալիս են չքավոր ու միջակ գյուղացիներին ձնշելու և ստրկացնելու։

Այդպիսի ձևերով ու միջոցներով կուլակությունը կովում ե իր գոյության համար, ձգտելով կասեցնել կոլխոզային շարժումը և նրան յետ դարձնել, փորձելով կազմակերպել և թուլացնել իր վրա հարձակվող կոլխոզային մասսաների կուռ շարքերը։ Սակայն աեղտեղ, հույսը կտրելով բացահայտ կովում հաջողու-

թյուն ձեռք բերելուց, կուլակությունը վճռականորեն փոխում ե իր գործելակերպը, հնագանդության դիմակ ե քաշում յերեսին, ձեանալով խորհրդային իշխանության բարեկամ և նույն իսկ.... սոցիալիստական շինարարության կողմնակից:

ՊԲաք ե արդյոք ասել, վոր 1930 թվի սկզբին մի շարք տեղական կազմակերպությունների կատարած ամենակոպիտ սխալները ու խոտորումները միջակի վերաբերմամբ, վորոնք ուժեղացրին միջակի տատանումները, առաջացրին նրա դուրս դալը կոլխոզներից, — ամբացրին կուլակության դիրքերը, ուժեղացրին նրա ազգեցությունը միջակ գյուղացիության մի մասի վրա:

Կուսակցության վճռական պայքարը միջակների նկատմամբ թույլատրված խոտորումների դեմ կուլակությունը փորձեց պատկերացնել, իբրև թե կուսակցությունը հրաժարվում ե կոլեկտիվացումից և կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի քաղաքականությունից:

Ընկ. Ստալինի «Գլխապտույտը հաջողություններից» հոդվածից հետո, վոր առաջին նախագործուշացումն եր քյալազողներին և ուռակոլեկտիվատորներին, և Համ. ԿԿ(Բ) Կենտկոմի «Կոլխոզային շարժման մեջ կուսակցության գծի խոտորումների դեմ պայքարի մասին» վորոշման հայտարարումից հետո, մի շարք տեղերում սահմողական կոլեկտիվացման «հերոսները», «ձախ» գործերի վարպետները, շփոթվեցին, զլուխները կորցրին, չիմանալով, թե ինչ անեն և, պառավական թուլության ու վճառության մեջ ընկած, մի կողմ քաշվեցին կոլխոզային շինարարու-

թյունից. իսկ ուրիշները ուղղակի խայտառակ դասաւության դիմեցին — փախան դասակարգային կովի ճակատից, թողնելով ասպարեզը կուլակին և նրա գործակալությանը կուսակցության մեջ — աջ ոպորտունիստներին:

Կուլակությունը շտապեց ոգտվել այդ խառնաշփությունից տեղական աշխատավորների շարքերում։ Տասնյակ շրջաններում և հարյուրավոր գյուղերում նա կուսակցական կազմակերպություններից առաջ դուրս յեկավ իբրև ընկ. Ստալինի հոդվածի և Համ. ԿԿ(Բ) Կենտկոմի վորոշման ակտիվ ռժողովրդականացնող», բացատրելով այն, անշուշտ, իր ոգտին, իր շահերի տեսակետից։

«Կուսակցությունը կոլխոզների դեմ ե» — բացահայտ գոռում եր կուլակությունը, համոզելով չքավորներին ու միջակներին դուրս գալ կոլխոզներից, ծախծինել սերմացուի ֆոնդերը, գյուղատնտեսական ինվենտարը, լծկաններին Յեվ մի շարք տեղերում նա հաջողություն ունեցավ։

«Կուսակցությունը դեմ ե համատարած կոլեկտիվացմանը և ապակուլակացմանը» — աղաղակում եր գիմադրության չհանդիպող ու դրանից ավելի ևս անպարտավանացող կուլակությունը և սկսում եր գործել, պահանջելով վերադարձնել գրավված գույքը և կամ դա պարզորեն քաշքայլով քայլայվող կոլխոզներից, վտարելով բատրակներին ու չքավորներին կուլակային տներից, Յեվ այստեղ, ուր կուսակցական կազմակերպությունները և տեղական աշխատավորները քաջություն չունեցան իրենց սխալները ճանաչելու և անմիջապես նրանց ուղղմանը անցնելու,

այնտեղ կուլակությունը գտավ բարենպաստ պայմաններ իր հականեղափոխական աշխատանքի համար, այնտեղ նա կարողացավ քայլայել կոլխոզները և վարկաբեկել կոլխոզային շինարարությունը։ Կուլակության ակտիվ ագիտացիան ուժեղացնում եր միջակի տատանումները։ Բատրակների ու չքավորների հետ տարվող աշխատանքի բացակայությունը, բատրակ-չքավորական խմբակների թուլությունը նպաստում եր կուլակության այդ վասարար աշխատանքին։ Իսկ տեղատեղ կուլակությունը, փորձելով վարկաբեկել կուսակցության քաղաքականությունը, «ընկերաբար» շրջում ելին շփոթված ու վիճատած քյալլագյոզ կոսունիստների և խորհրդային աշխատավորների թիկունքն, հայտարարելով — «Դուք այստեղ մեղավոր չեք — դուք կուսակցության հրահանգներն ելիք իրագործում։ Մենք ձեզ չենք մեղաղում... կուսակցությունն ե մեղավոր»։

Կուսակցությունը, վճռականորեն կարգի հրավիրելով խոսորողներին, յեռանդուն կերպով ուղղելով սխաները ու հակամիջակային խոտորությունը, անողոքաբար կասեցնելով «ուռա» կոլեկտիվացատորների գործողությունները, մերկացնելով այդ գործողությունների ամբողջ մնասը և հանցագործությունը, ուղղեց կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը և ուժը ներկոլխոզային շինարարության հարցերի վրա և կարողացավ վճռական բեկում առաջ բերել տատանված միջակների տրամադրությունների մեջ, ինչպես կոլխոզների մեջ մնացածների, նույնպես և կոլխոզներից դուրս յեկածների։

Կուլակության հակա-հարձակումները հաղթված ելին։ Փարնանացանը կուսակցությունը անցկացրեց

ահագին հաջողությամբ։ Կոլխոզնիկները ցանեցին 36 միլիոն հեկտար հող, լայնացնելով ցանքսաղաշտը 12 միլիոն հեկտարով համեմատած այն ցանքսաղաշտի հետ, վորը նրանք, դեռևս անհատական տնտեսություն վարելով, սերմանել ելին անցյալ տարի։ Գարսանացանը հիրավի առաջին բոյլշեկական ցանքսն եր։

Սակայն, լոկ անհօւսավիրեն բթամիտ, շրջապատող իրականության մեջ վոչինչ չհասկացող մարդը կամ անուղղելի աջ ոպորտունիստը կարող ե յենթադրել, վոր կուլակությունը, պարտություն կրելով գարնանը, վերջ կտա իր հարձակումներին կոլխոզների և պրոլետարական պետության դեմ՝ ամառը և աշնանը։ Կուլակությունը զինաթափ չի լինի, մինչև վոր այդ զենքը չկորզվի նրա ձեռքից, մինչև վոր կուլակությունը չենթարկվի վերջնականորեն լիկիդացիայի, իբրև շահագործողների և պարագիտների դասակարգ։

Կուլակությունը շատ լավ ե հասկանում, վոր յեթե գարնանացանը վորոշ չափով կանխորշեց կոլխոզների տնտեսական հեռանկարները, ապա հիմնական, գլխավոր ու վճռական նշանակություն, ցանքսից հետո, ունենալու յերբահավաքը։

Ժամանակին ու խնամքով կատարված բերքահավաքը և կալսումը, բերքի ուղիղ բաշխումը — ահա այն միակը, վոր կարող ե ամրացնել կոլխոզները, իրականում ապացուցել կոլեկտիվ տնտեսավարության առավելությունները անհատականի առաջ և առաջ բերել անհատ-միջակների ու չքավորների նոր զորեղ հոսանքը դեպի կոլխոզ։ Այդ չի կարող չհասկանալ կուլակությունը։ Ահա թե ինչու նա վոչ պակաս, քան

գարնանը, կատաղությանը, յեռանդով ու ճկունությամբ շարունակում ե պայքարը կոլխոզների դեմ, իր հարվածների ամբողջ ուժը ուղղելով բերքահավաքի վիժեցման վրա:

Ալեկսանդրովսկիյ և Իզոբիլնո-Տիշենսկիյ ուայոնաներում (Ստավրոպոլի շրջան) կուլակները կազմակերպել են կոլխոզային հացի դեղի հրձիգումը: Յեկել են նախկին կուլակային արտերում բերքը հավաքող կոլխոզնիկների մոտ և սպառնացել են «հայսերիցը գալ»: Յերեք գյուղերում հնձել են գրավված ցանքսերը. մեկ դեպում փորձել են ընդդիմադրել կուլակային ավելցուկները հացամթերման կայանը տարվելուն և համոզել են անհատական տնտեսությունների յերեք թաղամասային ժողովներին—հրաժարվել հացամթերման հուլիս ամսվա վերահսկիչ թվերը ընդունելուց:

Կոլխոզների յեկամտի բաշխման հարցում կուլակությունը դուրս ե զալիս՝ «նախ սննդի նորման տվեք և ապա հացամթերում կատարեցեք» լողունգով, ձգտելով ներշնչել կոլխոզնիկներին, թե նրանք «պայոքի վրա»-յեն և կոլխոզի տերերը չեն («Պրագդա», 21 հուլիսի):

Խերսոնշինայում արձանագրված են ցանքսերը կուլակների կողմից հրձիգելու մի քանի դեպք: Պերովսկու անվան կոմունայում և Բերեսլավսկիյ շրջանի «Տատյանսկայա Զեմլյա» սովխոզում վառվել ե կուլակների հրձիգած մի քանի տասնյակ հեկտար ցանքս: Յեղել են հնձված հացի հրձիգության դեպքեր («Բեգնուտա», 27 հուլիսի):

Պրոխորովո գյուղում (Ուլյալի շրջան, Արմիգոնի ուայոն) ցանքսի պատրաստության ամենայեռուն ժամա-

նակ մի գիշերվա մեջ թունավորվել են 11 ձի: Իսկ նյաշինո գյուղում հենց կոլխոզնիկների դաշտ գուրս գալու որը կուլակները իրենց արբանյակների ոգնությամբ սպանել են 7 ձի:

Մի շարք գյուղերում կուլակները այժմ աշխատում են լարել կոլխոզնիկներին անհատ-գյուղացիների դեմ:

— «Խորհրդային իշխանությունը այժմ ավելի ուշադրություն ե նվիրելու անհատ-տնտեսավարներին, քան կոլխոզնիկներին: Ասում են, թե արդեն այնպիսի դեկրետ ե պատրաստվում, ըստ վորի կոլխոզնիկներին տալու յեն ամսական 30 ֆունտ հաց, իսկ անհատականներին—մի-մի փութ և նույնիսկ ավելի» («Բեգնուտա», 18 հուլիսի):

Վ. Արխովուբ (Ստավրոպոլի շրջան) գյուղի կուլակները կոլխոզնիկների մեջ ուժեղ թափով լուր են տարածում, թե կոլխոզնիկները իրենց բերքից վոչինչ չեն ստանալու, թե նրանց ամբողջ բերքը վերցնելու յե պետությունը, և առաջարկում են հացը հավաքել ըստ շերտերի: («Պրագդա», 15 հուլիսի):

Կոլխոզնիկների բերքահավաքի կամպանիային անպատրաստ լինելու հանգամանքից ոգտվելով, Ստավրոպոլի շրջանում կուլակները ուժեղացրել են իրենց ազիտացիան կոլխոզներից դուրս գալու և բերքը բաժանելու մասին: Ստավրոպոլի շրջանի Ներքին-Զիրակիյ ույանում յեղել են ջրհորների թունավորման դեպքեր կուլակների կողմից: Գերմ. հանրապետության, կամենակիյ կանտոնի Նորկի գյուղում կուլակները գիշերով բաց են թողել տավարը կոլխոզային ցանքսերի վրա: Վնասվել ե մի քանի տասնյակ հեկտար ցորեն:

Կիւկի շրջանի «Բոյլշեվիկ», «Նեղամոժնիկ» և այլ արտելներ կուլակային ադխտացիայի ազդեցության տակ աշնանացանը հավաքում են անհատական կարգով:

Պոլողի գյուղի կուլակները՝ Յանենկո, Բուցուրյասով, Շտյոպա Տիխոն, վոր սխալությամբ վերականգնվել ելին իրենց իրավունքների մեջ, գլուխ են բարձրացրել և համառորեն պահանջում են վերադարձնել իրենց գույքը, սպառնալով կոլխոզնիկներին («Պրավդա», 22 հուլիսի):

Հոկտիմբերյան հեղափոխության 12-րդ տարեդարձի անվան կոլխոզը (Բալաշովսկիյ շրջան) միացնում ե բոլոր տնտեսությունների կեսը. մյուս կեսը կոլխոզից դուրս ե յեկել. Այդ դուրս գալու հոսանքը, ինչպես տեղական շատ կոլխոզներում, գուգաղիպեց գարնանացանին Յանքսը վորոշեցին միասին կատարել, իսկ «հետո ինչ կլինի—կտեսնենք»:

Այժմ ամենահրատապ հարցը բերքահավաքի կազմակերպման կարգն ե: Դրա շուրջը լարված պայքար ե ծավալվում: Կուլակը բոլոր ուժ ու ջանքն ե լարում միացյալ բերքահավաքը վիմեցնելու համար: Կուլակի «ծրագիր-մինիմում»-ը սա յե՞-պահանջել, վորպեսզի «դուրս յեկածների» համար ընդհանուր մասսիվից բաժին ջոկվի ըստ «ուտողի» հողաբաժինների նորմայի, այդ ջռկված բաժնի վրա բերքահավաքը կատարել «դուրս յեկածների» բանվ. ուժով, կալսել առանձին:

Կուլակի ճկունությունը արտասովոր մեծ ե: Նա պատրաստ ե այժմ ոգտագործելու կոլխոզային ամեն տեսակի ձեերը, վորպեսզի հարված հասցնի իսկական կոլխոզներին:

Նա կազմակերպում ե անհատ-տնտեսավարներին ինքնուրույն հասարակական բերքահավաքի համար «մեքենա-տրակտորային կայանի հիման վրա» և միենույն ժամանակ կոլեկտիվ ցանքսի կոլխոզնիկների և անհատականների միջև բաժանելու անհրաժեշտությունը ամրապնդում ե նրանով, թե հակառակ դեպքում մեքենա-տրակտորայինը ամեն ինչ իրեն կվերցնի, իսկ գյուղացիներին կնստեցնի սոված պայոքի»:

Կուլակի մանյովը պարզ ե: Քանդել կամ, ծայրահեղ դեպքում, թուլացնել կոլխոզը, լարելով կոլխոզնիկների և անհատավարների փոխհարաբերությունները, բարդացնել կոնտրակտացիայի և հացամթերման պայմանագրերի իրագործումը:

Կուլակը ասում ե անհատ-տնտեսավարին՝ «Ոգտվիր լավ բերքից, հավաքիր այն ՄՏԿ-ի մեքենական ուժով և փախիր կոլխոզի ընդհանուր ցանքսի ծախսերին մասնակցելուց, կոնտրակտացիայի պարտավորություններից, տար «ուտողի» բաժինով բերքը քո մառանը...» («Սոցիալիստիչեսկոյե Զեմեդելյուս», 18 հուլիսի):

VI. ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԱՄՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՍԻԱԼՆԵՐԻ ԴԵՄ

«Կոլխոզային շարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» բանաձեկի մեջ Համ. ԿԿ (բ) XVI համագումարը մեծ պարզությամբ ու ցայտունությամբ ձևակերպեց այն հիմնական դրությունները, վորոնցով պետք ե ուկալարվի մեր կուսակցությունը կոլխոզային շարժման հաջողությունների ամրացման և նրա հետագա ծավալման աշխատանքի մեջ:

«Կոլեկտիվացման բնագավառում ձեռք բերված հաշողությունների ամրացումը — ասված ե համագումարի բանաձևում — և կոլեկտիվացման հետագա զարգացումը այդ հիման վրա հնարավոր են միայն այն դեպքում, յեթե պրակտիկայում անշեղ գործադրվեն կոլխոզային շարժման հետևյալ արմատական մարքսիստական մարդարարության սկզբունքները, վորոնցից շեղվելը ծանրագույն հանցագործություն ե պրոլետարական դիկտատուրայի առաջ»

1. Կոլխոզները կարող են կառուցվել միայն կամավորության հիման վրա։ Զքավորմիջակային մասսաների նկատմամբ, նրանց կոլեկտիվներին միացնելու նպատակով բոնություն կամ վարչական հարկադրանք գործադրելու ամեն մի փորձ կուսակցության գծի կոպիտ խախտումն ե նշանակում և իշխանությունը ի չարը գործադրել։

2. Ներկա շրջանում կոլխոզի հիմնական ձևն ե գյուղատնտեսական արտելը։ Պահանջել, վորպեսզի գյուղացիները, արտել մտնելով, անմիջապես հրաժարվեն բոլոր անհատական սովորություններից ու շահերից, հասարակականին լրացուցիչ անձնական տնտեսություն վարելու հնարավորությունից (կով, վոչխար, թուչուն, ագարակային բանջարանոց), կողմնակի աշխատավարձը իր համար ոգտագործելու հնարավորությունից և այլն, — նշանակում ե մոռանալ մարքսիզմ-լենինիզմի այբուբենը։

3. Կոլխոզի ձեր պետք ե համապատասխանի ու այսի տնտեսական առանձնահատկություններին և տնտեսության ճյուղին։ Վոչ հացահատիկային բնույթ կրող մի քանի շրջաններում, այլ և Արևելքի ազգա-

յին շրջաններում, արտելների հետ միասին առաջին ժամանակները կարող ե մասսայական տարածում ստանալ հողի հասարակական մշակման ընկերությունը, իրեւ արտելին անցնելու ձև։

4. Կոլխոզային շարժումը կարող ե բարձրանալ իր բարձրագույն ձևին — կոմունային — տեխնիկական բազայի բարձրացման, կոլխոզային կադրերի աճման և կոլխոզնիկների կուլտուրական առաջխաղացման համապատասխան և այն անհրաժեշտ պայմանով, վորպեսզի գյուղացիները իրենք ընդունեն համապատասխան փոփոխությունները կանոնադրության մեջ և այն իրագործեն ներքելից։

5. Աշխատանքի ամենաբարձր արտադրողականությանը հասնելու համար անհրաժեշտ հասարակական դիսցիպլինը հնարավոր ե ստեղծել կոլխոզներում միայն կոլխոզնիկների խսկական ինքնագործներության և նրոնց՝ կոլեկտիվի տնտեսության վարչության մեջ ակտիվ մասնակցելու հիման վրա։

6. Կոլեկտիվ հողագործության անցնելը հնարավոր ե իրագործել, ինչպես այդ քանիցս մատնանշել ե լենինը, միայն այն դեպքում, յեթե կոլխոզներին լայն կազմակերպչական, նյութական և ֆինանսական ոգոնություններուն տրվի խորհրդային պետության կողմից։

«Յուրաքանչյուր հասարակակարգ ստեղծվում ե միայն վորոշ դասակարգի ֆինանսական աջակցությամբ» (Լենին, — Կոոպերացիայի մասին — հատ. X V III, մաս II, եջ 141)։

7. Սովխոզների վարչության կազմակերպչական սիստեմը կոլխոզները փոխադրելու ամեն մի փորձ

հակալենինյան ե, վորովհետև կովսողը պետ ական ձեռնարկություն չե, ստեղծված պետության միջոցներով, ինչպես սովխողը, այլ գյուղացիների կամավոր հասարակական միություննե, ստեղծված հենց իրենց՝ գյուղացիների միջոցներով, սրանից բղովող բոլոր հետեւանքներով:

8. Անհատական տնտեսությունից կոլեկտիվ տնտեսության անցնելը կարող է իրագործվել միայն բանվոր դասակարգի ու չքավորության դաշինքի հիման վրա միջակի հետ. դա պարտավորեցնում է սիստեմատիկաբար քաշել միջակներին կոլխոզային դեկավարության մեջ:

Կովսողային շինարարության պրակտիկայում 1930 թ. գարնանը Խորհրդային Միության մի շարք ռայոններում, շրջաններում և հանրապետություններում թույլ ելին տվել շատ սխալներ և կոլեկտիվացման վերաբերմամբ կուսակցության տված դրույթների և հրահանգների աղավաղումներ: Այդ սխալները և աղավաղումները առանձնապես տարածված ելին սպառող շերտի շատ ռայոններում, այլ և Խորհրդային Միության արևելքի ազգային հանրապետություններում և շրջաններում:

«Այդ սխալները և աղավաղումները արտահայտվում ելին կովսողների կառուցման ժամանակ միջակների ու չքավորների վերաբերմամբ հարկադրանքի և բռնության միջոցներ գործադրվելու մեջ. արտելների անդամների լոկ սպառողական նշանակություն ունեցող մանր տափարի և կովերի համայնացման մեջ. վոչ հացահատիկային ռայոններում կոլեկտիվացման այնպիսի տեմպեր կիրառվելու մեջ, վորոնք արդա-

րացրել ելին իրենց հացահատիկային ռայոնների փորձով և միայն այդ ռայոնների համար նախատեսնված ելին կենտկոմի վորոշումներով. շուտափույթ կերպով, առանց համապատասխան նյութական և կազմակերպչական պատրաստության, կոմունաներ թիւելու մեջ. «գիգանտ» կովսողների անվան տակ անկենսունակ, հրամանատվության սկզբունքների հիման վրա կառուցված բյուրոկրատական կազմակերպություններ ստեղծելու մեջ. կովսողների համար կառավարության կողմից նշանակված կրեղիտների ուշացման և կովսողներին կառավարության տրամադրած արտոնություններից զրկելու մեջ. կովիտ վարչարարության մեջ կովսողների և կովսողների վերաբերմամբ, ընտրողականությունը նշանակումներով փոխարինելու և վերեկից հրամաններ արձակելու մեջ. միջակին հաշվի չառնելու, նրան անտեսելու և նրա տնտեսական փորձառությունը չոգտագործելու մեջ. կուլակի դեմ ուղղված սպայքարի միջոցները («ապակուլակացումը», ձայնազրկությունը և այլն) միջակի վրա փոխադրելու մեջ»: (Համագումարի բանաձեց):

Տեղաեղ կոլեկտիվացման աշխատանքում գործադրվում ելին այնպիսի մեթոդներ, ինչպես վերեկից դեկրետներով կովսող կառուցել, կովսող ստեղծել մարտական հրամանի կարգով մի քանի որում, նույնիսկ — այս ինչ ժամկին, գյուղացիներին կովսող քշելը դատարանի, ձերբակալման, Սոլովկի աքսորելու, ապրանքի բացթողումը ընդհատելու, ապակուլակացման և այլ սպառնավեճների տակ: Տեղի ուներ նաև կոլեկտիվացում տարածության վրա և մրցումներ ամենամեծ թվով կովսողներ թիւելու և նրանցով ամենամեծ

թվով գյուղացիական տնտեսություններ ընդգրկելու գործում:

«Սունովսկիյ ռայոնի (Բեժեցկիյ շրջան) ցանքսային յեռյակը փետրվարի 15-ին հրատարակեց «մարտական հրաման Ն 2», վորի մեջ ասված ե՝ —

«Հրամայում եմ՝ — § 2) կոլխոզների կազմակերպությունը տարածել ռայոնի բոլոր բնակավայրերում, մոքիլիզացիայի յենթարկելով այդ աշխատանքի շուրջը չքավորներին ու բատրակներին»:

§ 5) Մասսայական աշխատանք ծավալել բատրակների ու չքավորության մեջ։

§ 6) Փետրվարի 20-ին, առավոտյան ճիշտ ժամը 9-ին լինել գործկոմում զեկուցելու իրազործման մասին, ներկայացնելով ցանկը։

§ 7) Առաջադրանքը չիրագործելուն արդարացում չկա։

Զիրագործողներին դատի յեմ հանձնում 24 ժամվա մեջ։

Ռայցանյեռյակի նախագահ Բրուգիս
Համ. ԿԿ (թ) ռայկոմի քարտուղար Կուզմին։
(«Եղվեստիյա», 25 մարտի)

Սունովսկիյ քյալլագյոզներից յետ չի մնացել և Կաշինսկիյ ռայոնի ղեկավարությունը։ Կաշինսկիյ «մարտական» հրամանի առաջին կետը ասում ե՝ — «Գյուղացիական բոլոր տնտեսությունների կոլեկտիվացումը վերջացնել 1930 թ. մարտի 1-ից վոչ ուշ։ Առաջադրած ինդրի հաջող լուծման համար առաջարկվում ե գյուղնորհգների նախագահներին և գյուղական ամբողջ ակտիվին աշխատել ամբողջ որը»։

«Կարա-բելլը գյուղում (Մինուսինսկիյ շրջան) վագորը — ռայկոմի բյուրոյի անդամ Գոխչչուկը գյուղացիական ժողովում քվեարկության ե դնում այսպիսի հարց՝ — «Ով դեմ ե խորհրդային իշխանության և համատարած կոլեկտիվացման, ձեռք թնդ բարձրացնե»։ Յեվ քանի վոր վոչ վոք ձեռք չբարձրացրեց, վորոշեցին, վոր գյուղը անցավ համատարած կոլեկտիվացման»։ («Կրեստյանսկայա գաղետա» 16 մարտի):

«Պոլյանը գյուղում (Կալուժմակիյ շրջան) տեղի յեն ունեցել կոլխոզ չմտնող միջակների մասսայական ձերբակալումներ, Զյաբկի գյուղում շրջել են բոլոր չքավորական տնտեսությունները և ստորագրություն հավաքել, թե նրանք բոլորը կոլխոզների կողման են։ Ռազդում բելով և Ուստկին բրիգադիրները հայտարարել են գյուղացիներին, թե ով վոր կոլխոզ չգնա — վաղնիսկ կուղարկվի Սոլովկի կամ Մարսի վրա» («Կոմսոմոլսկայա Պրավդա», մարտի 28-ին):

«Լիխոսավլսկիյ, Յեմելյանովսկիյ և Տուրչինովսկիյ ռայոններում (Տվերսկոյ շրջան) գործադրվում են կոլխոզ չմտնողներին ահաբեկելու մեթոդներ, ընդհատվում եր մթերքների բացիթողումը կոռակերատիվից»։

«Տվերի շրջանակին առողջ բաժինը հիվանդանոցներին կարգադրություն ե տվել, վորի իմաստը կայանում ե նրանում, թե կոլխոզ չմտնողներին չպետք ե բժակել» («Եկոնոմիչեսկայա Ժիզն», մարտի 25):

«Կոլխոզային շինարարության տեմպը ուժեղացնելու նպատակով մարտի 15-ից մինչև ապրիլի 15-ը հայտարարվում ե գյուղատնտեսության կոլեկտիվացման մրցում» — այդպես ե սկսվում Պոլիստյան շրջանի (Նովգորոդսկիյ շրջան) գարնանացանի կամպանիան

անցկացնող շտաբի բաց թողած հայտարարությունը։ Մրցմանը մասնակցելու հրավիրված են կազմակերպությունները և առանձին աշխատավորներ։ Մրցման պայմաններն են՝

1) Բատրակներին ու չքավորներին 100 տոկոսով կովող քաշել։

2) Ընդգրկել ույսինի տնտեսությունների «վոչ պակաս», քան 50 տոկոսը»։

3) Առանձին գյուղերի կոլեկտիվացումը 100 տոկոսով (բացի կուտակություննից)։

4) Համայնացնել «100 տոկոսով արտադրության բոլոր միջոցները»։

5) Կազմակերպել կոմունա «խոշոր հողամասի վրա»։

Մրցանակներն են՝ — տրակտոր, ձի, կով, «իրեր» (ինչպիսի իրեր — հայտնի չե), մրցանազրեր»։ («Սոցիալիստիկոյե Զեմլեդելիյե», 23 մարտի)։

Ինչով կարելի յե բացարել քյալազյողների և «ուռա»-կոլեկտիվատորների այդ հանցագործ աշխատանքը։

Կոլխոզային շինարարության մեջ այդորինակ մեթոդներ գործադրող աշխատավորների ահազին մեծամասնությունը, ինարկե, կուսակցությանը նվիրված մարդիկ են, վոր անկեղծորեն համոզված եյին, թե նրանք վոչ թե հանցանք են գործում, այլ կուսակցական գործ են անում, իրագործում են կուսակցության հրահանգները, պայքարում են գյուղի սոցիալիստական վերակառուցման համար։

Բայց այդ աշխատավորների մեղքը և ցավը կայանում ե նրանում, վոր նրանք մոռացել են կուսակցության գյուղացիական քաղաքականության հիմքերը։

Նրանք մոռացել են, վոր չքավորությունը — մեր հենարանն ե, միջակը — մեր դաշնակիցն ե, իսկ կուլակը — մեր վոլությունը թշնամին։ Յեկ մոռանալով այդ, նրանք միջակին — գյուղացիության հիմնական մասսային, մեր դաշնակցին մոտեցան, իբրև իբենց թշնամու։

«Կարողանալ համաձայնության գալ միջակ գյուղացիության հետ, վոչ մի ըսպե չիրաժարվելով կուլակի դեմ պայքարելուց և հաստատ հենվելով միայն չքավորության վրա» — Լենինի* և մեր կուսակցության այդ ցուցմունքը նրանք — այդ աշխատավորները մոռացության եյին տվել։

Նրանք մոռացել եյին և այն, վոր «չկա վոչինչ ավելի ախմար, քան միջին գյուղացիության տնտեսական հարաբերությունների բնագավառում բռնությամբ գործ տեսնելու հենց միտքը» (Լենին)։

«Սյստեղ բռնությամբ վոչինչ չես ստեղծի։ Բռնությունը միջին գյուղացու վերաբերմամբ մեծագույն վասա ե ներկայացնում իրենից» (Լենին)։

«Ամենից ավելի մենք պետք ե հիմնվենք այն ճշմարտության վրա, վոր այստեղ բռնության մեթոդներով ըստ եյության վոչինչ չի կարելի անել։ Սյստեղ բռնությամբ գործել նշանակում ե կործանել ամբողջ գործը։ Սյստեղ պետք ե յերկարատև դաստիարակչական աշխատանք»։

«Պետք ե նախ ապացուցել, վոր այդպիսի միացումը ավելի լավ ե. միացնել մարդկանց այնպես, վորպեսզի նրանք իսկապես միանան և վոչ թե թքով կպցվեն. ապացուցել, վոր այդ ձեռնուու յե» (Լենին)**։

* Լենին — հատոր XV, եջ 524։

** Լենին — հատոր XV, եջ 150, 151, 152։

Նրանք — այդ աշխատավորները — մոռացել են, վորքել գյուղացիներին կովսող, յերբ նրանք իրենք դեռ չեն գիտակցել միության անհրաժեշտությունը, հիմար, վսասակար ու հանցավոր գործ եւ Նրանք մոռացել են, վոր հաստատ, ամուր և կայուն կլինեն միայն այն կոլխոզները, վոր ստեղծված են կամավորության հիմքերի վրա, կազմակերպված են այն մարդկանցից, վորոնք հասկացել են կոլեկտիվ տնտեսավարության առավելությունները և ձեռնտվությունը:

Նրանք — այդ աշխատավորները, տեսնելով գյուղացիների մասսայական դիմումը կովսող, յերկակայել են, թե արդեն չքավոր ու միջակ զյուղացիների ամբողջ մասսան գիտակցել ե կոլխոզների կազմակերպության անհրաժեշտությունը և բավական ե մեկ հրաման չքավոր-միջակային բոլոր տնտեսությունների համատարած կոլեկտիվացման համար:

Այդ աշխատավորները, արբեցած կոլխոզային շարժման հաջողություններից, գերազնահատեցին իրենց ուժերը, թերազնահատեցին կոլխոզային շինարարության դժվարությունները և, թե առնելով շրջաններից ու ռայոններից տրվող հրահանդներով կոլեկտիվացման տեմպերի մասին, առաջ մղվեցին, համոզելու փոխարեն հրամանների դիմելով: Իսկ ուր չեր ոգնում հրամանը, այնտեղ գործի ելին դրվում հարկադրանքը, սպառնալիքները և այլ այդորինակ հանցագործությունները:

Տեղադր «կոլեկտիվացման» այդ հանցագործական մեթոդները մոչ միայն այս կամ այն աշխատավորների մոլորության և տիմարության հետևանք ելին, այլ և դասակարգային թշնամու — կուլակության պրո-

վակացիայի հետևանք: Տեղադր կուլակը դուրս երգալիս ամենաժիր «ուռա-կոլեկտիվատորի» դերում: Տեղադր կուլակը աշխատավորների հարվածները, նրանց վարչական յեռանդը ուղղում եր միջակի ու չքավորի դեմ, կուլակը իր տեսակետից շատ ուղիղ հաշվում եր, թե վորքան ավելի ուժեղ լինի վարչական ճնշումը միջակի վրա, վորքան ավելի խայտառակ գործողություններ լինեն, վորքան ավելի այլանդակորեն աղավաղվի կուսակցության քաղաքականությունը, այնքան ավելի շուտ և ուժգնորեն կտատանուի միջակը կուլակի կողմը, այնքան ավելի շուտ կվարկաբեկվի կոլխոզային շինարարությունը, այնքան ավելի արագ կքայքայվեն կոլխոզները, այնքան ավելի կշահե և կամրապնդվի ինքը կուլակը: Յեվ մի շարք ռայոններում ու շրջաններում կուլակի հաշիվսերը արդարացան, Սկսվեց գյուղացիների տեղատվությունը կոլխոզներից, դեկրետներով հրահանգված, ստիպողաբար և մրցումների միջոցով ստեղծված կոլխոզների քայլայումը:

Այդպես 1930 թ. գարնանը մի շարք ռայոններում և շրջաններում հաջողություններից արբեցած քյալլագյոզները փորձում ելին կոլխոզներ կառուցել և, բնականաբար, իրենց սպասածներին միանգամայն հակառակ հետևանքների ելին հասնում: Սակայն, «ուռա-կոլեկտիվատորների» հանցագործությունը արտահայտվում եր վոչ միայն ուժով կոլխոզներ սարքելու, գյուղացիներին կոլխոզներ քշելու, կոլխոզային շինարարության մեջ կամավորության սկզբունքը խախտելու մեջ: Նա ավելի հեռուն եր գնում, լայնանալով ու խորանալով:

Շատ ռայոններում ստեղծում եյին միայն կոմունաներ, մոռանալով, գիտենալ չուզենալով կամ չհասկանալով, վոր վոչ թե կոմունան, այլ գյուղատնտեսական արտելն եներկա ժամանակաշրջանում կոլխոզային շարժման հիմնական ողակը:

Հաջողություններից զինովցած, խելակորույս և
անբարդավան քյալլագյողները կորցրին առողջ դա-
տելու և շրջապատի պայմանները ըմբռնելու ընդու-
նակությունը։ Նրանց թվում եր, թե նրանք «ամեն ինչ
կարող են», թե նրանց համար ամեն ինչ դատարկ բան ե:
Իսկ քանի վոր այդպես ե, ել ինչ կարիք կա գլուխ
ցավեցնել մի ինչ - վոր գյուղատնտեսական արտելի
հետ — ուղղակի կոմունային անցիր, վոստնե կովառ-
զային շինարարության ամենաբարձր ողակին, թքիր
ստորին (հողը համայնորեն մշակելու ընկերություն)՝
և միջին (արտել) ողակների վրա, համայնացրու
ամեն ինչ, վոր կա գյուղացիական տնտեսության
մեջ։ Իսկ թե ինչ են մտածում այդ մասին իրենք
գյուղացիները, արդյոք ցանկանում են նրանք կո-
մունա — դա կարեոր չե, դա չի անհանգստացնում
քյալլագյողներին։ Յեվ նա մղվում եր առաջ — միայն
դեպի կոմունան, դեպի գիգանտ - կոմունան, դեպի
կոմունան ուայոնի և շրջանի մասշաբարով։

«Բոլոտնինսկիյ ռայոնում (Տոմսկիյ շրջան) գյուղատնտեսական արտելը համարում ենին կոլեկտիվացման արդեն անցած, հնացած ձև, չեյին թույլատրումնրանց կազմակերպությունը և լոկ կոմունաներ ստեղծելու ընթացքն եյին բունել։ Մանույլովկայում մոտմի շաբաթ նստել եր ցանքսային կամպանիայի բըրդգաղը. գյուղացիները ուզում եյին արտել ստեղծել, իսկ

բրիգադը վոչ մի կերպ չեր համաձայնում ձևակերպել
արտելի կազմակերպությունը՝ — «արտելը հնացել ե.
ստեղծեցեք կոմունա — այն ժամանակ հձևակերպենք»
(«Բեղնուա», 21 մարտի):

«Շացկինսկիյ ռայոնում (Ոյխանի շրջան) արգելել են արտելներ կազմակերպել և թույլատրել են սաեղծել միայն կոմունաներ։ Ընդամենը ռայոնում ստեղծված եր 5 կոմունա, իսկ քաղաքը կազմում եր վեցերորդ կոմունան։ Կոմունայի մեջ մտնել հրաժարվողներին սպառողական կոռպերացիան բաց չեր թողնում փոչ մի մթերք։ Այդպիսի ճնշման շնորհիվ կոմունաների մեջ կազմակերպված եր ազգաբնակչության 72%-ը, Գյուղատնտեսական արտելների կազմակերպության ոգտին արտահայտվողները տուղանքի ելին յենթարկվում։ Բանը այսուղ հասավ, վոր չքավորները ստիպված ելին անեղաղաղ ժողով կազմակերպել արտելի կանոնադրությունը քննելու համար» («Պրակտա», 22 մարտի):

«Բարձր ցուցանիշների յետևից ընկած, Փյոդորովսկից
ույզողոծկոմի (Կուստանայի շրջան) աշխատավորները
վորոշել են ամբողջ ռայոնը վերածել կոմունայի, վոստ-
նելով գ. -ա. արտելի վրայից։ Առանց յերկար մտա-
ծելու, Շքչագործկոմը լիկվիդացիայի յե յենթարկում
ռայոնի արտադրական միությունները և նրանց բոլոր
անդամներին արձանագրում ե կոմունայի մեջ։ Այդ
«ոպերացիան» կատարվում ե գերհարփածային կար-
գով, մի քանի որվա ընթացքում։ Կուլակները չուշա-
ցան ոպտագործելու այդ պատուհաս-կոլեկտիվիզատոր-
ների տիմարությունը և բարձրացրին կատաղի հակա-

կոլխոզային կամպանիա։ Սկսվեց ընդհանուր փախուստ կոմունայից» («Մոց. Զեմլեդ.», 22 մարտի):

Մի շարք ռայոնների ու շրջանների այդորինակ
ռուռաց հեղափոխական տրամադրությունների և ուղ-
ղակի դեպի կոմունան ակրոբատային վոստումների
պայմաններում անխուսափելի յեր պատուհաս-կոլեկ-
տիվիզատորների նույնչափ «արագ» տեմպը կամովին
կոլխոզ մտած կամ ուժով կոլխոզ քշված գյուղացի-
ների արտադրության միջոցների ու գործիքների և
նրանց գույքի համայնացման գործում։ Այստեղ ևս
ռայոններից շատերը ցուցադրեցին զարմանալի սա-
կավամտության նմուշներ։

«Մարտի Յին Զանքոյի շրջկործկոմը (Ղըիմ) ուղարկեց բոլոր գյուղխորհներին և կոլխոզկուստերին հրահանգ, վորով կատեղորիկ առաջարկ եր արվում համայնացնել կոլխոզներում մանր անասունները ու թռչունները» («Կրասնիյ Ղըիմ», 16 մարտի):

«ԲԵԺԵՑԿԻՒՅ ԱՐԴԳՈՐԾԼԿՈՄԸ հրահանգել ե տեղերին համայնացնել բոլոր կենդանական աշխարհը, նույնիսկ մեղուներին» («Առց. ԶԵՄԼԻՂ.», 12 ապրիլի):

Ում եր հարկավոր և մւս կողմից եր թելադրված
այդ զարմանալի պլակտիկան, ինարկե, միայն կուլա-
կության, մեր դասակարգային թշնամու,

Այդ հանցագործ պրակտիկան, վոր վարկաբեկում
և քայլքայում եր կոլխոզները, գյուղացիներին փախ-
ցնում կոլխոզներից, կասեցնում նրանց վատահությունը
դեպի կոլխոզները, աճեց տեղական աշխատավորների
հաջողություններից առաջացած գլխապտույտի, ինքնա-
հավանության, տարվածության հողի վրա, այն յեն-
թագրության վրա, թե հրամանի ու հարկադրության

միջոցով հնարավոր ե ամեն ինչ անել, գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրը «մեկ շնչով», մի հարկածով լուծելու ցանկության դեպքում:

Այդ «Ճախ» տրամադրությունները, վոր ծնում են «Ճախ» պրակտիկա, վոստումներ դեպի անհայտը, կուսակցության քաղաքականության խոտորումներ և աղավաղումներ, ձեռնատու յեն միայն կուլակներին և նրանց գործակալներին մեր կուսակցության մեջ — աչ ոպորտունիստներին:

«Զախ» պլրակտիկան սնուցանում են չքավորության մեծ մասի և... կուլակության հակամիջակային տրամադրությունները։ Մի շարք տեղերում չքավորության մեջ բավականաչափ ուժեղ են յեղել սպառողական, հավասարացման տրամադրությունները, ամեն ինչ համայնացնելու, ամեն ինչ բաժանելու, ամեն ինչ հավասարեցնելու ցանկությունը։

Զքավորության մի մասի այդ անսառողջ տրամադրությունները վոչ ամեն տեղ և վոչ ամեն անգամ գտնում եյին հարկավոր գնահատում և ընդդիմադրություն։ Այն ինչ այդ տրամադրություններին, վոր պատճեն են քաշում չքավորության ու միջակների միջեւ, ստեղծում են նրանց մեջ թշնամական հարաբերություններ, ուժեղացնում են միջակի տատանումները, թուլացնում են կալիսպային մասսաների ուժերը, որպես յեկափորեն ամրացնում են կուլակության դիրքը — չքավորության մեկ մասի այդ հակամիջակային տրամադրություններին պետք է տալ արժանի գնահատություն և վճռական հականարգած։

Կոլլագների և պրոլետարական պետության դաս
պայքարելիս կուլակությունը արտաքերում է մեծ

ճկունություն։ Նա յերբեմն պրովակացիոն դիտումներով հորդորում ե բատրակներին ու չքավորներին ստեղծել միայն կոմունաներ, համայնացնել կոլխոզնիկերի ամբողջ գույքը։ Նա զու ե տալիս բատրակ ու չքավոր կոլխոզնիկների հավասարական տրամադրություններին։ Ինչու համար։

Վորպեսզի բատրակին ու չքավորին կովեցնի միջակի հետ, փորը չի ուզում ուղղակի կոմունա գնալ, չի ուզում բաժանել իր գույքը. վորպեսզի առաջ բերի և ուժեղացնե միջակի փախուստը կոլխոզներից, հետևաբար — կոլխոզների քայքայումը։

Այդպիսով կուլակը, փորձելով լարել միջակի հարաբերությունները բատրակների ու չքավորների հետ, պայքար ե մղում միջակի համար, ձգտելով ուժեղացնել իր աղդեցությունը նրա վրա, քաշել նրան իր կողմը։ Կուլակը շատ լավ հասկանում ե (անհամեմատ ավելի լավ, քան «ձախ» քյալլագյոզները կոմունիստներից և խորհրդային աշխատավորներից), փոր պայքարի այս կամ այն վախճանը կախված է նրանից, թե ուժ հետ ե միջակը, փոր միջակին իր կողմը քաշել նշանակում ե կանխորոշել պայքարի վախճանը, նշանակում ե տանել կոիվը։

Միջակի համար տարվող պայքարի մեջ «ձախ» ուռակոլեկտիվատորները և ավանտյուրիստները անգնահատելի ծառայություն են մատուցում կուլակին։ Հենց այդ պատճառով «ձախ» հակամիջակային տրամադրությունների և «ձախ» պրակտիկայի դեմ պետք ե կովել վճռականորեն, համառությամբ և անընդհատ։

«Ձախ» քյալլագյոզները առատաձեռն ջուր են լիցնում աջ ոպորտունիստների ջրաղացին։ Այդպիսով,

պայքարը նրանց դեմ դառնում ե միաժամանակ և պայքար աջ ոպորտունիզմի դեմ, վորը շարունակում ե մնալ գլխավոր վտանգը սոցիալիստական շինարարության գործում։ Պայքարը յերկու ֆրոնտի վրա՝ աջ և «ձախ» ոպորտունիստների դեմ, այլ և դեպի այդ թերությունները ունեցած հաշտվողական վերաբերմունքի դեմ պետք ե մղել անդուլ ու յեռանդուն։

Կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիայի խնդրում համատարած կոլեկտիվացման շրջաններում կուսակցության լոգունգի գործնական կիրառման ժամանակ ևս տեղերում թույլ ելին տրված թեքումներ ու խոտորություններ։ Կուսակցության հրահանգներին հակառակ, կուսակցական կազմակերպություններից մի քանիսը վորոշել ելին ապակուլակացումը իրականացնել համատարած կոլեկտիվացումից անկախ, վոչ թե նրա հիման վրա, այլ մինչեւ այն, վոչ միայն համատարած կոլեկտիվացման շրջաններում, այլ ամենուրեք։

Այդպիսի պայմաններում կուլակային տնտեսությունների լիկվիդացիան անխուսափելիորեն դառնում եր մերկ ապակուլակացում, լոկ վարչական կարգով, ապակուլակացում, վորը կատարվում ե առանց հենապակուլակացում, մասսաների վրա, նրանց նույնիսկ բացավելու մասսաների վրա, ապայմաններում՝ դեպի այդ սական վերաբերմունքի պայմաններում դեպի ապակուլակացվող բերմունքի պայմաններում դեպի ապակուլակացման այդորինակ մեթոդկուլակը։ Իսկ ապակուլակացման վերաբերմունքի պայմանների մեջ պարունակված ե անթիվ սխալներ կատաների մեջ պարունակված պայմաններին կուլակին, այլ և միջակին ըելու վտանգը, վոչ միայն կուլակին, այլ և միջակին չքավորությանը հարվածելու վտանգը։

Այստեղ միանգամայն իրական ե կուլակների դեմ
ուղղված հարվածների միջակի վրա փոխանցվելու
վտանգը, կուլակային տնտեսությունների լիկվիդա-
ցիայի համար կիրառվող մեթոդները ու միջոցները միջա-
կային տնտեսությունների վրա փոխադրելու վտանգը,
Այստեղ վոչ միայն չի բացասակար, այլ և միանգա-
մայն հնարավոր ե կոլխոզների ստիպողական կազմա-
կերպությունը, գյուղացիներին ուժով, ապակուլակաց-
ման և այլ սպառնալիքների տակ կոլխոզ քշելը:

Այդ բոլորը հենց տեղի ունեցավ 1930 թ. գարնանը մի
շարք ռայոններում և շրջաններում, ուր կուսակցության
հրահանգները՝ կոլխոզային շինարարության կամավո-
րության, գյուղատնտեսական արտելի վրայից ուղ-
ղակի դեպի կոմունան վոստնելու անթույլատրելիու-
թյան, միայն համատարած կոլեկտիվացման շրջաննե-
րում ապակուլակացում կիրառելու մասին՝ յենթարկվել
ելին հանցագործ աղավաղումների:

Յեվ ի՞նչ եր հետևանքը: Ի՞նչ արդյունք ավին
ուռակոլեկտիվատորների այդ խայտառակ գործո-
ղությունները:

Նրանք ուժեղացրին միջակների տատանումները,
առաջ բերին միջակների փախուստը զոռով ստեղծ-
ված կոլխոզներից: Մի շարք շրջաններում կուսակ-
ցության քաղաքականության աղավաղումները և խո-
տորումները առաջ բերին կոլխոզների քայլացումը,
կոլխոզային շարժման վարկաբեկումը:

«Այդ սխալները — մատնանշում ե կուսակցության
XVI համագումարը — մի շարք շրջաններում առաջա-
ցրին վոչ միայն հակակոլխոզային յելութներ, այլ և,
առանձին դեպքերում, նրանց վերածվելը՝ կուլակու-

թյան ազդեցության տակ՝ հակախորհրդային յելութ-
ների: Ամենից ավելի անհանգստեցուցիչ եր այն փաստը,
վոր... կուսակցական կազմակերպությունների կողմից
հազվագյուտ չեն ստեղծված դրությունը քողարկելու
փորձերը, իրենց սխալները և պակասությունները
ճանաչելու և ուղղելու փոխարեն ամեն ինչ միջակի
տատանումներին վերագրելու փորձը»:

Ինչումն եր այդ սխալների, կուսակցության քա-
ղաքականության այդ աղավաղումների վտանգը, յեթե
նրանք չենթարկվելին լիկվիդացիայի վճռականորեն,
արագ և առանց մնացորդի:

«Յեթե այդ սխալները — ասված ե Համ. ԿԿ (թ)
XVII համագումարի բանաձեռնում — ժամանակին չուղղվե-
յին կուսակցության կենտրոնական կոմիտեյի կողմից
(կենտրոմի փետրվարի 20-ի, մարտի 10-ի, մարտի 15-ի,
ապրիլի 2-ի վորշումները և ընկ. Ստալինի «Գլա-
պուույտը հաջողություններից» ու «Պատասխան ընկեր-
պուույտը կողմաներին» հողվածները), — դա կոպառնար
կոլխոզներին հողվածները), — դա կոպառնար
գյուղատնտեսության կոլեկտիվացման գործը վիճե-
ցնել, փորել խորհրդային պետության հենց հիմ-
քը — բանվոր դասակարգի միությունը գյուղացիու-
թյան հետ:

«Կոլեկտիվացման պրակտիկայում թույլ տրված
սխալները ուղղելու համար կենտրոնական կոմիտեյի
ձեռք առած բոլոր միջոցները կայանում ենին, վերջին
հաշվով, դեպի միջակը ունեցած ուղղիղ լենինյան վերա-
բերմունքը վերականգնելու մեջ, վոր խախտված
մի շարք շրջաններում, կոլխոզային շարժման նվա-
եր մի շարք շրջաններում, կուլակության, իրեն դասա-
ճանումների ամրացման մեջ, կուլակության, կազմակերպության
կարգի, լիկվիդացիան համատարած կոլեկտիվացման

հիման վրա իրագործելու և միջակի հետ դաշնքը ամ-
րացնելու մեջ:

Կուսակցական և խորհրդային մարմինների սխալ-
ների ուղղման հետեւանքն եւ այն փաստը, վոր հացա-
հատիկային վճռող շրջաններում ցանքսերի հիմնա-
կան մասը անց են կացրել կոլխոզները, իսկ վոչ-
հացահատիկային շրջաններում անհատ տնտեսավար-
ները յեռանդով կատարում են ցանքսը. միևնույն ժա-
մանակ պահպանված են վորոշ թվով ամենից ավելի
կայուն կոլխոզներ, վորոնք կարող են դառնալ այդ
շրջանների հիմնական գյուղացիական մասսաների հա-
մար ապագա կոլխոզային շարժման կորիզը»:

V. ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՏԵՄՊԵՐԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ- ՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՍԱՐՔՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Մեր առաջ կանգնած են — ասում եր ընկ. Ստա-
լինը կուսակցության XVI համագումարում — գյու-
ղատնեսության հետեւյալ պրոբլեմները՝

1) Տեխնիկական կուլտուրաների դրության ամ-
րացման պրոբլեմը, համապատասխան շրջանները բա-
վական քանակով եժան հացամթերքներով ապահո-
վելու միջոցով։

2) Անասնապահության բարձրացման և մսի խնդրի
լուծման պրոբլեմը, համապատասխան շրջանները բա-
վարար քանակով եժան հացահատիկային մթերքներով
և կերերով ապահովելու միջոցով։

3) Հացահատիկային տնտեսության հարցի, իբրև
ներկա մոմենտում գյուղատնտեսության գլխավոր

Այդպիսով «դուրս ե գալիս, վոր հացահատիկային
պրոբլեմը գյուղատնտեսության միստեմի մեջ հիմնա-
կան ողակն եւ և վերջինիս բոլոր մյուս պրոբլեմների
լուծման բանալին» (Ստալին):

Իսկ ինչ ե անհրաժեշտ հացահատիկային պրոբ-
լեմի հաջող լուծման համար և ինչ հիմնան վրա կա-
րող ե նա լուծվել: Կարելի՞ յէ արդյոք լուծել հացա-
հատիկային պրոբլեմը գյուղացիական անհատական
մասը ու մանրագույն տնտեսության հիմնան վրա:

«Լուծել հացահատիկային պրոբլեմը — պատասխա-
նում ե այդ հարցերին ընկ. Ստալինը իր գեկուցման
մեջ կուսակցության XVI համագումարում — և դրա-
նով գյուղատնտեսությունը դուրս բերել լուրջ վե-
րելքի ուղին, — դա նշանակում ե արմատորեն լիկվի-
դացիայի յենթարկել գյուղատնտեսության յետամա-
ցությունը, զինել նրան տրակտորներով ու գյուղատնտ-
մեքենաներով, ապահովել գիտական աշխատավորների
նոր կազրերով, բարձրացնել աշխատանքի արտադրո-
ղականությունը, ավելացնել ապրանքայնությունը:
Առանց այդ պայմանների չի կարելի նույնիսկ յերա-
գել հացահատիկային պրոբլեմի լուծման մասին։

«Հնարավոր ե, արդյոք, իրականացնել այդ բոլոր
պայմանները գյուղացիական մասը անհատական տնտե-
սության հիմնան վրա: Վա՞զ, հնարավոր չե: Հնարավոր
չե, վորովհետեւ մանը գյուղացիական տնտեսությունը
անզոր ե ընդունելու և յուրացնելու նոր տեխնիկան,
անզոր ե բավարար աստիճանի բարձրացնելու աշխա-
տանքի արտադրողականությունը, անզոր ե բավարար
տանքի ավելացնելու գյուղատնտեսության ապրան-
չափով ավելացնելու գյուղատնտեսության ապրան-

չափով: Մնում ե մեկ ուղի — գյուղատնտե-
սությունը: Մնում ե մեկ ուղի — գյուղատնտե-

սության խոշորացման ուղին, խոշոր, ժամանակակից տեխնիկայով զինված տնտեսություններ ստեղծելու ուղին։ Սակայն, խորհրդային յերկիրը չի կարող կանգնել խոշոր կապիտալիստական տնտեսությունների կազմակերպության ճամբի վրա։ Նա կարող է և պետք է գնա խոշոր, սոցիալիստական տիպի, նոր տեխնիկայով զինված տնտեսությունների կազմակերպության ուղիյով։ Հենց այդպիսի տնտեսություններ են մեր սովորությունները և կոլխոզները։

«Սրանից բղիսում ե սովխոզներ կառուցելու և մանր գյուղացիական տնտեսությունները խոշոր կոլեկտիվ տնտեսությունների միացնելու խնդիրը, իրեւ առհասարակ գյուղատնտեսության և առանձնապես հացահատիկային պրոբլեմի լուծման միակ ուղին։

«Հենց այդ ուղու վրա և կանզնեց կուսակցությունը իր ամենորյա գործնական աշխատանքի մեջ XV համագումարից հետո, մանավանդ 1928 թվի սկզբին յեղած հացային լուրջ դժվարություններից հետո։»

1927 թվին ամբողջ Խորհրդային Միության մեջ կային 14.800 կոլխոզներ, 1928 թվին՝ 33.200, 1929 թ.՝ 61.000 և 1930 թ. գարնանը՝ 82.000։

1927 թվին կոլխոզները միացնում եյին 445 հազար չքակորմիջակային տնտեսություն, 1928 թվին՝ 1.040 հազար տնտեսություն, 1929 թ. վերջերին՝ 3 միլիոն տնտեսություն, իսկ 1930 թ. մայիսի մեջին կոլխոզները միացնում եյին $6\frac{1}{2}$ միլիոն տնտեսություն կամ մեր յերկրի բոլոր գյուղացիական տնտեսությունների քառորդ մասը։

1927 թվին կոլխոզների ցանքսաղաշտն եր 800 հազար հեկտար, 1928 թվին՝ 1,4 միլ. հեկտար, 1929 թ.՝

4,3 միլ. հեկտար և 1930 թ. գարնանը — 36 միլիոն հեկտար։

Հացահատիկային կուլտուրաների ընդհանուր բերքն եր կոլխոզներում 1927 թվին 4,9 միլիոն ցենտներ և նրա ապրանքային մասը — 2 մլն. ցենտներ. համապատասխան թվերն ելին՝ 1928 թվին — 8,4 և 3,6 մլն. ցենտ., 1929 թվին — 29,1 և 12,7 մլն. ցենտ., իսկ 1930 թվին հացահատիկային կուլտուրաների ընդհանուրը 256 մլն. ցենտ. (1.550 մլն. փութ), իսկ նրա ապրանքային մասը — 82 մլն. ցենտ. (500 մլն. փթից ավելի)։

Ի՞նչ են ասում այդ թվերը։

«Նրանք ասում են նախ և առաջ այն, վոր հացահատիկային կոլխոզների ընդհանուր արտադրանքը յերեք տարվա ընթացքում աճել ե ավելի, քան 60 անգամ, իսկ ապրանքայինը — ավելի քան 40 անգամ։

«Նրանք ասում են, յերկրորդ, վոր մենք հնարավորություն ունենք այս տարի ստանալու կոլխոզներից յերկրի ամբողջ ապրանքային հացահատիկային արտադրանքի կեսից ավելին։»

«Նրանք ասում են, յերրորդ, վոր գյուղատնտեսության և նրա հիմնական պրոբլեմերի վհճակը այսուհետեւ վորոշելու յեն վոչ թե անհատական գյուղացիական տընտեսությունները, այլ կոլխոզները և սովխոզները։

«Նրանք ասում են, չորրորդ, վոր կուլակության, իբրև դասակարգի, վիկիփիդացիայի պրոցեսը առաջ և գնում մեզ մոտ արագությամբ։»

«Նրանք ասում են, վերջապես, վոր յերկրում արդեն կատարվել են տնտեսական այնպիսի բեկում-ներ, վորոնք լրիվ իրավունք են տալիս պնդելու, վոր

մեզ հաջողվեց անցկացնել գյուղը նոր ուղու վրա — կոլեկտիվացման ուղու, դրանով ապահովելով սոցիալիզմի հաջող կառուցումը վոչ միայն քաղաքում, այլ և գյուղում (Ստալին — Կենտկոմի քաղաք. հաշվետ. XVII համագումարին):

Բոլոր այդ պայմանների հաշվառումից յենելով, Համ. ԿԿ (բ) XVII համագումարը «Կոլխոզային շարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» բանաձեկի մեջ անհրաժեշտ համարեց՝

«1. Արմատապես վերաքննել գյուղատնտեսության զարգացման հնգամյա պլանը, յենելով կոլեկտիվացման այն տեմպերից, վոր նախատեսնված են կենտրոնական Կոմիտեյի հունվարի 5-ի փորոշումով ու միանգամյան հաստատված են փորձով, վորպեսզի այդ հիման վրա հացահատիկային ու տեխնիկական կուլտուրաների արագ զարգացման հետ միաժամանակ ապահովի անսանապահության բարձրացումը և ուժեղ զարգացումը — նախ և առաջ հատուկ անսանապահական սովորություններ (հացահատիկային սովորությունների որինակով) կազմակերպելու, բարձրապրանքային կոլխոզային ֆերմաների մասսայական ստեղծման և կերերի բազայի արագ լայնացման միջոցով։

«2. Կոլխոզների և կոլխոզնիկների համար կուսակցության վորոշումներով նախատեսնված արտոնությունները անշեղ պահպանելով հանդերձ, 1930 — 31 թվին կոլխոզներին տրամադրվելիք կը դիմում կումար ավելացնել կը կնակի չափով, անցյալ տարվա համեմատությամբ, այսինքն հասցնել մեկ միլիարդություն։

«3. Զեւնուրեստի (հացահատ.) գծով ապահովել մյուս տարում վոչ պակաս քան 4 $\frac{1}{2}$ մլն. հեկտարի

յանքս և պատրաստել 1932 թ. ցանքսի համար 9 մլն. հեկտար։

«4. Սվինովոդարեստի (խոզաբուծ.) գծով ապահովել են 1930 — 31 թվին վոչ պակաս քան 400 հազար գլուխ խոզի ապրանքային արտադրանք, 1931/32 թ. վոչ պակաս քան 3 միլ. և 1932/33 թ. վոչ պակաս քան 7 մլն. գլուխ։

«5. «Սկոտովոդ»-ի (անասնապահ.) հոտի գլուխների թիվը հացնել 1930/31 թվին մինչև 3,2 մլն. կլիմի, 1931/32 թ. — 5,5 մլն., 1932/33 թվին — մինչև 9 — 10 մլն.։

«6. Զարգացնել անսանապահական ճյուղերը կոլխոզներում, այդ գործին հատկացնելով գյուղատնտեսական վարկերի խոշոր մասը։

«7. Նկատի առնելով, վոր տրակտորի և ձիու գուգորդումը զաշտային աշխատանքների մեջ տեղի յեռներու դեռ մի շարք տարիներ, անհրաժեշտ ե խնամական սովորություններ (հացահատիկային սովորությունների որինակով) կազմակերպելու, բարձրապրանքային կոլխոզային ֆերմաների մասսայական ստեղծման և կերերի բազայի արագ լայնացման միջոցով։

Միևնույն ժամանակ գյուղատնտեսության վերելքի կարևորագույն խնդիրներից մեկն ե գյուղատնտեսության հիմնական ճյուղերը Խորհրդային Միունիտեստության մեջ ուղղի բաշխելը և մեր յերկրի շրջանների թյան մեջ ուղղի բաշխելը և մեր յերկրի մասնագիտացումը ըստ գյուղատնտեսական կուլտուրաների և ճյուղերի։ Այդ խնդիրը անսանապահական կուլտուրաների և սովորությունների կարելի յեռներ միայն կոլխոզների և սովորությունների կարելի յեռներ միայն կարելի յեռներ արդեն իրավականության մեջ անցնել գործնականորեն, վորովհետև հացահատիմ անցնել գործնականորեն, հացահատիմ պարբեր արդեն լուծված եւ տիկային պլորբերմը հիմնականում արդեն

Իսկ «առանց հացահատիկային պլրոբեմի լուծմանը, առանց կազմակերպելու հացահատիկների պահեստների հարուստ ցանց անասնապահական, բամբակագործական, ճականդարձական, ճականդարձային, կանեփային, ծխախոտային շրջաններում անհնարին եւ առաջ մղել անասնապահությունը և տեխնիկական կուլտուրաները, անհնարին եւ ապահովել մեր շրջանների մասնագիտացման կազմակերպությունը ըստ կուլտուրաների և ճյուղերի» (Ստալին):

Կուսակցության XVI համագումարը հանձնարարեց «ընկեր Լենինի անվան Դյուղատնտեսական ակադեմիային մշակել գյուղատնտեսությունը ԽՍՀՄ տերիտորիայի վրա ըստ ճյուղերի և կուլտուրաների ռացիոնալ ձեռով բաշխելու հարցը, պակաս ձեռնատու կուլտուրաները ավելի ձեռնատու կուլտուրաներով փոխարինելու հարցը. գլխավոր պարենային ու տեխնիկական կուլտուրաներով ԽՍՀՄ ինքնուրույն մատակարարումը ապահովելու հարցը. Եներգիայի տեղական աղբյուրները հողագործության մեջ մաքսիմալ չափով ոգտագործելու հնարավորության հարցը»:

VI. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՉ-ՀԱՑԱՏԻԿԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Համ. ԿԿ(բ) XVI համագումարը անհրաժեշտ գտավ «արմատապես վերաքննել գյուղատնտեսության զարգացման հնգամյա պլանը, յենելով կոլեկտիվացման այն տեմպերից, վոր նախատեսնված են կենտրոնական կոմիտեյի հունվարի 5-ի վորոշումով և լիովին հաստատված են փորձով»:

«1. Վերջին ամիսները — ասված ե կենտրոնական կոմիտեյի հիշյալ՝ «կոլեկտիվացման տեմպերի և կոլխոզային շինարարությանը պետության կողմից ողնելու մասին» վորոշման մեջ, — կոլխոզային շարժումը մի նոր քայլ ևս արավ առաջ, ընդգրկելով անհատական տնտեսությունների վոչ միայն առանձին խմբակներ, այլ և ամբողջ ռայոններ, շրջաններ և նույնիսկ յերկրամասեր։ Շարժումը հիմնված է չքավորական ու միջակային գյուղացիական տնտեսությունների արտադրության միջոցների կոլեկտիվացման վրա։

«Կոլեկտիվ շարժման պլանով նախատեսնված բոլոր տեմպերը գերազանցված են։ Արդեն 1930 թ. գարնանը համայնացման սկզբունքների հիման վրա մշակված ցանքսաղաջտը զգալիորեն կանցնի 30 միլիոն հեկտարից, այսինքն կոլեկտիվացման հնգամյա պլանից, վորի համաձայն յենթադրվում եր հնգամյակի վերջին կոլեկտիվներով ընդգրկել 22—24 մլն. հեկտար. այդպիսով, կոլեկտիվացման հնգամյա պլանը զգալի չափերով գերազանցվելու յերգեն այս տարի։

«2. Այդ բոլորի հիման վրա կարելի յեր հաստատել առանց վորեւ կասկածի, վոր հնգամյակի սահմանաբերում ցանքսաղաջտի հնգամյա պլանով նախատեսնված 20%-ի կոլեկտիվացման փոխարեն մենք կանուգած 20%-ի կոլեկտիվացման փոխարեն մենք կարող ենք լուծել գյուղացիական տնտեսությունների հնչող մեծամասնության կոլեկտիվացման խնդիրը, հնչող մեծամասնության կոլեկտիվացման համեմային ըստ վորում այնպիսի կարեսորագույն հացահատիկային շրջանների կոլեկտիվացումը, ինչպես ներքին վոլշրջանների կոլեկտիվացումը, ինչպես ներքին վոլշրջանների կոլեկտիվացումը, ինչպես ներքին վոլշրջան և Հյուսիսային կովկասը, հիմքան, Միջին Վոլգան և Հյուսիսային կովկասը, հիմքան, Նախատեսնված կարող եւ վերջանալ 1930 թ. աշնանը կամ, հականաբեր կարող եւ վերջանալ 1931 թ. գարնանը, իսկ մնացած համենյան դեպք, 1932 թ. գարնանը, իսկ մնացած

հացահատիկային շրջանների կոլեկտիվացումը կարող է
վերջանալ հիմնականում 1930 թ. աշնանը կամ, հա-
մենայն դեպքու, 1932 թ. գարնանը»:

Կուսակցության կենտրոնական կոմիտեյի մատնա-
շած կոլեկտիվացման տեմպերը լիովին հաստատում ե
կյանքը: 1930 թ. գարնանը (մինչ մայիս 1-ը) 82.000 կոլխոզների մեջ միացած եյին 6^{1/2} միլիոն
չքավոր-միջակային տնտեսություններ կամ Խորհրդա-
յին Միության բոլոր գյուղացիական տնտեսություն-
ների 25%-ը: Կոլխոզների ցանքսաղացը (միայն
գարնանացանի) կազմեց 36 միլ. հեկտար: ԽՍՀՄ-յան
տուանձին շրջաններում և յերկրամասերում չքավոր-
միջակային տնտեսությունների ընդգրկումը կոլխոզ-
ներով 1930թ. գարնանը տալիս եր հետեւյալ պատ-
քերը՝

«Հյուսիսային կովկասում 1927 թվին կոլխոզների
մեջ եր յերկրամասի տնտեսությունների 3,7%-ը,
1928 թվին — 7,1%-ը, 1929 թվին 12%-ը: Իսկ ներ-
կայումս կոլխոզներում ընդգրկված ե միջին հաշվով
յերկրամասի բոլոր տնտեսությունների 60%-ը, իսկ
համատարած կոլեկտիվացման ռայոններում — ավելի,
քան 70%-ը: Կոլխոզների ցանքսաղացը կազմում ե
յերկրի բոլոր ցանքսերի ավելի քան 70%-ը («Պրավ-
դա», 12 հունիսի):»

Միջին վոլգայում կոլխոզները ընդգրկում են ներ-
կայումս յերկրամասի բոլոր տնտեսությունների 26%-ը
և ամբողջ ցանքսաղացը 46%-ը («Պրավդա», 10 հու-
նիսի):

Կենտրոնական Սեահող շրջանում 1927 թվին
կոլեկտիվացրած եր գյուղացիական բոլոր տնտեսու-

թյունների միայն 0,06%-ը, 1928 թվին — 1,9%-ը,
իսկ 1930 թ. առ 1 մայիս կոլխոզները ընդգրկ-
ած եյին շրջանի բոլոր գյուղացիական տնտեսություն-
ների 18,5 տոկոսը և ամբողջ ցանքսաղացը 20%-ը
(«Պրավդա», 3 հունիսի):»

Ներքին Վոլգայի շրջանում կոլխոզները ընդգրկած
եյին չքավոր-միջակային տնտեսությունների 40-50%-ը:
Սովորողները ու կոլեկտիվները միասին բունում են գարնա-
նացանքսի 68%-ը, իսկ անհատական սեկտորը 32%-ը:
Կոլխոզները ցանել են, յուրանքաջուր տնտեսության
համար միջին հաշվով, անհատական սեկտորից յերկու-
անգամ ավելի, ըստ վորում կոլխոզների մեջ մտած տնտե-
սությունները յերեք անգամ ավելացրել են իրենց
ցանքսաղացերը, գերազանցել են կուլակային տնտե-
սությունների անցյալ տարվա ցանքսաղացերը և
զգալի չափով լայնացրել ընդհանուր ցանքսաղացը
(«Իզվեստիյա»):»

Ուկրայինայում կոլխոզների մեջ միացած են չքա-
վոր-միջակային տնտեսությունների 40%-ը:

Այս թվերը ասում են, վոր Համ. Կկ (բ) կենտկոմի
1930 թ. հունվարի 5-ի վորոշումով նախտեսնված
կուսակցության XVI համագումարի կողմից հաս-
տատված կոլեկտիվացման տեմպերը լիովին ուեալ են:
Նրանք լիովին հաստատվում են կոլխոզային շարժման
փորձով, Խորհրդային Միության հացահատիկային ամե-
նակարևոր շրջաններում կոլխոզները թե իրենց ընդ-
հակարևոր շրջաններում ավելացրած գյուղացիների քանա-
կությամբ չքավոր-միջակային տնտեսությունների քանա-
կով, թե իրենց ցանքսաղացերի չափերով և թե իրենց
զգալի չափով լայնացրած արտադրանքով գվազոր,
ընդհանուր ու ապրանքային արտադրանքով գվազոր,

խաղալով այդ շրջանների գյուղատնտեսության մեջ։ Կասկածից դուրս ե, վոր հացանատիկային շրջանների բոլոր չքավոր-միջակային տնտեսությունների համատարած կոլեկտիվացումը կավարտվի Համ. ԿԿ(բ) XVII համագումարի հաստատած ժամկետերին։

Ներկայումս մեր կուսակցության, բանվոր դասակարգի և ամբողջ յերկրի առաջ իր վողջ հսկայական հասակով ծառացած ե վոչ-հացահատիկային շրջաններում և Խորհրդային Միության արևելյան շրջաններում ու հանրապետություններում մասսայական կոլխոզային շարժումը նախապատրաստելու խնդիրը։ Համ. ԿԿ(բ) XVII համագումարը այդ ռայոնների, շրջանների և հանրապետությունների բոլոր կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրեց մասսայական կոլեկտիվացման խոշոր նախապատրաստական աշխատանքի ծավալման անհրաժեշտության վրա։

«Այդ նախապատրաստական աշխատանքը—ասված ե համագումարի «Կոլխոզային շարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» բանաձեռ մեջ—նախ և առաջ պետք ե բարկանա»

1) չքավոր ու միջակ գյուղացիության կոռպերատիվ կազմակերպության զարգացումից, սկսած գյուղական ընկերություններից և հատուկ արտադրասպառական կոռպերատիվ միություններից։

2) հողի հասարակական մշակման ընկերությունների, իբրև կոլխոզի նախնական, դեպի արտելը անցնելու ձեփի, մասսայական հիմնադրումներից։

3) գյուղություն ունեցող կոլխոզները ամեն կերպ ամրացնելոց և մեքենա-տրակտորային կայանների ծավալումից։

4) սովորողներ ստեղծելուց, մանավանդ բամբակագործական, կաթնա-բանջարանոցային, կտավատային, խողաբուծական և խաշնարածական։

5) ուժեղ հարձակումից կուլակի դեմ—նրա շահագործական ձգտումների և նրա աճման հետագա սահմանակման իմաստով, ամեն կերպ զարգացնելով չքավորների ու բատրակների կազմակերպության գործը։

6) տվյալ շրջանների համար բնորոշ ճյուղերում խոշոր տնտեսությունների տիպի մշակման աշխատանքը, այլև այդպիսի տնտեսությունների կազմակերպությանը նպաստող մեքենաների արտադրության կերպությունը ուժեղացնելուց (ցանքսամեքեկազմակերպությունը ուժեղացնելուց առաջարկի մեքենաներ, կարտոֆիլ տնկելու ու բերքահավաքի մեքենաներ, կարտոֆիլ տնկելու ու մշակման մեքենաներ, բանջարանոցային մեքենական ինվենտար, մեքենաներ խոշոր կաթնատնտեսական ֆերմանների համար և այլն)։

Այլ կերպ ասած, մասսայական կոլխոզային շարժումը վոչ-հացահատիկային ռայոններում և շրջաններում նախապատրաստությունների անհրաժեշտությունների ու համարական վերաբերմամբ կուսակցության XVII համարատելու վերաբերմամբ կուսակցության Համարի այս հրահանգները պարունակում են շատ գումարի այս հրահանգները պարունակում են շատ հասարակ, սակայն խոշորագույն նշանակություն ունեցող դրություններ։

Սկսել նրանից, ինչ վոր մոտ ե, հասկանալի, մատչելի յե չքավոր ու միջակ գյուղացուն և ինչ վոր նրան անմիջական տնտեսական ոգուտ ե բերում։ Սկսել, մի ամանական համարական կուսակցության արտադրական կոռպերացիոնը, սպառողական և արտադրական կոռպերացիոնը, սպառողական և արտադրական կուսակցության ամենահասարակ ձեւերից։ Միևնույն ժամանական տմենահասարակ

ազդել գործով ու ցուցմունքով և վոչ թե հրամանով ու սպառնալիքով, լավ հիշելով, վոր «բոնությամբ այստեղ վոչինչ չեն ստեղծի», վոր «այստեղ բռնությամբ գործել նշանակում ե փշացնել ամբողջ գործը» (Լենին):

Արտադրական կոռպերացման ամենահասարակ ձևերը նախապատրաստում են չքավոր—միջակային գյուղացիության անմիջական անցումը արտադրական կոռպերացման ամենաբարձր ձևերին—կոլխոզներին: Սկսելով զանազան տեսակի սպառման ու մատակարարման կոռպերացումից, միացյալ կոնտրակտացիայից, այս կամ այն տեսակի արտադրական ընկերության մեջ փողային փոքրիկ փայեր մտցնելուց, չքավոր ու միջակ գյուղացիները աստիճանաբար ընտելանում են իրենց անհատական տնտեսության այն կամ այն մասը (կամ թեկուզ նրա պրոցեսներից մեկը) համայնքեն վարելուն:

Յեվ վորքան ավելի յեկամուտ տա տնտեսության այդ հասարակական մասը, այնքան ավելի շուտ չքավորը ու միջակը կհամաձայնի իր արտադրության հիմնական միջոցների ու գործիքների համայնացմանը, արտադրական կոռպեր, ացիայի ստորին ձևերից (գյուղական ընկերություններ, արտադրա-սպառողական միություններ) նրա բարձր ձևերին անցնելուն (հողի հասարակական մշակման ընկերություն, գյուղատնտեսական արտել),

Ինչպես ընթերցողը արդեն տեսավ, 1930 թվի գարնանը, հաջողություններից ամենամեծ գյուղապտույտի և կոլխոզային շարժման մեջ թույլատրված խոտը բուժմների ժամանակաշրջանում, ոճախ խոտորողները

և քյալլագյողները պատերազմ հայտարարեցին բոլոր գյուղացիական հասարակ արտադրական միություններին, դրանք վարչական կարգով ցըելով: «Զախ» խոտորողները և քյալլագյողները չելին ուզում վոչինչ ձանաչել, բացի կոմունայից: Նույնիսկ գյուղատնտեսական արտելը թվում եր նրանց համար կոլխոզային շարժման համար ստիպողաբար, հրամանների կարգով թիված արտելները և կոմունաները քայլայվեցին—այն ժամանակ քյալլագյողները կոլեկտիվատորները մի շարք տեղերում մնացին դատարկության մեջ—վոչ կոմունա, վոչ մասնակության մեջ—վոչ հողի հասարակական մշակման ընկերություններ և վոչ ել ավելի հասարակ արտադրական միություններ:

Համ. Կ4(բ) XVII համագումարը վճռականորեն դատապարտեց այդ տեղի ունեցած և այժմ ել դեռ վոչ այնքան հազվագյուտ դեպքերը, յերբ «անտես են առնվում չքավոր ու միջակ անհատական գյուղացիների կազմակերպության կոռպերատիվ ձևերը, վորոնց զարգացումը—աստիճանաբար կոլխոզներին անցնելու գլխավորագույն պայմաններից մեկն եւ: Համագումարը կոպիտ սխալ ե համարում ամենահասարակ կոռպերատիվ կազմակերպության ստորին ձևերի գյուղական ընկերություններ և հատուկ արտադրա (գյուղական ընկերություններ) փաստական լիկվիդասպառողական միություններ) փաստական լիկվիդասպառողական կազմակերպություններին անհապաղ կուսակցական կազմակերպություններին անհապաղ ապահովել կոռպերատիվ կազմակերպության վերապահությունը կոլխոզային թույլ շարժման մի շարք շրջաններում, և առաջարկում ե բոլոր կազմակերպություններին անհապաղ կուսակցական կազմակերպություններին անհապաղ

համապատասխան կազմակերպչական և գինանսական աջակցություն»:

XVI համագումարը հատուկ ուշադրություն դարձրեց վոչ-հացահատիկային շրջաններում յեղած կոլխոզների թերագնահատման բացարձակ անթույլատրելիության վրա։ Իսկ կոլխոզների այդորինակ թերագնահատումը և անտեսումը հազվագյուտ յերեսույթ չեն մանավանդ այն շրջաններում, ուր կային հարյուրափոր կոլխոզներ, վոր միացնում եյին գյուղացիական բոլոր տնտեսությունների տասնյակ տոկոսները, իսկ այժմ կոլխոզների թիվը միավորներով ենաշկում։

«Համագումարը անթույլատրելի յե համարում այդ կոլխոզների անտեսումը, նկատի ունենալով կոլխոզների զարգացման փորձը հացահատիկային շրջաններում, փորտեղ անցյալ տարի կոլխոզների թիվը ներկայումս սպառող շրջաններում յեղած կոլխոզների թվից բարձր չեր և ուր կոլխոզների այն փոքը թիվը կարեռագույն դեր խաղաց ամբողջ կոլխոզային շարժման հետագա ծավալման գործում, քանի վոր հանձինս այդ կոլխոզների որինակներ ու նմուշներ եյին ստեղծվում մնացած ամբողջ գյուղացիական մասսայի համար և նրանց մեջ կոփկում եյին այն կազմերը, փորոնք կոլխոզային շարժման հետագա ծավալման ժամանակ հանդիսացան մասսայական կոլեկտիվացման կազմակերպիչներ»։

Մեքենա-տրակտորային կայանները չքավոր-միջակային տնտեսությունների կոլեկտիվացման զորեղ լծակներն են։ Կուսակցության XVI համագումարը հրահանգեց ամեն կերպ ծավալել նրանց ցանցը վոչ-

հացահատիկային շրջաններում, Խորհրդային Միության արևելյան հանրապետություններում և շրջաններում։

Մեքենա-տրակտորային կայանները — կրճատված՝ ՄՏԿ — տալիս են գյուղին նոր, բարձր տեխնիկա, աշխատանքի ու տնտեսության կազմակերպություն։ ՄՏԿ մասսայական չափերով միացնում են չքավոր-միջակային գյուղացիական անհատական տնտեսությունները, ստեղծելով նախ ամենահասարակ արտադրական կոլեկտիվներ (հողի հասարակ մշակման ընկերութ.) և ապա փոխանցելով նրանց կոլեկտիվացման ավելի բարձր ձևերին (գ.՝ա. արտել)։

ՄՏԿ կարող ե մշակել խոշոր հողամասեր։ Իսկ առանձին գյուղացու հողամասի վրա վոչ թե ՄՏԿ, այլ և մեկ տրակտորի համար գործ չկա։ Հենց այդ պատճառով ՄՏԿ ույյուններում չքավոր-միջակային տնտեսությունները կազմակերպվում են արտադրական միությունների մեջ, լինի դա հողի հասարակական մշակման ընկերություն թե — ուղղակի գյուղատնտեսական արտել։

Իբրև կանոն, ըստ այն պայմանագրի, վոր ՄՏԿ կնքում ե գյուղական ընկերության, հողի հասարակներում մշակման ընկերության կամ գյուղատնտեսական մշակման ընկերության կամ գյուղացվում են սահմանները կան արտելի հետ, փոչնչացվում են սահմանները (մեժաները) գյուղացիների հողաշերտերի միջև, նրանց (մեժաները) գյուղացիների հողաշերտերի միջև, նրանց ամբողջ հողը կազմում ե մի ընդհանուր մասսիվ, ցանքավոր ցանքաշրջանառություն ե մտցվում, կանոնավոր ցանքաշրջանառություն ե մտցվում, կիրառվում են բոլոր անհրաժեշտ հողակուլտուրական միջոցները։ ՄՏԿ կատարում ե բոլոր դաշտային աշխատանքները — վարը, հողի մշակումը, ցանքսի, բերքահատանքները — վարը, հողի մշակումը, ցանքսի, բերքահա-

վաքը, կալսումը։ Այդ ամբողջ աշխատանքը կատարում են իրենք գյուղացիները — ընկերության կամ արտելի անդամները տեխնիկների և ազգոնումների ղեկավարությամբ։ Բերքը հավաքելուց ու կախելուց հետո ՄՏԿ ստանում է իր աշխատանքի փոխարեն ամբողջ բերքի քառորդից մինչև մի-յերրորդ մասը, բերքի մյուս մասը (յերեք քառորդը կամ յերկու յերրորդը), ընդհանուր ծախսերը ծածկելուց, սերմացուի փոնդ կազմելուց, համապատասխան հասարակական ֆոնդերը ներմուծումներ կատարելուց հետո, բաշխվում են ընկերության կամ արտելի անդամների միջև ըստ նրանց թափած աշխատանքի քանակին ու փորակին։

Սրանից պարզ ե, թե վորպիսի ահազին ոգուտ ետակիս ՄՏԿ դյուղացիներին։ Սովորաբար ՄՏԿ լայնացնում ե ցանքսաղաշար դատարկ ու անմշակ հողերի հաշվին։ ՄՏԿ մշակած հողերի բերքը զգալի չափերով (30—40 տոկոսով) ավելի բարձր ե լինում, քան անհատական դյուղացիական անտեսություններում։ Գյուղացիների բանվորական ուժի ազատ մնացող մասը ոգտագործվում ե անասնապահության, թռչնաբուծության, տեխնիկական կուլտուրաների զարգացման վրա, իսկ դա լրացուցիչ յեկամուտ ե տակիս ՄՏԿ ոգտվող դյուղացիությանը։

ՄՏԿ ապահովում ե հասարակական տնտեսության կայունությունը և վերելքը, բարելավում ե զյուղացիների—ընկերության կամ արտելի անդամների նյութական դրությունը, աղատում ե չքավորությունը կուլակի շահագործումից և տնտեսական կախումից:

ՄՏԿ զրկում և կուլակին շքավորների հողերը կապալի վերցնելու (թեկուզ և ծածուկ) հասրավո-

բությունից, քանի վոր այդ հողերը մշակվում են
տրակտորով, այլ և չքավորներին գյուղատնտեսական
ինվենտար պլակատով տալուց, վորովճետե չքավորը
այդ ինվենտարի կարիքը չի զգում, և այլն։ Տրակտորը
կուլակային շահագործման արմատներն ե կտրում։
Ահա թե ինչու կուլակությունը կատաղաբար ընդ-
դիմաղրում ե ՄՏԿ կազմակերպությանը և խելա-
հեղորեն պայքարում ե նրանց դեմ, ամեն կերպ
փորձելով խախտել չքավոր-միջակային գյուղացիու-
թյան վստահությունը դեպի ՄՏԿ։

ՄՏԿ կենդանի փորձով համոզում են չքավոր ու
միջակ գյուղացուն հողի մեջենաներով մշակելու
առավելությունների մեջ, խոշոր կոլեկտիվ տնտեսու-
թյան տված սպաթի մեջ։ **ՄՏԿ**, կազմակերպելով ամե-
նահասարակ ձևերի արտադրական միություններ գյու-
ղացիական տնտեսություններից, նրանց համար ստեղ-
ծում են կոլլոգների բարձր ձևերին փոխադրելու պայ-
մաններ։ **ՄՏԿ** գյուղատնտեսության սոցիա-
լիստական վերակառուցման զորեղ լծակ-
ներն են։

Սովիողների ծավալումը, ըստ կուսակցության
XVI համագումարի բնորոշման, կազմում ե մասսա-
յական կոլխոզային շարժման նախապատրաստության
կարևորագույն մասը։ Մեր սովիողները վոչ միայն
խոշոր և խոշորագույն գյուղատնտեսական ֆար-
բիկներ են, վոր արտադրում են մասսայական չա-
փերով գյուղատնտեսական արտադրանքի այս կամ
այն տեսակները, այլ և շրջապատի չքավոր-միջակա-
յին գյուղացիությանը բազմակողմանի ոգնություն
հասցնող կենտրոններ և զորեղ լծակներ, վոր

նպաստում են գյուղացիական անհատական տնտեսությունները կոլեկտիվացման ուղիով տանելուն:

Սովորը իր մեքենական բարձր տեխնիկայով, աշխատանքի և արտադրության կազմակերպությամբ պետք է ցուցադրե գյուղացիությանը խոշոր մեքենայացրած, ագրոնոմիական գիտությանը համաձայն վարփող գյուղատնտեսական արտադրության բոլոր առավելությունները և ոգուտները: Սովորը պետք է լինի կենդանի որինակ, վորը համոզելու յե չքավորմիջակ գյուղացիությանը իրա տնտեսությունը կոլեկտիվացման հիմքերի վրա վերասարքելու անհրաժեշտության մեջ. նա պետք է լինի կուտուրական տնտեսավարության դպրոց, ագրոնոմիական գրագիտության սերմանող՝ շրջակա աղղաբնակչության մեջ:

Սովորը ասպարեզ է գալիս վոչ թե իրու կալվածատիրական տնտեսություն, վորը ճնշում և շահագործում եր գյուղացիներին, այլ իրու կոլեկտիվ հողագործության ուսուցիչ, ողնական և կազմակերպիչ, ում մոտ չքավոր և միջակ գյուղացին գանելու յե հարկավոր խորհուրդը և անհրաժեշտ ոգնությունը:

Սովորը չի հակադրվում չքավորմիջակային գյուղացիությանը, իբրև նրան թշնամի ուժ, այլ զողվում ե նրա հետ արտադրական ու կուտուրական կապակցության ամենաբազմազան ձևերի միջոցով:

Սովոր գյուղատնտեսության կոլեկտիվացման գորեղ լժակներն են:

Կամած չկա, վոր մեր կուսակցության ակտիվ աշխատանքը վոչ-հացահատիկային շրջաններում մասսայական կոլխոզային շարժում նախապատրաստելու ուղղությամբ տարփելու յե դասակարգային սուր

պայքարի պայմաններում: Կուլակությունը հացահատիկային շրջանների փորձից գիտե, թե ինչ ե գուժում նրան չքավորմիջակային տնտեսությունների կոլեկտիվացումը:

Կուլակությունը յեւանդով, չարությամբ և ամեն կերպ կովել ե ու կովում ե կոլխոզների դեմ հացահատիկային շրջաններում, ուր կոլխոզային շարժումը ավելի առաջ եր սկսել զարգանալ և այսոր ստացել ե լայն թափ ու զորեղ տեմպեր: Կուլակը տեսնում եր և զգում, վոր կոլխոզները կտրում են իր շահագործող գործնեյության արմատները, վոր կոլեկտիվացումը փախցնում ե հողը կուլակության վոտքի տակից և պատրաստում ե նրա, իբրև ձրիակերների ու պարագիտների դասակարգի, լիկիդացիան: Յեվ բնական ե, վոր կուլակը եր և մնում ե կոլխոզների կատաղի թշնամին:

Միայն ուժեղ հարձակումը կուլակության դեմ, նրա շահագործական տենդենցների և նրա աճման հետագա վճռական սահմանափակման միջոցով, միայն բատրակների և չքավորության կազմակերպության զարգացումը բոլոր միջոցներով և միջակի հետ նրանց միության ամրացումը կարող ե ապահովել կոլխոզային շարժման հաջողությունը վոչ-հացահատիկային շրջաններում և ԽՍՀՄ արևելքի հանրապետություններում ու շրջաններում:

Չքավորմիջակային կորիզի սերտ միությունը կոլխոզներում, խորհուրդներում և կոոպերացիայում վճռող պայմաններից մեկն ե կուլակությամ դեմ մղվող կովում: Առանց չքավոր-բատրակ մասսաների մոբիլիկովում, առանց նրանց կազմակերպվածության և զացման,

սերտ միության ուժեղացմանը, առանց՝ նրանց և միջակ-ների միության ամրացմանը անհնարին և կոլխոզային շարժման լայն ծավալումը և ամրացումը, անհնարին և հաջողությունը կուլակության դեմ մղվող պայքարում, Ով այդ չի հասկանում — նա կուլակի բարեկամն է կամա թե ակամա, կուսակցության և բանվոր դասակարգի թշնամին:

Աջ ոպորտունիստները, վոր կուլակության գործակալությունն են հանդիսանում մեր կուսակցության մեջ, դեմ են կոլխոզային շարժման ծավալման համար մղվող ակտիվ պայքարին: Նրանք կոլխոզային շինարարության մեջ կողմնակից են «ինքնահոս»-ին (самотек): Աջ ոպորտունիստները քարոզում են, թե գյուղը առանց քաղաքի ակտիվ դեկավարությանը և ներգործությանը, առանց նրա կազմակերպչական և նյութական ոգնությանը, ինքը, ինքնահոսարար, առանց դասակարգային կովի, սուս և խաղաղ կգնա կոլխոզները, իր մանր ու մանրագույն անհատական տնտեսությունները կվերակառուցե խոշոր արտադրական կոլեկտիվների, կերպարանափոխի ինքն իրան ըստ սոցիալիստական քաղաքի պատկերին ու նմանությանը:

Իսկ քանի վոր այդպես ե, աջերը անհրաժեշտություն չեն տեսնում պայքարելու կոլխոզների համար, ցուցադրելու նրանց առավելությունները անհատական տնտեսության առաջ, արտոնորեն և լայնորեն ապահովելու կոլխոզները գյուղատնտեսական ինվենտարով և վարկով, արամազրելու կոլխոզներին հարկային արտոնություններ և այլն:

Աջ ոպորտունիստները ժխտում են պրոլետարական պետության ձեռք առաջ միջոցների նպատակա-

հարմարությունը, այն միջոցների, վոր զարկ են տալիս չքավոր-միջակային գյուղացիության միությանը կոլխոզներում, ամրացնում են կոլխոզները, ամրապնդում են և առաջ շարժում կոլխոզային շինարարությունը:

Աջերի տեսակետից կոլխոզներին և կոլխոզնիկներին տրվող արտոնությունները և առավելությունները վոչ միայն կարկանդակ են, այլ և մտրակ, վոր հարկագրում ե գյուղացիներին .կոլխոզ մանել: Իսկ մտրակի տակից, ինչպես հայոնի յե, «ինքնահոսը» ենքան ել լավը չե և կամավորությունը — շատ յերեակայական: Այդ պատճառով աջերը դեմ են կոլխոզներին արտոնություններ տալուն: Պետության միջոցները, վոր գնում են կոլխոզներին ոգնելու գործին: աջերը համարում են քամուն տրված փողեր: Այդ «ինքնահոս»-ի թեորիան վոչ մի առնչություն չունի կուսակցության հայացքների հետ: Նա խորը թշնամական և կուսակցության քաղաքականությանը: «ինքնահոսի» թեորիան գյուղատնտեսության զարգացման մեջ բացասում ե խոշոր ինդուստրիայի վարող դերը գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում, բացասում ե պրոլետարիատի կազմակերպչական առաջնորդող դերը գյուղացիության վերաբերմամբ:

Գործնականում «ինքնահոս»-ի թեորիան վոչ այլ ինչ ե նշանակում, քան քաղաքի պաստիվ հետևելը գյուղի կյանքին, քան պրոլետարիատի հրաժարվելը գյուղացիությանը. դեկավարելուց:

Աջերը, պաշտպանելով ինքնահոսի թեորիան, պաշտպանում են վոչ այլ ինչ, քան գյուղի զարգացաշահությունը:

ցումը առանց վորեե միջամտության քաղաքի կողմից։ Իսկ այդ «ազատությունը» նշանակում ե նախ և առաջ կուլակի ազատությունը՝ շահագործելու բատրակին, չքավորին, իսկ հաճախ նաև միջակին։ Դա նախ և առաջ կուլակի ազատությունն ե՝ ամրացնելու և լայնացնելու իր շահագործական տնտեսությունը, քայլայել ու լափել չքավորի տնտեսությունը, դարձնել նրան հողագուրկ բատրակ-պլուտոար. դա—կուլակի ազատությունն ե՝ թուլացնելու միջակի տնտեսությունը, դարձնելու նրան չքավոր, իսկ հետո և բատրակ, ինքնահոսի թեորիան ուրիշ բան չի նշանակում և նշանակել չի կարող։ Այդ թեորիայի կուլակային եյությունը դուրս ե վորեե կասկածից։

Իսկ կուսակցությունը, լենինի ուսմունքին հավատարիմ, ամուր կանգնում ե ինդուստրիայի զարգացման արագ տեմպերին պաշտպան, վորովինետև միայն ինդուստրիան ե ընդունակ կերպարանափոխելու հողագործությունը. պաշտպան բանվոր դասակարգի ակտիվ դեկավարող դերին գյուղացիության վերաբերմամբ. պաշտպան ակտիվ մասնակցությանը գյուղի դասակարգային պայքարում—բատրակի, չքավորի, միջակի կողմը, կուլակի դեմ. պաշտպան կոլխոզներին առավելն ոգնելուն և արտոնություններ տալուն. պաշտպան կոլխոզների ոգուտների և առավելությունների ակտիվ պրոպագանդին. պաշտպան քաղաքի լավագույն պրոլետարներին գյուղ ուղարկելուն, իբրև կոլխոզային շինարարության կազմակերպիչների։

Կուսակցությունը պաշտպան ե կամավորությանը կոլխոզային շարժման մեջ, սակայն կամավորության բոյլշեկական և վոչ թե աջ-ոպրորտունիստական ընթու-

նումով։ Կուսակցությունը պաշտպան ե նրան, «վորպեսզի կոլխոզները կառուցվեն չքավոր ու միջակ գյուղացիներին կոլխոզների առավելության մեջ համոզելու միջոցով. կուսակցությունը վճռականորեն դեմ ե հարկադրանքին այդ գործում, դեմ ե առաջ վագելուն, դեմ ե վերևից կոլխոզներ հրահանգելուն։ Կուսակցությունը դեմ ե աջ և «ձախ» ոպրորտունիստական հայացքներին կոլխոզային շարժման վրա, այլ և ոպրորտունիստական պրակտիկային։ Կուսակցությունը կողմնակից ե քաղաքի ակտիվ դեկավարող դերին գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում, պաշտպան ե իր լենինյան քաղաքականությանը գյուղացիության վերաբերմամբ, իբրև միակ ուղիղ և սոցիալիստական շինարարության հաջողությունները մեր յերկրում ապահովող քաղաքականության։

VII. ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

«Ներկա մոմենտին կուսակցության աշխատանքի համար վճռական նշանակություն ունի—ասված ե Համ. ԿԿ(թ) XVL համագումարի բանաձեկի մեջ՝ կենտրոնական կոմիտեյի հաշվետվության առթիվ. — չքավոր միջակ տնտեսությունները հետագայում ևս կամականակարգ մունիցիպալիտետները կուսակցությունները պահպանում են կամականակարգ մասնակիության պրոբեմը խնդիրը, աշխատանքի կազմակերպության պրոբեմը կուսակցությունները, բերքը կոլխոզների մեջ բաշխելու պրոցեսը, կոլխոզային նոր կաղերի պատրաստությունը, կոլխոզային մասսաների կուլտուրական մակարդյան, կոլխոզային մասսաների կուլտուրական տատանում-դակի բարձրացման, մանր-բուրժուական տատանում-

ների հաղթահարումը կոլխոզներում, կոլխոզները ամեն կերպ ամրացնելը, իբրև սոցիալխոտական շինարարության հենակետերը գյուղում»:

Զքավոր-միջակ գյուղացիության՝ հետագայում կոլխոզների մեջ քաշելու խնդիրը կարող է հաջող լուծում ստանալ միայն այն դեպքում, յեթե կանոնավոր փոխարաբերություններ հաստատվեն գոյություն ունեցող կոլխոզների և չքավոր ու միջակ անհատականների միջև, վորոնք դեռ ևս չեն ուղղում մտնելով սակայն վորոնց՝ «կոլխոզների մասսայական փորձը, անկասկած, համեմատաբար ամենաշատը ժամանակում կհամոզե կոլեկտիվացման ուղին անցնելու անհրաժեշտության մեջ»։ Կոլխոզների կողմից կանոնավոր վերաբերմունք դեպի անհատականը հաստատելը՝ «դառնուում ե զգալի չափով կոլխոզնիկների և անհատականների փոխարաբերությունների խնդիր»։ Իսկ այդ փոխարաբերությունները ամեն տեղ ուղիղ և նորմալ չեն։

1930 թ. գարնանը այն շրջաններում, ուր «գլխապտյուտը հաջողություններից» զգալի ուժ եր ստացել, ուր հակամիջակային թերումները շատ լայն ելին տարածվել, այնտեղ կոլխոզնիկների հարաբերությունները կոլխոզներից գուրս յեկած գյուղացիների հետ ստացել ելին շատ սուր բնույթ։ Մի շարք տեղերում կոլխոզներից գուրս յեկած չքավորներին ու միջակներին հող չելին տալիս կամ տալիս ելին անհարմար հողեր, պակասեցրած չափերով, զրկում ելին արտատեղերից, փակում ելին ճանապարհը դեպի անհատականների արտերը, չելին վերադարձնում սերմացուն, ուշացնում ելին փայտվճարների վերադարձը և այլն։

Այդ բոլորը, բնականաբար, թշնամական հարաբերություններ եր ստեղծում կոլխոզնիկների և անհատականների միջև։ 1930 թ. գարնանը Խորհրդային Միության շատ ռայոններում, շրջաններում և հանրապետություններում թույլատրված հակամիջակային խոտորումների վճռական ուղղումը կուսակցության կողմից մեղմացրեց այդ հարաբերությունների սրվածությունը։ Սակայն, վերջին ժամանակներս ել կան շատ փաստեր, վորոնք վկայում են, թե մի շարք տեղերում կոլխոզնիկների ու անհատականների փոխարաբերությունները չեն լավանում, շարունակում են մնալ լարված։ Տեղտեղ սխալ վերաբերմունք ե իշխում դեպի անհատականը, կոլխոզների հակադրումը չքավոր-միջակային տնտեսություններին։ Իսկ մի քանի տեղերում նկատվում ե կոլխոզնիկների և անհատականների առողջ փոխարաբերությունների նշանակության և կարևորության չհասկանալը։

«Անցյալներս Պուգաչովսկիյ Շրջգործկոմի պլենառմին նիժնի-վոլժսկիյ Յերկգործկոմի անդամ ընկ։ Ալեքսեյեվը հայտարարեց՝

«Կարիք չկա քնքություններ բանեցնելու անհատականների վերաբերմամբ։ Դու նրանց դարձրու մեկ թուշը, նրանք մյուսին կլսիեն»։

«Լենինյան ուղի» լրագիրը (Պուգաչովի շրջան, Կարչովսկիյ ռայոն) հետևյալ բաժանորդագինն ե նշանակել՝ կոլխոզնիկների համար 15 կոպ. ամիսը, իսկ անհատականների համար՝ 20 կոպեկ։

«Նույն շրջանի Պիտերսկիյ ռայոնի գյուղերից մեկում փորոշված ե յեղել՝ կոլխոզնիկներին թողնել

կիսո ձրի, իսկ անհատականներին — վճարով»: («Բեդ-նոտա», 25 հուլիսի):

«Նիմսի-Վոլգայի շրջանից հայտնում են կոլխոզնիկների և անհատականների փոխարաբերությունների լարվածության մասին այն հողի վրա, վոր պակասավոր ապրանքները բաց են թողնվում այն կոլխոզնիկներին, վորոնք նույնիսկ իրենց փայը չեն վճարել սպառողական կոռալերացիային, մինչդեռ իրենց փայը ամբողջովին վճարած անհատականներին վոչ մի ապրանք բաց չեն թողնում»:

«Նույն իսկ կենցաղի մեջ պատվաստում են այնպիսի այլանդակ յերևույթներ, վորոնց մասին հաղորդում են, որինակ, Զելնինսկիյ կանտոնից, ուր կոլխոզնիկները հրաժարվել են հանգցնելու անհատականի խըրճիթի հրդեհը: Իսկ Վոլժսկիյ շրջանի Նիկոլսկոյե գյուղում կոլխոզնիկները մերժում են անհատականներին ծխախոտ տալ՝ — «Դու կոլխոզնիկ չես, չեմ տա» («Սոցիալիստ. Զեմլեդ.», 22 հունիսի):

«Ն.-Վոլժսկիյ շրջանում ծավալվող բերքահավաքի կամպանիան շատ տեղերում անցնում ե գյուղխորհուրդների, կոլխոզների վարչությունների և շարքային կոլխոզնիկների դեպի անհատականը ունեցած անուշադրության պայմաններում»:

«Կոլխոզներում պատահում ե լսել այսպիսի խոսակցություններ՝ — մեզ պետք չեն գուրս յեկածները... Սատանան տանի դասավիքներին...»

«Իվանովկա գյուղում (Բալաշովսկիյ շրջան) կոլխոզի վարչությունը հրաժարվել ե չուներ անհատականներին ոգնություն հասնելուց, պատասխանելով նրանց խնդրին՝

— Մեզ մոտ անկելանոց չե ձեզ համար... Յեկեք մեզ մոտ և աշխատեցեք, իսկ ոգնել — մենք ձեզ չենք ոգնի:

«Մի քանի գյուղխորհուրդներ անթույլատրելի յեն վարվում: Այսպես, որինակ՝

«Նիկոլսկոյե գյուղում (Բալաշովսկիյ շրջան) սատկում ե անհատական Բախարովի ձին: Տերը գնում ե գյուղխորհուրդ, վորպեսզի ակտ կազմե և ստանա ապահովագինը: Սակայն, գյուղխորհուրդի նախագահ Նադզորովը պատասխանում ե՝

— Այժմ ըոլորը պետք ե կոլխոզի մեջ լինեն... Ըստ համատարած կոլեկտիվացման, դու քո ձիու ապահովագինը չես ստանա, այլ դա կստանա կոլխոզը...

«Յեվ հիրավի, Բախարովի ձիու ապահովագրման գումարները ստացավ «Նոր Կյանք» կոլխոզը...»

«Կոլխոզի վարչությունը, ստանալով փողը, հրաժարվեց դա հանձնել Բախարովին, առաջարկելով նրան կոլխոզ մտնել: Բախարովը գանգատվեց դատախազին: Դատախազը համապատասխան գրությամբ առաջարկեց կոլխոզին հանձնել փողը Բախարովին, սակայն կոլխոզի վարչությունը չընդունեց չարաբաստիկ գյուղացուց դատախազի գրությունը, հեգնորեն նկատելով՝

— Գիտենք, սա առաջին թուղթը չե, վոր բերում են, բայց անողությունը գողը չենք տա»:

Անթույլատրելի վերաբերմունք ունի դեպի անհատականը նաև կոռպերացիան, մանավանդ սրա ստորին ողակները: Այսպես, որինակ, Տուրկովսկիյ սպառողական ընկերության մեջ անհատական-գնորդը հաճախ լսում ե այսպիսի վողջույններ՝

— Կսալասես. մենք զբաղված ենք կոլխոզնիկների հետ («Սոցիալիստ. Զիմլեդ.», 24 հուլիսի):

Այս փաստերը ասում են, վոր գեռ վոչ ամենուրեք և վոչ բոլոր կուսակցական ու խորհրդային աշխատավորները, կոլխոզները և կոլխոզնիկները հասկացել են մեր կուսակցության ուղիղ քաղաքականությունը անհատական չքավորմիջակային գյուղացիության վերաբերմամբ:

Կամա թե ակամա, գիտակցորեն թե անգիտակցաբար, սակայն ընկ. Ալեքսեյեվը տրոցկիստական ձմարտություններ ե արտասանել, վոր վոչ մի առընչություն չունեն կուսակցության հայացքների հետ, ամբողջովին թշնամի յեն նրանց:

Տրոցկիստները ժխտում են բանվոր դասակարգի և միջակի ամուր դաշինքի հնարավորությունը: Նրանք բացասում են գյուղացիական հիմնական մասսաները սոցիալիստական շինարարության գործի մեջ քաշելու հնարավորությունը: Տրոցկիստները միջակին համարում են վոչ թե սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակից, այլ նրան թշնամի: Այստեղից ե նրանց լոգունգը՝ «գարկ վոչ միայն կուլակին, այլ և միջակին, վորովհետև նա նույնալիք սեփականատեր ե, ինչպես և կուլակը»: Տրոցկիստները համարում են, վոր միջակի մեջ ավելի ուժեղ ե նրա մանր-սեփականատիրական բնույթը, վոր այդ բնազդը անխուսափելիութեն, բոլոր պայմաններում, կհաղթահարե աշխատավորմիջակի բնույթյունը: Այստեղից, տրոցկիստների կարծիքով, անխուսափելի յեն միջակի տատանումները դեպի կապիտալիզմը, կուլակության կողմը, անխուսափելի յե միջակ գյուղացիության թշնամական ընդհարումը

բանվոր դասակարգի հետ, անխուսափելի յե կապիտալիզմի վերահաստատումը այս յերկրում, յեթե մեզ ժամանակին ոգնության չհասնի համաշխարհային պրոլետարական հեղափոխության հաղթանակը:

Հակամիջակային «ձախ» խոտորումները, դեպի վորոնց հակված լինելը շատ կարձ, բայց ցայտուն արտահայտել ե ընկ. Ալեքսեյեվը, ներկայացնում են իրանցից «վորոշ, ճիշտ ե՝ անգիտակցական փորձ, վերածնելու մեզ մոտ տրոցկիզմի տրադիցիաները գործնականում, վերածնելու տրոցկիստական վերաբերմունք դեպի միջակ գյուղացիությունը» (Ստալին):

«Կուսակցությունը — ասված ե XVI համագումարի բանաձևում կենտրոնի հաշվետվության առթիվ, — պետք ե շարունակե անողոք պայքարը «ձախ» հակամիջակային խոտորումների դեմ, վորոնք ներկայիս, ավելի քան յերեկիցե, ձեռնտու յեն կուլակի և աջ ոպրտունիզմի համար»:

Պետք ե, սակայն, նկատել, վոր գլխավոր վտանգը կուսակցության մեջ — եր և շարունակում ե մնալ աջ ոպրտունիզմը, աջ թեորիան և պրակտիկան: Աջերը համաձայն չեն մեր կուսակցության գլխավոր գծի հետ՝ սոցիալիստական շինարարության բոլոր կարեորագույն հարցերում: Աջերը դեմ են յերկրի ինդուստրացման բարձր տեմպերին, դեմ են գյուղատնտեսության կոլեկտիվացմանը: Աջերը փորձում են կասեցնել մեր առաջխաղացումը. նրանք փորձում են քաշել մեր կուսակցությունը և յերկրը յետ — դեպի կապիտալիզմ և վոչ թե առաջ — դեպի սոցիալիզմ: Աջերը դեմ են համատարած կոլեկտիվացմանը և կուլակության, իրքև դասակարգի, լիկիդացիային: Միթե

պարզ չէ սրանից, վոր գլխավոր վտանգը կուսակցության համար — երև և մոռմ ե աջ թեքումը, վոր կուսակցության գլխավոր հարվածները պետք ե այդ կողմը ուղղված լինեն։ Բայց միենույն ժամանակ անհրաժեշտ ե ուժաղացնել և ավելի վճռականորեն մղել պայքարը ձախ ոպորտունիստների — աջ ուկոնիստների այդ յեղբայրակիցների ու դաշնակիցների դեմ։ Պայքար յերկու ճակատով — աջ թեքումի, իբրև գլխավոր վտանգի, դեմ և «ձախ» ոպորտունիզմի դեմ — կուսակցությունը պետք ե վարե վճռականորեն ու անդուլ, հիշելով, վոր «ոսցիալիզմի ապագա հաղթանակները ընկած են նույն ուղու վրա — աջ ու ձախ ոպորտունիստների և նրանց նկատմամբ հաշտվողականություն ձույց տվող հակալենինյան, մանր-բուրժուական եյության վճռական սիստեմատիկ մերկացման և այդ թեքումներին գործնական արտահայտությունների դեմ անողոք կոիվ մղելու ուղու վրա»։*

«Ենինյան ուղի» լրագիրը, տարբեր բաժանորդագին նշանակելով կոլխոզնիկների և անհատականների համար, շեղվեց իսկական լենինյան ուղուց, վորովինետև դրանով նա կանգնեց կոլխոզնիկին անհատականին հակադրելու ուղու վրա։ Ինարկե, տարբեր բաժանորդագինը, կինոն կոլխոզնիկին ձրի, անհատականին վճարով — սրանք մանր բաներ են, բայց շատ բնորոշ ու նշանակալից։ Կամ կոլխոզնիկների հրաժարվելը — հանդցնել անհատականի խրճիթը այրող կրակը, կամ ծխախոտ մերժելը և այլն։ Բոլոր այդ փաստերը շատ խոշոր են ու նշանակալից, վորովինետև նրանք վկայում են շատ անառողջ փոխարաբերություն-

* Համ. ԿԿ (թ) ԿԿ 1929 թ. նոյեմբերի պլենումի բանաձեկից։

ների մասին կոլխոզնիկների և անհատականների միջև։ Իսկ այդորինակ փոխարաբերությունները, կուսակցության ԽVI համագումարի գնահատմանը համաձայն, «խոչնդու են հետագա կոլեկտիվացման» համար։

Կոլխոզնիկների և անհատականների լարված փոխարաբերությունները անհատականներին կոլխոզի դեմ են հրում, նրա և կոլխոզի միջև անհաշտության և թշնամության պարիսպներ են կառուցում, խանգարում են չքավոր-միջակ գյուղացիությունը կոլխոզների մեջ քաշելու գործին, ուժեղացնում են կուլակության գիրքերը։

Յուրաքանչյուր տեղական աշխատավոր, յուրաքանչյուր կոլխոզ և կոլխոզնիկ պետք ե լավ հիշեն, վոր, մեկուսանալով չքավոր ու միջակ անհատականներից, մերժելով նրանց ոգնություն, նրանց ցույց չտալով իրենց գործնական փորձի վրա կոլեկտիվ տնտեսության առավելությունները, չքաշելով նրանց դեպի կոլխոզը, միջոցներ ձեռք չառնելով, վորպեսզի վերացվեն և չթույլատրվեն թշնամական վերաբերմունքի փաստեր կոլխոզնիկների կողմից, չ'զարդացնելով ակտիվ մասսայական աշխատանք անհատականների մեջ, — նրանք ամրացնում են կուլակության դրությունը, նպաստում են նրա ազգեցության ուժեղացմանը չքավոր ու միջակ անհատականի վրա, թեթևացնում են կուլակի հակակոլխոզային և հակախորհրդային աշխատանքը։

Չքավորն ու միջակը — այսորվա անհատականը — վաղվա կոլխոզնիկն ե, — ահա այն կանոնը, վորի վրա պետք ե հիմնված լինեն կոլխոզնիկների և անհատականների փոխարաբերությունները։ Միայն կուսակ-

ցության թշնամին և Խորհրդային իշխանության թշնամին կարող ե չքավոր ու միջակ անհատականին համարել կոլխոզի ու կոլխոզնիկների թշնամին Նրանք—վաղվա կոլխոզնիկներն են։ Նրանց պետք ե գործնականում համոզել կողեկախիլ աշխատանքի ձեռնտուլինելուն, նրա առավելությունների մեջ, իսկ դրա համար անհրաժեշտ ե վոչ թե ոտարացում, այլ մերձեցում, կապերի ամրացում, կոլխոզային փորձը հաղորդել անհատականներին, ոգնել նրանց, ամուր ընկերական հարաբերություններ ստեղծել, սերտ աշխատակցություն։ Միայն այսպիսի հարաբերությունները կոլխոզնիկների և անհատականների միջև կնպաստեն կոլխոզների ազդեցության ամրացմանը չքավոր-միջակային անհատական-տնտեսությունների վրա, նրանց՝ կոլխոզների մեջ քաշելուն, կոլխոզային շարժման հետագա ծավալմանը և տեմպերի արագացմանը, վերջական հաղթանակին կուլակության դեմ։

Համ. ԿԿ (թ) XVI համագումարը պարտավորեցրեց «Բոլոր կուսակցական կազմակերպություններին ամեն միջոց ձեռք առնել, վորպեսզի կոլխոզնիկների և անհատականների փոխհարաբերությունների մեջ հաստատվի կանոն—չհետապնդել անհատականներին, այլ ոգնել նրանց և ամեն կերպ դեպի կոլխոզ գրավել»։

«Գյուղում տարած իր ամբողջ գործնական աշխատանքի մեջ անցկացնելով կոլխոզնիկի վրա հենվելու լողունքը—ասված ե համագումարի բանաձեի մեջ կենտկոմի հաշվետվության առթիվ,—կուսակցությունը պետք ե վճռականորեն պայքարե անհատական չքավոր-միջակային տնտեսության անտեսման կամ թերագնահատման բոլոր տենդենցների դեմ, ոգնելով այդ

տնտեսությանը, ամրացնելով չքավորության ինքնուրույն կազմակերպումը խորհուրդների, կոռպերացիայի և կոլխոզային շարժման ստորին ողակների մեջ, լայն աշխատանք տանելով անհատականների մեջ և քաշելով նրանց դեպի կոլխոզները»։

VIII. ԿՈԼԽՈԶՆԻԿԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՑՈՒԿՆ Ե

Հենվելով չքավորության վրա, ամրացնելով բանվոր դասակարգի դաշինքը միջակի հետ, վճռականորեն և աննկուն կովելով կուլակի դեմ, մեր կուսակցությունը հասավ միջակ գյուղացիության մասսաների վճռական շրջադարձին դեպի սոցիալիզմը։ Չքավորության յետկից դեպի կոլխոզները շարժվեց միջակը, կոլխոզ մտնելով, միջակը իր արտադրության հիմնական միջոցները տալիս ե հասարակական ոգտագործության, իր ուշադրությունը և ուժերը դարձնում ե կոլխոզների տնտեսության ամրացման ու զարգացման վրա, դառնում ե կողեկտիվ արտադրության ակտիվ կառուցող, դառնում ե կոլխոզների ակտիվ մարտիկ։ Միջակ կոլխոզնիկը իր վիճակը ամուր կապում ե կոլխոզի վիճակի հետ։ Ճիշտ ե, միջակ կոլխոզնիկի ձեռքին մնում ե տնտեսության վորոշ անհատական մասը, վորը նա վարում ե անհատական կարգով, կոլխոզից դուրս։ Սակայն, իր տնտեսական գործնեյցության հիմքը միջակ կոլխոզնիկը փոխադրում ե կոլխոզ—նա հանձնել ե կոլխոզին իր արտադրության հիմնական միջոցները և գործիքները, կոլխոզից ե նա ստանալու իր յեկամատի հիմնական մասը։

Միջակը կոլխող յեկավ յերկար մտորումներից հետո, շատ կասկածներ ու տատանումներ հաղթահարելով, հաղթելով կուլակության ակտիվ զիմադրությունը։ Մտնելով կոլխող և հաստատ ամրապնդվելով նրա մեջ, միջակը անհաշտ-թշնամական հարաբերությունների մեջ ե մտնում կուլակի հետ, վորը կոլխողային շինարարության վոխերիմ թշնամին ե։ Միջակ կոլխողնիկը ակտիվ մասնակցում ե գյուղում տարվող դասակարգային պայքարին — բանվոր դասակարգի կողմը։

Համատարած կոլեկտիվացման շրջաններում միջակ կոլխողնիկը, բատրակ և չքավոր կոլխողնիկների հետ միասին, ապակուլակացնում եր կուլակներին, լիկվիդացիայի յենթարկում կուլակային տնտեսությունները, վորոնց արտադրության միջոցները և գործիքները անցնում ելին կոլխողների անբաժանելի ֆունդերը։ Միջակ կոլխողնիկը դարձավ կոլեկտիվ տեր այդ միջոցների և ֆոնդերի։ Նա վճռականորեն պայքարելու յե և պայքարում ե այդ ֆոնդերի պահպանության, կոլխողների ամրացման համար Միջակ կոլխողնիկը ակտիվ աշխատում ե կոլխողում, հաճախ դեկավարում ե նրա տնտեսության ամենակարևոր ճյուղերը, յեռանդուն յելույթներ ե ունենում ի պաշտպանություն կոլխոզի, մերկացնում ե կուլակային սուտը և զրպարտությունը կոլխողների մասին, նոր կոլխողնիկներ ե գրավում։ Մեկ խոսքով — միջակ կոլխողնիկը դառնում ե սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակից, սոցիալիստական գյուղատնտեսության ակտիվ շինարար։ Բանվոր դասակարգի դաշնակցից միջակ կոլխողնիկը դառնում ե պլուտարքիատի խոկական և հաստատ հենարանը գյուղի սո-

ցիալիստական վերակառուցման, սոցիալիստական կարգերի հաղթանակի համար տարվող պայքարում։

«Այսուհետեւ ԽՍՀՄ կարևորագույն հացահատիկային շրջաններում գյուղը բաժանվում ե յերկու հիմնական մասերի՝ կոլխոզնիկների, վորոնք խորհրդային իշխանության խոկական և հաստատ նեցուկն են, և վոչ-կոլխոզնիկների՝ չքավորներից ու միջակներից, վորոնք դեռևս չեն ուզում մտնել կոլխոզները, բայց վորոնց—կոլխոզների մասսայական փորձը, անշուշտ, համեմատաբար ամենակարծ ժամանակամիջոցում համոզելու յե կոլեկտիվացման ուղին անցնելու անհրաժեշտության մեջ» (Համագումարի՝ «Կոլխոզային շարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» բանաձեկից)։

Միջակ կոլխողնիկը, չքավոր կոլխոզնիկի և չքավոր-անհատականի հետ միասին, դարձավ խորհրդային իշխանության հաստատ հենարանը։ Կոլխոզում միջակը մասնակցում ե մթերքների հասարակական արտադրությանը ու բաշխմանը, լծվում ե հասարակական աշխատանքի և կարգավահության, խոշորագույն քայլ ե կատարում իր մանր-սեփականատիրական տրամադրություններից աղատվելու ուղղությամբ, մանր ապրանքարտադրողից կոլեկտիվ սոցիալիստական տնտեսության աշխատավոր դառնալու ուղղությամբ։ Սակայն, սա ամեններ չի նշանակում, թե միջակ կողխոզնիկը արդեն միանդամ առմիջտ հաղթահարել ե իր մանր-սեփականատիրական ընությունը։ Յեվ խոշորագույն սխալ կլիներ գրանից յեզրակացնել, թե կոլխոզի շեմքին միջակը թողել ե իր բոլոր կասկածները և տատանումները։ Միջակ-կոլխոզնիկը չի հաղթահարել, այլ միայն սկսել ե հաղթահարել իր մասնա-

վոր-սեփականատիրական, մանր-բուրժուական տրամադրությունները։ Միջակ-կոլխոզներին դեռ շատ անգամ կայցելեն կասկածները և տատանումները։ Դեռ յերկար ժամանակ նա յերբեմն յետ ե նայելու։

«Մանր հողագործին վերամշակելու գործը — ասում եր Վ. Ի. Լենինը, — նրա ամբողջ հոգեբանության և սովորույթների վերամշակումը մի գործ ե, վոր սերունդներ և պահանջում։ Լուծել այդ խնդիրը մանր հողագործի վերաբերմամբ, առողջացնել, այսպես ասած, նրա ամբողջ հոգեբանությունը — կարող ե միայն նյութական բաղան, տեխնիկան, տրակտորների և մեքենաների գործադրությունը հողագործության մեջ մասսայական մասշտաբով, ելեկտրիֆիկացիան մասսայական մասշտաբով։»

Վաղիմիր Իլյիչի այս խոսքերին լիովին համաձայն, մեր կուսակցության XVI համագումարը «Կոլխոզային շարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» բանաձևի մեջ շեշտեց՝

«Արտելի մեջ չի վերջանում, այլ միայն սկսվում ե նոր հասարակական կարգապահության ստեղծումը, գյուղացիներին սոցիալիստական շինարարության սովորեցնելու գործը։ Կոլխոզներում գյուղացիները վերջնականապես կազմատվեն մանր-սեփականատիրական հոգեբանությունից, մասնավոր-տնտեսական կուտակման ծարավից, վոր ժառանգել են մանր մասնավոր սեփականատերերի սերունդներից, միայն տարիների համառ աշխատանքի հետևանքով, — կոլխոզների համար խոշոր մեքենայացրած տնտեսության բաղաստեղելով, կոլխոզնիկների միջից կադրեր դաստիարակելուն և ամբողջ կոլխոզային մասսայի կուտուրական վերելքին հասնելով։»

IX. ՊԱՅՔԱՐ ՅԵՐԿՈՒ ՖՐՈՆՏԻ ՎՐԱ

«Կուսակցությունը — ասված ե Համ. ԿԿ(բ) XVI համագումարի բանաձևում կենտկոմի հաշվետվության առթիվ — հասավ սոցիալիստական շինարարության մեծագույն նվաճումներին շնորհիվ կուսակցության գլխավոր գծի հաստատ կիրառման, շնորհիվ վճռական ու անողոք պայքարին յերկու ֆրոնտի վրա — արոցկիզմի ու նրա վերաբերմամբ հաշտվողականության դեմ, աջ թեքման դեմ, իբրև գլխավոր վտանգի դեմ ներկա ետապին, և դեպի աջ թեքումը ցույց տրվող հաշտվողականության դեմ։»

Աջ ուկոնիստաները ժամանակին իրենց ոպորտունիստական դրոշակների վրա գրել ելին այսպիսի լոգունգներ, — իջեցնել յերկրի ինդուստրացման տեժակերը, դադարեցնել սովմոզների և կոլխոզների շինարարության աշխատանքը, տրամադրել յերկրի կապիտալիստական տարրերին զարգացման ազատություն։ Սոցիալիստական շինարարության դժվարություններից սարսափած, աջերը առաջարկում ելին կուսակցությանը ուղղվել ըստ «նեղ տեղերին» և պասսիվորեն հարմարվել այդ դժվարություններին։ Աջերը ժխտում են պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության գողման արտադրական ձևերը, ընդունելով միայն արդյունաբերության և գյուղատնտեսության շուկային, առևտրական կապը։ Աջերը չեն հասկանում, վոր ծավալված սոցիալիստական արշավը քաղաքում և գյուղում, մասնավոր կապիտալի վտարումը արդյունաբերությունից և առևտրից, կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիան համատարած կոլեկ-

տիվացման շրջաններում և «ուժեղացրած հարձակումը կուլակի դեմ, նրա շահագործական տենդենցների և նրա աճման հետագա սահմանափակումը» ամբողջ յերկրում, այդ բոլորը առաջ ե բերում կուլակի, նեպմանի և սպե-կուլյանտի կատաղի դիմադրությունը, սուր բնույթ ե տալիս դասակարգային պայքարին յերկրում»:

Աջերը, չնկատելով դասակարգային պայքարի սրա-ցումը, քարոզում են կուլակի խաղաղ «ներաճումը» սոցիալիզմի մեջ, խաղաղ կենակցություն յերկրի կապի-տալիստական տարրերի հետ։ Աջերը կարիք չեն տես-նում միացնելու և կազմակերպելու բարակներին ու չքավորներին կուլակի դեմ։ Նրանք կողմնակից են նրա հետ խաղաղ ապրելուն և աշխատակցելուն։

Աջերը յենթարկվել են մեր դասակարգային թշնա-միների աղղեցությանը, չեն դիմացել նրա ճնշումին, դարձել են յերկրի մանր-բուրժուական տարերքի և կուլակային-կապիտալիստական խմբակների արտա-հայտիչը։ Աջ ուկլոնիստները շարունակում են հավա-տարիմ մնալ իրենց ոպերտունիստական դրոշակին և նրա վրա կուլակի ձեռքով գրված լողունգներին։

«Հունիսի 9-ին Համ.ԿԿ(թ) կումըլթինսկիյ ռայկոմում ստացվեց կուսակցության անդամ կոլոտովի հայտա-րարությունը, վորի մեջ նա առաջադրում է հետեւյալ քաղաքական պահանջները»

«Երկրի ինդուստրացման տեմպերը պետք ե մեղ-մացվեն, «հնգամյակը չորս տարում» լողունգը—դեն շպրտի, թեթև արդյունաբերությունը պետք ե զար-գանա ավելի արագ, քան ծանրը։ Այն կոլխոզները, վորոնք չունեն համապատասխան տեխնիկական բազա, պետք ե ցրվեն. իսկ կուլակության, վորպես դասա-

արգիլիկվիդացիայի՝ քաղաքականությունը պետք ե վերացվի» («Պրավդա», 21 հուլիսի):

«Սև Յարի (հաշտարիսանի շրջան) կուսակցական բջիջի բյուրոյի նիստում, այլ և ռայկոմի բյուրոյում այդ բջիջի քարտուղար Ռոգովը հայտարարեց՝

«Յես համաձայն չեմ կուսակցության գծի հետ հնգամյա պլանի մի քանի վոչ խոշոր հարցերի նկատ-մամը։ Հարկավոր չե արդյունաբերությունը զարգա-ման արագ պեմպերով։ Պետք ե նախ թեթև ինդուս-տրիան զարգացնել և ապա ծանրը։ Հարկավոր չե նաև ապրանքները արտահանել յերկրից»։

«Նույն ռայկոմի լայն պլենումին կրասնոյարի ձըկ-նորսների կոլխոզի նախագահ Գոնչարովը, Վոլգա-Ախ-տուբինսկիյ սովորով զեկուցումը քննելիս, ասաց՝

«Սովորովները և կոլխոզները, անկասկած, լավ բան են, բայց վախենում եմ, վոր նրանցից վոշինչ չի բուրս գա, Սովորովների վրա շատ փող ե վատնվում։ Յեթե այդ փողերը ոռութիներով սփռելինք — ուղիղ Սև Յարից մինչև Սարատով ամբողջ ճանապարհը կծած-կելինք։ Ավելի ոգտակար կիներ տալ այդ փողերը զյու-ղացիներին — նրանք գործը ավելի լավ կտանելին» («Պրավդա», 21 հուլիսի):

Մեր առաջ, ինչպես տեսնում եք, աջ թեքման ծավալված, ցայտուն ու հակիրճ ձևակերպված ծրագիրն ե, վոր ամբողջովին համապատասխան ե կուլակու-թյան ցանկություններին և պահանջներին։

Մեր առաջ են աջ ոպորտունիստների յերեք յելույթ-ները, վորոնք կուլակների գործակալներն են մեր կուսակցության մեջ։ Մեր առաջ գրված ե մի նոր իւլյուստրացիա XVII համագումարի բանաձեկի այն մասին

(Կենտկոմի հաշվետվության առթիվ), վորի մեջ
ասված ե՝

«Վերջերս տեղի ունեցան սնանկածած աջ ոպորտու-
նիստների մի շարք նոր յելութները, վորոնցով
աջերը փորձում ենին վարկաբեկել կուսակցության
աշխատանքը կոլեկտիվացման և նրա հետ կապված՝ կու-
լակության լիկվիդացիայի գործում, «ինքնահոս» թեո-
րիան ենին քարոզում կոլխոզային շարժման մեջ և
լիկվիդատորական վերաբերմունք դեպի կուսակցու-
թյան հիմնական լոգունգները սոցիալիստական շինա-
րարության տվյալ ետապին, դեպի համատարած կո-
լեկտիվացման և կուլակության, իրեն դասակարգի,
լիկվիդացիայի լողունգները»:

Ի՞նչ ե նշանակում աջ ոպորտունիզմի ծրագիրը:
Ա՞ւր ե տանում նա և ում շահերն ե արտացոլում:

Աջ ոպորտունիստների ծրագիրը արտացոլում ե
յերկրի կուլակային-կապիտալիստական խմբակների
շահերը և յերազները: Նա տանում ե դեպի դինա-
թափությունը այդ խմբակների առաջ: Այդ ծրագրի
իրագործումը կնշանակեր «սոցիալիզմի կառուցման
վիճումը և կապիտալիզմի վերականգնումը մեր յերկ-
րում»: Աջ թեքումը «արտացոլում ե կուլակային
վտանգը, իսկ կուլակային վտանգը ներկա մոմենտին,
ծավալված արշավի և կապիտալիզմի արմատախիլման
մոմենտին հիմնական վտանգն ե յերկրում» (Ստալին):
«Ամբողջ ճակատում կապիտալիստական տարրերի վրա
ծավալված հարձակման շրջանում աջ թեքումը եր
և մնում ե գլխավոր վտանգը կուսակցության մեջ»
(XVI համագումարի բանաձեռ կենտկոմի հաշվետվու-
թյան առթիվ):

Կոլխոզային շինարարության ներկա շրջանում աջ
ոպորտունիզմը արտահայտվում է շատ բազմապիսի ձե-
վերով: Համատարած կոլեկտիվացման և կուլակու-
թյան, իրեն դասակարգի, լիկվիդացիայի լոգունգին
համաձայնելը, «ինքնահոս» քարոզելը, կոլխոզային
շարժումը կամեցնելու փորձերը, կոլեկտիվացումը
մինչև գյուղատնտեսության լիակատար մեքենայա-
ցումը յետաձգելու և մեքենայական բազա չունեցող
կոլխոզները ցըելու առաջարկները, կոլխոզային շինա-
րարության արդյունքները ամրացնել չկամենալը,
կուլակության ակտիվ պաշտպանությունը և հաշ-
տվողական վերաբերմունքը դեպի նա (համատարած
կոլեկտիվացման շրջաններում դանդաղկոտություն
և անվճականություն կուլակային տնտեսություն-
ների լիկվիդացիայի գործում, կուլակի պաշտպանու-
թյունը, կուլակին կոլխոզ ընդունելը, կոլխոզները
կուլակներից մաքրելու դժկամությունը), կուլակու-
թյան դեմ պայքարի թուլացումը՝ միջակին չդիպչելու
պատրվակի տակ, հակամիջակային խոտորումների
ուղղման բացարությունը—իրեն կուլակի դեմ պայ-
քարելուց հրաժարվել, պասսիվ վերաբերմունքը դեպի
կոլխոզներից դուրս գալը, առարկությունը կոլխոզ-
ներին արտոնություններ և վարկեր տրամադրելու
դեմ, բատրակության և չքավորության միության և
կազմակերպման աշխատանքի սարստածը և այլն:

Արդյոք, սրանից պարզ չե՞ն, վոր աջ թեքումը և
հաշտվողական վերաբերմունքը դեպի նա ներկայիս
գլխավոր վտանգն ե կուսակցության և յերկրի մեջ:
Աջերի թեորիաները, ծրագրը և լողունգները կուլա-
կային-կապիտալիստական տարրերը ոգտագործում են

պրոլետարական պետության դեմ կովելիս: Աջ թեքում մային պրակտիկան անմիջականորեն ամրացնում է կուլակին, ավելացնում է նրա դիմադրության ուժը: Հաշտվողական վերաբերմունքը դեպի կուլակը տարրալուծում է կոլխոզային մասսաների ուժերը, թուլացնում է նրանց կամքը և վճռականությունը կուլակության դեմ պայքարելու: Առանց աջ ոպորտունիստներին ջախջախելու, առանց վճռական պայքար մղելու դեպի նա հաշտվողաբար տրամադրված բոլոր տարրերի դեմ—անհնարին: Ե ամրացնել և շարունակել կոլխոզային շինարարության հետագա ծառակալումը:

«Բայց «կուսակցությունը ջախջախեց աջ ոպորտունիստներին և մեծագույն հաջողություններ ունեցավ կոլխոզային շինարարության մեջ: Կուսակցությունը առաջիկայում ևս ջախջախիչ հարվածներ և հասցնելու կոլեկտիվացման գործը վիճեցնելու բոլոր փորձերին աջ ոպորտունիստների կողմից և այդ նպատակով կոլխոզային շինարարության դժվարությունները ոգտագործելու փորձերին» (XVII համագումարի բանաձեռ կե հաշվետվության առթիվ):

Աջ ոպորտունիստները առատ բերք քաղեցին այս տարվա գարնանը իրենց «ձախ» յեղբայրակիցների ցանած և բուսցրած պտուղներից: Հակամիջակային խոտորումները կոլխոզային շինարարության մեջ ստեղծեցին աջ կապիտուլյանտների համար բարենպաստ հող: «Չախ» պրակտիկան և քյալազյողությունը ուժեղացնում է աջ ուկոնիստներին: Առանց «ձախ» խոտորողների դեմ կովելու չեր կարելի ջախջախել աջ ոպորտունիստներին: Պայքարը «ձախերի»

դեմ դառնում է միաժամանակ և պայքար աջ ոպորտունիստները դեմ: «Առանց «ձախ» խոտորումները հաղթահարելու մենք չենք կարող համեմ կոլխոզային շարժման մեջ այն հաջողություններին, վորունենք ներկայիս» (Ստալին): «Չախ» հակամիջակային խոտորումները այժմ, ավելի քան յերբեկցեանաց, ձեռնտու յեն կուլակին և աջ ոպորտունիստին: Կուսակցությունը պետք է շարունակե անողոք պայքար մղել նրանց դեմ:

Բերքահավաքը կոլխոզներում և բերքը կոլխոզների մեջ բաշխելու նախնական ծրագիրը ցուցադրում է կոլեկտիվ տնտեսության ահազին առավելությունները անհատականի հանդեպ, իբրև կանոն, կոլխոզներում ընդարձակվել և ցանքսադաշտը, բերքը ավելի բարձր ե, կոլխոզնիկների յեկամուտը ավելի յե, համեմատած նրա հետ, վոր ստանում եյին նրանք անհատական տնտեսություն վարելիս:

«Ռասավետ-Պոբեդիտել» կոլխոզի (Բոբրույսկի շրբան) անդամները առաջինը Բելու: ԽՍՀ-յան մեջ քննեցին և մոտավորապես նշանակեցին բերքի բաշխման կարգը: Կոլխոզի ընդհանուր յեկամուտն է 180.000 ռ., Այդ գումարից կոլխոզի վարչությունը նախ հատկացրեց 17.000 ռ. խոզի ֆոնդին, 10.000 ռ. անասունկացրեց 17.000 ռ. խոզի ֆոնդին, 10.000 ռ. տոկոսը ներին պահելու: Թմացած 153.000 ռ.-ուց 10 տոկոսը անցնում է անբաժանելի դրամագլուխը, 10 տոկոսը — պահեստի կապիտալը: Կուտ-կենցաղային ֆոնդը անցնում է 17 տոկոսը, 1 տոկոսը — ամենալավ, ուդարնիկ-կոլխոզնիկների մրցանակաբաշխության ֆոնդը, 5 տոկոսը բաժանվում է կոլխոզնիկների մեջ—նրանց մտցրած գույքին համապատասխան:

«Յուրաքանչյուր աշխատունակ կոլխոզնիկ տարվա ընթացքում աշխատել ե 302 մարդարու միջին աշխատավարձը որական 1 ռ. 35 կ., անաշխատունակների համար կոլխոզը տալիս ե 58 ռ. ամեն մեկին։ Կոլխոզնիկները ընտանիքներով ապահովվում են անհրաժեշտ մթերքներով։

«Իրենց կարիքները բավարարելուց հետո կոլխոզում մնում ե ապրանքային ավելցուկ 100 հազար ռուբլու, վորը կոլխոզը հանձնում է պետությանը։ Կոլխոզի բերքը $1\frac{1}{2}$ —2 անգամ ավելի բարձր է, քան անհատական-գյուղացու։ «Մասսվետ-Պոբեդիտել» կոլխոզի անդամ — Հքավոր Ստանիսլավովը, վոր ունի 10 հոգուց բաղկացած ընտանիք (3 անաշխատունակ), կստանա 2.360 ռ., վորը 10 անգամ գերակշռում է այն յեկամուտը, վոր նա ստանում եր անհատական տնտեսությունից։ Կոլխոզի տրակտորիստ — միջակ Սերեգովը, վոր ունի ընտանիքի յերկու անաշխատունակ անդամ, կստանա 900 ռ. և, բացի դրանից, մրցանակ՝ ցանքսի ժամանակ կատարած հարվածային աշխատանքի համար» («Իդվեստիյա», 27 հուլիսի)։

«Լավ կազմակերպված աշխատանքի, շատ լավ անցկացված բոլցիկական ցանքսի հետեանքով կոլխոզնիկների յեկամուտները խոշոր չափով աճեցին համեմատած այն յեկամտի հետ, վոր նրանք ունեցին առաջ, անհատական տնտեսություն վարելիս։

«Ահա այն թվերը, վոր վկայում են կոլխոզային աշխատանքի առավելությունները անհատականի հանդեպ։ Կոլխոզնիկ Ալեքսեյ Շախմանը (Նիժնի-Դմիտրովսկի) «Զքավորի բարեկամ գյուղատնտ. արտել») մինչև կոլխոզ մտնելը ուներ տարեկան միջին յեկամուտ —

400 ռուբլի։ Նրա հողը ընկած եր զանազան տեղերում և յերբեմն մեկ հողամասից մինչև մյուսը տարածությունը հասնում եր 18 կիլոմետրի։ Այս տարի կոլխոզ մտնելով, վոչ ուժեղ միջակ Ա. Շախմանը, վոր ունի 12 հոգուց բաղկացած ընտանիք (6 անաշխատունակ), յեկամուտ ե ունենալու 1.498 ռուբլի։

«Կոլխոզի անդամ Ոմելիկո Գրաբը, նախկին բատրակ, վոր աշխատում եր առաջ կուլակի մոտ, վաստակում եր տարեկան մինչև 80 ռուբլի, աշխատելով ամենոր, մասնավանդ ամառվա ամիսները, 15 — 18 ժամ։ Գրաբի կինը, աշխատելով նույն կուլակի տնտեսության մեջ, վաստակում եր տարեկան 40 ռուբլի։ Գրաբի ընտանիքի տարեկան ամբողջ յեկամուտն եր 120 ռուբլի։ Այժմ Գրաբը «Զերվոննը Պրոմին» կոլխոզում կնոջ հետ միասին վաստակում ե տարեկան 660 ռուբլի։

«Վերջապես, յեթե վերցնենք կոլխոզի ընդհանուր բյուջեն, — կտանանք դարձյալ բացառիկ հետևանքներ։ «Զքավորի բարեկամ» կոլխոզը միացնում է 217 տնտեսություն — նախկին Հքավորներ ու միջակներ։ Կոլխոզի ընդհանուր յեկամուտը այս տարի կազմում է 325 հազար ռուբլի։ Կոլխոզը ցանել է 2.500 հեկտար գանազան կուլտուրաներ։ Միջին հաշվով ամեն մի տնտեսությանը ընկնում ե յեկամուտ 1.498 ռուբլի։ Այդ կոլխոզի մեջ միացած անհատականները իրենք շեշտում են, վոր առաջ, անհատական տնտեսություն վարելիս, նրանց տարեկան յեկամուտը հասնում եր ամենաշատը 500 ռուբլու» («Իդվեստիյա», 31 հուլիսի)։

Կոլեկտիվ աշխատանքի այդ արդյունքները չի կարող չտեսնել Հքավոր ու միջակ անհատականը։ Այդ

թվերը և փաստերը լավագույն ազիտատորն են կոլխոզների համար։ Նրանք չքավոր և միջակ անհատականներին այն միտքն են ներշնչում, թե միայն կոլխոզները կարող են ապահովել գյուղատնտեսության արագ աճումը և աշխատավոր գյուղացիության կյանքի նյութական մակարդակի բարձրացումը։ Այդ թվերը և փաստերը, հայտնի գառնալով չքավոր ու միջակ անհատականների լայն մասսաներին, առաջացնում են նրանց նոր հոսանքը դեպի կոլխոզները։ Մեր թերթերը ամեն որ հաղորդում են հին կոլխոզների մեջ նոր տասնյակ, հարյուրավոր և հազարավոր չքավոր-միջակային տնտեսություններ մտնելու և նոր կոլխոզներ կազմակերպվելու մասին։

«Պովոլժյեյի գերմանական հանրապետությունում սկսվեց գարնանացանի մասսայական բերքահավաքը։ Կոլխոզներից գուրս յեկածները հավաքում են բերքը կոլխոզնիկների հետ միասին։ Կոլխոզների աշխատանքը առաջացնում է անհատական չքավոր-միջակային տընտեսությունների զորեղ հոսանք։ Բերքահավաքի հենց առաջին որերին կոլխոզների մեջ մտան։ Մարկսշտադտում — 140 տնտեսություն, կամենկայում — 120, Պալասսովկայում — 124, Ֆյոդորովկայում — 130։

«Հաջող, լավ կազմակերպված բերքահավաքը կոլխոզներում առաջացնում է վերադարձ դեպի կոլխոզները։ Սրմավիրի, կուբանի և Սալսկի շրջաններում կոլխոզների մեջ վերստին մտան 7.000 տնտեսություն» («Բեղնոտա», 24 հուլիսի)։

«Նոր անդամների հոսանքը դեպի կոլխոզները նկատում է ամբողջ կալաչովսկի ռայոնում (Սևանիող Շրջան), բերքահավաքի կամպանիայի սկզբից

տրված ե արդեն 400 հայտարարություն։ Անհատականները, մասավանդ չքավորները, միանում են կոլխոզին դաշտում, աշխատանքի ժամանակ և գլխավորապես այն գյուղերում, ուր կոլխոզը ոգնում է նրանց»։

«Սոլոդչինսկիյ կոլխոզում (Ֆուլովսկիյ ռայոն, Ստալինգրադի շրջան) մինչև բերքահավաքի սկիզբը միայն 68 տնտեսություն եր։ Բերքահավաքի հենց առաջին որերին տնտեսությունների թիվը հասավ 150-ի։ Ֆուլովսկիյ կոլխոզը մտան ավելի քան 100 տնտեսություններ, Ուուբեժինսկիյ կոլխոզը — 12, Բլագովդատինսկիյ — 18, Զախարովսկիյ — 14, Ամելինսկիյ — 16» («Պրավդա», 7 սպատոսի)։

Չքավոր-միջակային գյուղացիության նոր հոսանքը դեպի կոլխոզները լայնանում է և աճում։ Կոլխոզադին շարժումը մտնում է նոր վերելքի շրջանը, ընդուրկելով չքավոր-միջակային տնտեսությունների նոր հարյուրներ։ Այդ շարժումը կընդուրի միլիոնավոր նոր չքավոր ու միջակ գյուղացիներ։ այդ միլիոնավոր նոր կոլխոզնիկները ամուր կհաստատվեն կոլխոզներում միայն այն դեպքում, յեթե մեր կուսակցական կազմակերպությունները կոլեկտիվացման աշխատանքի պրակտիկայում անշեղ իրակործեն լենինյան սկզբունքները, յեթե նրանք վճռականորեն կովեն կուսակցության գլխավոր գծի համար։

Վճռականորեն և անընդհատ պայքարել կուսակցության լենինյան գծի համար կոլխոզային շարժման մեջ, աջ ու «ձախ» ոպորտունիստների և այն բոլորի դեմ, վոր հաշտվողաբար են տրամադրված դեպի աջերն ու «ձախերը»։ Միևնույն ժամանակ հիշել, վոր

գլխավոր վտանգը կուսակցության մեջ աջ թեքումն ե, վոր «ձախ» ոպորտունիստները իրենց հակամիջաշակային պրակտիկայով, վոստումներով և քյալլագյողությամբ հող են ստեղծում աջ ուղղոնիստների ուժեղացման համար։ Պայքար յերկու ֆրոնտի վրա — աջ կապիտուլյանտների դեմ, վոր կուլակային տրամադրությունների, ցանկությունների և պահանջների արտահայտիչներն են. «ձախ» խոսորողների դեմ, վոր աջերի յեղայրակիցն ու դաշնակիցն են — սա յերոլոր կուսակցական, խորհրդային և հասարակական կազմակերպությունների, գյուղի բոլոր աշխատավորների գլխավոր անելիքը։

Պայքարել կուսակցության գլխավոր գծի համար գյուղում — նշանակում ե պայքարել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար, յերկրի բոլոր չքավորմիջակային տնտեսությունների կոլեկտիվացման համար, կուլակության, իբրև դասասակարգի, լիկիդացիայի համար՝ համատարած կոլեկտիվացման բաղայի վրա։

Պայքարել կուսակցության գլխավոր գծի համար գյուղում — նշանակում ե, կազմակերպելով բատրակներին ու չքավորներին, ամրացնելով նրանց միությունը միջակի հետ, անողոք կոփի մղելով կուլակի դեմ, հենվելով չքավոր ու միջակ կոլխոզների վրա — ծավալել կոլխոզային շարժումը և ամրացնել կոլեկտիվացման հաջողությունները։

Դա նշանակում ե — վճռականորեն ուղեկ և թույլ չտալ «ձախ» հակամիջակային խոտորումներ ու սխալներ, մերկացնել և անխնա հարվածել աջ թեորիաները և պրակտիկան կոլխոզային շինարարության

մեջ, առաջ շարժվել առանց «գլխապտույտի» (հաջողություններից) և առանց ոպորտունիստական վհատության՝ դժվարությունների դեպքում։

Ամրապնդել կոլխոզային շարժման հաջողությունները նշանակում ե — ուշադրություն դարձնել ներկոլխոզային շինարարությանը, մոքիլիզացիայի յենթարկել կոլխոզների ուշադրությունը և ուժը՝ աշխատանքի, արտադրության և բաշխման կանոնավոր կազմակնրպության գործի վրա, դրդելով բարձրացնել կոլեկտիվ աշխատանքի արտադրողականությունը և կոլխոզի յեկամուտները, կովելով հավասարար և գովողական տրամադրությունների հետ։

Ամրացնել կոլխոզները — նշանակում ե սերտորեն միացնել բատրակ ու չքավոր կոլխոզներին, բարձրացնելով նրանց աղղեցությունը և կշռը կոլխոզում, ապահովելով նրանց դեկավարող դերը կոլխոզի վարչության մեջ։

Դա նշանակում ե ամրացնել բատրակ ու չքավոր կոլխոզների միությունը միջակ կոլխոզների հետ, զակավարող աշխատանքի քաշելով ակտիվ միջակներին, ոգտագործելով նրանց տնտեսական նախաձեռնությունը, գիտությունը, փորձը, վճռականորեն պայքարելով միջակին կոլխոզի վարչությանը մասնակցելուց հեռացնելու փորձերի դեմ։

Դա նշանակում ե պատրաստել կոլխոզային կադրեր, բարձրացնել կոլխոզային մասսաների կուլտուրական մակարդակը, հաղթահարել մանր-բուրժուական տատանումները կոլխոզի ներսում, աննկուն պայքարել կոլխոզների այս կամ այն խմբակների հիվանդության պատրաստությունների դեմ։

Դա նշանակում ե ջախջախիչ հարված հասցնել կուլակությանը և նրա գործակալներին, վոր փորձում են քայքայել կոլխոզները, տարածայնություն մտցնել կոլխոզնիկների շաբթերը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ե հիշել, վոր կոլխոզային շինարարության հաջողությունների ամրացումը, հետագա առաջապահումը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում, հաջող պայքարը կուլակության դեմ անհնարին են առանց բանվոր դասակարգի ղեկավարող դերի և կազմակերպչական ոգնության ուժեղացման կոլխոզների և չքավոր-միջակային գյուղացիության վերաբերմամբ, առանց խոշոր ինդուստրիայի առաջնորդող դերի ուժեղացմանը գյուղատնտեսության վերաբերմամբ, առանց սովորողների և կոլխոզների մշտական ներգործությանը չքավոր-միջակային անհատական տնտեսությունների վրա և նրանց ոգնելուն, առանց ակտիվ ագիտացիայի կոլխոզների ոգտին, նրանց ձեռնտվության և առավելությունների ցուցադրման, առանց նորմալ փոխարարերություններ հաստատելու կոլխոզնիկների և չքավոր-միջակ անհատականների միջև։

«Կուսակցությունը—ասված ե ԽVI համագումարի՝ «Կոլխոզային շարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» բանաձեկի մեջ՝ կոլեկտիվացման գործում հասավ վճռական բեկման շնորհիվ նրան, վոր ջախջախվեցին թե՛ հականեղափական տրոցկիզմը, վորի քաղաքականությունը անխուսափելիորեն տանում եր դեպի գյուղացիության հիմնական մասսաների հետ յեղած դաշնաքի քայլքայումը, և թե՛ աջ ուկոնիստներին—սովորողներ կառուցելուց և կոլխոզները զար-

գացնելուց հրաժարվելու, կուլակի առաջ զինաթափակելու իրենց քաղաքականությամբ»։

«Կուլակությունը վճռական բեկումի հասավ կոլեկտիվացման գործում, անշեղ կիրառելով յերկրի ինդուստրացման քաղաքականությունը, դրանով պայմաններ ստեղծելով գյուղացիության հետ զողման արտադրական ձևերի զարգացման համար, և ամրացնելով բանվոր դասակարգի և գյուղական չքավորության դաշինքը միջակի հետ»։

«Միայն այդպիսով կուսակցությունը կարող եր ստեղծել կոլխոզային շինարարության համար անհրաժեշտ պայմանները։ Միայն այդպիսի ուղիներով կուսակցությունը կվարողանա վոչ միայն ամրացնել նվաճած հաջողությունները, այլև իր վախճանին հասցնել կոլեկտիվացման գործը, դրանով հենց դնելով սոցիալիստական հասարակության հիմքը»։

Համ. ԿԿ(բ) XVI համագումարը հանձնարարեց կուսակցության կենտկոմին «ապահովել հետազայում ևս սոցիալիստական շինարարության մարտական բոյլշեկտիվական տեմպերը, հիրավի հաջողեցնել հնգամյակի իրագործումը չորս տարում և անշեղորեն անցկացնել կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիան համատարած կոլեկտիվացման հիման վրա Խորհրդային ամբողջ Միության մեջ»։

«Համագումարը անխախտ հավատացած ե նրանում, վոր համախմբելով լենինիզմի դրոշի տակ միլիոնավոր բանվորներին և կոլխոզնիկներին, ջախջախելով դասակարգային թշնամիների դիմադրությունը, Համ. ԿԿ(բ) կտանի մասսաները ծավալված սոցիալիստական արշավի և կ'ապահովե սոցիալիզմի լիակատար հաղթանակը Խորհրդային Սոց. Հանրապետությունների Միության մեջ»։

ՆՈՐ ԼՈՒՅԱ ՏԵՍԱՆ

Տ Ա Ն Դ Ի Տ

ԾԱՎԱԼՎԱԾ ՖՐՈՆՏՈՎ

(ԽՆԳ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ)

Գինը 25 կող.

Ց Ա Ն Կ

	Եջ
1. Կոլխոզային շարժման ներկա ետապը	3
2. Կուլակուրյան, իբրև դասակարգի, լիկվիդացիան .	17
3. Կուլակուրյան գործելակերպը	36
4. Կոլխոզային շարժման հիմքերի ամրացումը յեվ պայ- ֆարը սխալների դեմ	47
5. Կողեկտիվացման տեմպերը յեվ գյուղատնտեռյան վե- րակառուցման խնդիրները	66
6. Մասսայական կոլխոզային շարժման պատրասու- րյունը վոչ-հացահատիկային շրջաններում	72
7. Կոլխոզների փոխհարաբերությունները անհատական- ների հետ	89
8. Կոլխոզների խորհրդային իշխանուրյան նեցուին և .	99
9. Պայմար յերկու ժրոնի վրա	103

Ն. ԵԼԻԶ.Ա.ՐՈՎ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ԿՈԿԻՈԶԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՎԵՐԵԼՔԻ ՄԱՍԻՆ

Գինը 30 կող.

Խ. Ա. Վ. Ի Ն

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գինը 25 կող.

ԲՈՑԱՐՍԿԻՑ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Գինը 25 կող.

Ս Ո Բ Ո Լ Ե Վ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՌԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Գինը 10 կող.

ԳԱՀԱՆՁԵՑԵՔ

ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶՐԻ.

ԳԻՐԵՎ՝ Մոսկվա, Никольская, 10.

ЦЕНТРИЗДАТ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0205391

30.796

30 ЧПТ.
о. п.

1911/41416

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



Н. ЕЛИЗАРОВ
Колхозное движение и
подъём сел.-хозяйства
(Что решил XVI съезд ВКП(б)
о сел.-хоз.)
Перевод с русского

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10.